ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻ ՀԱՄԱՐ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

ՓՈԼ ԴԵՅՎԻԴ ՎՈՇԵՐ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

ՓՈԼ ԴԵՅՎԻԴ ՎՈՇԵՐ

«Դր Մարտին Լլոյդ-Ջոնսը մի անգամ ասել է. «Այն մարդը, որի ուսմունքը երերուն է, երերուն կլինի իր ամբողջ կյանքի ընթացքում»: Այն հավատացյալը, որը չունի վարդապետական ամուր հիմք, կտատանվի վարդապետության ամեն քամուց և խիստ սահմանափակ օգուտ կտա Աստծո արքայությանը: Ուստի մեծ է այս աշխատության
կարևորությունը: Փոլ Վոշերը հեղինակել է պարզ ուսմունքային համառոտագիր առանց պարզունակության. այս աշխատությունը խորապես արմատացած է Սուրբ գրքում և ներկայացված է հեշտ հիշելի եղանակով: Սա գիրք է, որը ես կցանկանայի տալ մեր եկեղեցի ոտք դրած բոլոր նորահավատներին»:

— **Զուգել Միքելեն, Տեր Հիսուս Քրիստոսի աստվածաշնչյան եկեղեցու** հովիվ, **«Աստծուց և Աստծո առջև»** գրքի հեղինակ

«Սաղմոսերգուն հարց է ուղղում. «Երիտասարդն ինչո՞վ իստակ կանի իր ճանապարհը. Քո Խոսքի պես զգուշանալով»: Հոգևոր առողջության և աճի համար կենսական պահանջ է Սուրբ գրքի ուսումնասիրությունը:
Փոլ Վոշերը ստեղծել է մի պարզ և հասկանալի ուսումնական նյութ, որին հետևելու դեպքում երիտասարդ հավատացյալը կկարողանա հաստատվել իր ճանապարհի մեջ: Հատկապես գնահատում եմ Փոլի շեշտադրումը ուսմունքի կարևորության վրա՝ քրիստոնեական կյանքում աճ ունենալու համար: Թող Աստված նման մեծ օգուտի ծառայեցնի այս աշխատությունը»:

— **Սամուել Ուալդրոն, «Ուխտ» մկրտական աստվածաբանական ճեմարանի** նախագահ, **«Շարունակելի՞»** գրքի հեղինակ

«Սեկուլյարիստները և հեթանոսները միշտ էլ հասկացել են հրահանգավորման կարևորությունը ուսուցման տարրական փուլերում, սակայն թվում է, թե մեր սերնդի քրիստոնյաները, որոնք հավատում են Աստվածաշնչին, շփոթում են՝ կապելով դա քարոզչության հետ:
Եվ սակայն խիստ կարևոր է տիրապետել տեղեկատվությանը մինչ այն քննադատական վերլուծության ենթարկելը, ինչպես կատեխիզիսի (հարցուպատասխան)՝ ժամանակի ընթացքում փորձված արդյունավետությունը եկեղեցու պատմության մեջ: Սա արվում է ցանկացած գիտաճյուղի սկզբնական մակարդակներում՝ լինի մաթեմատիկա, լեզու, գիտություն, թե պատմություն: Իսկ ինչո՞ւ չպետք է արվի Աստվածաշնչի պարագայում: Եկեղեցին կպարտվի մեր սերնդի շրջանում տարածված գաղափարների մրցակցության պայքարում, եթե այդ ուղղությամբ գործադրված լուրջ ջանքերը, ինչպիսին է այս պատեհաժամ աշխատանքային գիրքը, չողջունվեն և կարգապահությամբ չկիրառվեն»:

— **Հենսուորթ Վ. Կ. Ջոնաս,** հովիվ, **Արևելյան Կարիբյան մկրտական միսիայի** գործադիր տնօրեն

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ **ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ**

Թարգմանված է անգլերենից, 2021 թ.
Հեղինակային իրավունքները պատկանում են «2020 Paul David Washer»-ին

Հրատարակված է ԱՄՆ-ում, 2020 թ.
Առաջին հրատարակություն՝

«HeartCry Missionary Society»
Փ/Ա 3506
Ռեդֆորդ, Վիրջինիա 24143

www.heartcrymissionary.com

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքի ոչ մի մասը չի կարող օգտագործվել կամ կրկնօրինակվել որևէ եղանակով՝ առանց գրավոր թույլտվության:

Աստվածաշնչյան մեջբերումները «Արարատ» թարգմանությունից են, եթե չկան այլ նշումներ:

ՈՒՍՈՒՄՆԱ ՍԻՐԵԼ **ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ**

Բովանդակություն

Ներածություն 7
Ուսումնասիրության կամ ընտրական ժամանակացույց 9

Մաս մեկ. Քրիստոնեական ուսմունքի ներածություն
1. Քրիստոնեական ուսմունք 13
2. Քրիստոնեական ուսմունքի աղբյուրը 17
3. Քրիստոնեական ուսմունքի կարևորությունը (Մաս 1) 21
4. Քրիստոնեական ուսմունքի կարևորությունը (Մաս 2) 27
5. Քրիստոնեական ուսմունքի կարևորությունը (Մաս 3) 33

Մաս երկու. Սուրբ գիրքը
6. Աստվածային հայտնության ընդհանուր նկարագիրը 43
7. Ընդհանուր հայտնություն 46
8. Հատուկ հայտնություն 53
9. Աստվածաշնչի արժանահավատությունը 58
10. Աստվածաշնչի համառոտ պատմությունը 64
11. Աստվածաշնչի նպատակը (Մաս 1) 72
12. Աստվածաշնչի նպատակը (Մաս 2) 77
13. Աստվածաշնչի նպատակը (Մաս 3) 85
14. Աստծո Խոսքի զորությունը (Մաս 1) 91
15. Աստծո Խոսքի զորությունը (Մաս 2) 95
16. Աստծո Խոսքի զորությունը (Մաս 3) 101
17. Պատշաճ վերաբերմունք Աստծո Խոսքի նկատմամբ (Մաս 1) 109
18. Պատշաճ վերաբերմունք Աստծո Խոսքի նկատմամբ (Մաս 2) 116
19. Սուրբ Հոգին և Սուրբ գիրքը 120
20. Աղոթքը և Սուրբ գիրքը 124
21. Խոսքի օգուտները (Մաս 1) 129
22. Խոսքի օգուտները (Մաս 2) 135
23. Հնազանդություն Խոսքին 141
24. Սուրբ գրքի մեկնաբանությունը 147

Հավելված. Գործնական օգնություն Սուրբ գրքի ընթերցանության և ուսումնասիրության համար 152

ՈՒՍՈՒՄՆԱ ՍԻՐԵԼ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

Ներածություն

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԸ

Այս ուսումնասիրության մեծագույն նպատակը ուսանողի հանդիպումն է Աստծո հետ Նրա Խոսքի միջոցով: Հիմնված լինելով այն համոզմունքի վրա, որ Սուրբ գիրքը ներշնչված է Աստծուց և Նրա անսխալական Խոսքն է՝ ուսումնասիրության այս ձեռնարկն այնպես է կազմված, որ ուսանողի համար բառացիորեն անհնար է ընթերցել և առաջ անցնել առանց Աստվածաշունչը աչքի առջև բաց պահելու: Նպատակն է ընթերցողին օգնել հնազանդվելու Պողոս առաքյալի՝ Բ Տիմոթեոս 2.15-ում գրված հորդորին.

> *«Ջա՛նք արա, որ քո անձն ընտիր կանգնեցնես Աստծո առաջ իբր մի մշակ առանց ամոթի, որ ճշմարտության խոսքն ուղիղ մատակարարես»:*

Գլուխներից յուրաքանչյուրը նվիրված է քրիստոնեական ուսմունքի, աստվածային հայտնության կամ Աստծո Խոսքի՝ Աստվածաշնչի ուսումնասիրության որևէ հատուկ մոտեցման: Ամեն գլխի վերջում ուսանողը պետք է պատասխանի հարցերին և հետևի այն ցուցումներին, որոնք տրված են ըստ Սուրբ գրքի: Ուսանողին խրախուսվում է խորհել յուրաքանչյուր տեքստի շուրջ և գրի առնել իր մտքերը: Ուսանողի ներդրվածության աստիճանից է կախված այն օգուտը, որ նա կունենա այս ուսումնասիրությունից: Եթե ուսանողը հարցերին պատասխանի առանց մտածելու՝ պարզապես կրկնօրինակելով տեքստը՝ չփորձելով հասկանալ դրա իմաստը, ապա այս գիրքը քիչ օգուտ կտա:

Ուսումնասիրել Սուրբ գիրքը աստվածաշնչյան ուսումնասիրություն է, այդ իսկ պատճառով չի պարունակում գունավոր պատկերազարդումներ, զվարճալի պատմություններ կամ աստվածաբանական քննախոսություններ: Հեղինակի ցանկությունն է ընթերցողին տալ այնպիսի աշխատություն, որը պարզապես մատնանշում է դեպի Խոսքը տանող ճանապարհը և թույլ է տալիս, որ հենց Աստծո Խոսքը խոսի:

Աշխատանքային այս գիրքը նախատեսված է թե՛ անհատական ուսումնասիրության, թե՛ խմբակային, թե՛ կիրակնօրյա դպրոցի և թե՛ այլ միջավայրերի համար: Մեծապես խրախուսվում է, որ ուսանողն ինքը ավարտին հասցնի գլուխներից յուրաքանչյուրը մինչ խմբի կամ առաջնորդի հետ դրանք քննարկելը և հարցերի համար հանդիպելը:

ՀՈՐԴՈՐ ՈՒՍԱՆՈՂԻՆ

Ուսանողին խրախուսվում է ուսումնասիրել աստվածաշնչյան ուսմունքը և բացահայտել դրա բարձր տեղը քրիստոնյայի կյանքում: Ճշմարիտ քրիստոնյան չի կարող հանդուրժել զգացմունքների և մտքի միջև կամ Աստծո հանդեպ նվիրման և Աստծո մասին ուսմունքի միջև խզումը: Ըստ Սուրբ գրքի՝ ո՛չ մեր զգացմունքները և ո՛չ էլ փորձառությունները պատշաճ հիմք չեն քրիստոնեական կյանքի համար: Միայն ուսմունքի միջոցով փոխանցված և մտքով ընկալված աստվածաշնչյան ճշմարտությունները կարող են լինել այն ամուր հիմքը, որի վրա մենք պետք է կառուցենք մեր համոզմունքները և վարքը, ինչպես նաև ստուգենք մեր զգացմունքների և փորձառությունների հիմնավորվածությունը: Միտքը սրտի թշնամին չէ, և ուսմունքը խոչընդոտ չէ նվիրման համար: Մեկը մյուսին չի փոխարինում, և դրանք պետք է անբաժան լինեն: Սուրբ գիրքը պատվիրում է մեզ սիրել մեր Տեր Աստծուն մեր ամբողջ սրտով, ամբողջ անձով և ամբողջ մտքով (Մատթեոս 22.37) և երկրպագել Աստծուն հոգով և ճշմարտությամբ (Հովհաննես 4.24):

Ուսմունքի ուսումնասիրությունը թե՛ մտքի և թե՛ նվիրման աշխատանք է: Աստծուն ջերմեռանդորեն փնտրելն է, որ ուսանողին շարունակաբար տանում է դեպի անձնային վերափոխման, հնազանդության և սրտանց երկրպագության: Ուստի ուսանողը պետք է զգուշանա Աստծո Անձը փնտրելու փոխարեն միայն անանձնական գիտելիք փնտրելուց: Ո՛չ անմիտ նվիրումը և ո՛չ էլ մտավոր փնտրտուքը շահավետ չեն, քանի որ թե՛ այս և թե՛ այն դեպքերում Աստված կորսվում է:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՆՈՐ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ (NASB)

Տվյալ ուսումնասիրության համար անհրաժեշտ է օգտվել Աստվածաշնչի նոր ամերիկյան ստանդարտ թարգմանությունից (1995 թ. հրատարակություն): Սուրբ գրքի տվյալ թարգմանությունն ընտրվել է հետևյալ պատճառներով. ա) այս տարբերակի թարգմանիչների անսասան համոզմունքն այն է, որ Աստվածաշունչն Աստծո անսխալական Խոսքն է, բ) այն հավատարիմ է բնագիր տեքստի լեզվին:

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔ

Սուրբ գիրքը ամենամեծ գանձն է, որ մարդը կարող է ունենալ: Այն Աստծո, Նրա կամքի և Նրա գործերի, հատկապես Հիսուս Քրիստոսի միջոցով իրականացված փրկագնման գործի վերաբերյալ Աստծուց ներշնչված, վստահելի և անսխալական հայտնության միակ աղբյուրն է: Քրիստոնյան չի կարող չափից ավելի մեծ կարծիք ունենալ Աստվածաշնչի մասին կամ գերագնահատել այն: Ահա այդ և բազմաթիվ այլ պատճառներով քրիստոնյան Խոսքի ուսումնասիրությունը պետք է համարի իր առաջնային հանձնարարականը մինչև կյանքի վերջը: Տվյալ աշխատանքային գիրքը կազմված և գրված է՝ այս ամենը հաշվի առնելով: Այս նյութի վրա աշխատելիս ուսանողը կբացահայտի, թե ինչու և ինչպես է անհրաժեշտ ուսումնասիրել Աստվածաշունչն ու հնազանդվել Խոսքին:

Շնորհակալություն եմ հայտնում կնոջս՝ Չարոյին, մշտական աջակցության համար, և իմ չորս երեխաներին՝ Իանին, Էվանին, Ռոուանին և Բրոնուինին, որոնք շարունակում են ինձ մեծ ուրախություն պատճառել: Ցանկանում եմ նաև շնորհակալություն հայտնել «HeartCry»-ի անձնակազմի անդամ Ֆորեսթ Հայթին մի քանի ձեռագրերի ջանասեր և մանրակրկիտ խմբագրման համար: Նրա մասնակցությունն այս աշխատության կազմման և այն ընթեռնելի դարձնելու գործին մեծապես կարևոր է և բարձր գնահատանքի արժանի: Երախտագիտությունս եմ հայտնում նաև «HeartCry»-ի ամբողջ անձնակազմին, որ մեծապես քաջալերել է ինձ այս գրքի հրատարակման ամբողջ գործընթացում:

ՀԵՏԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խոսքից օգուտ քաղելը, Արթուր Ու. Փինք
Խոսքը չի կարող կոտրվել, Ջոն ՄքԱրթուր
Եզրահանգումներ համաշխարհային եկեղեցու անսխալականության մասին, բազմաթիվ հեղինակներ
Կարո՞ղ եմ արդյոք վստահել Աստվածաշնչին, Ռ. Կ. Սփրաուլ
40 հարց Աստվածաշնչի մեկնաբանության մասին, Ռոբերտ Լ. Փլամեր
Միայն Խոսքը, Ջեյմս Ռ. Ուայթ
Աստվածաշունչը. Աստծո անսխալական Խոսքը, Դերեկ Ու. Հ. Թոմաս
Խոսքի կանոնը, Սեմյուել Ուալդրոն
Խոսքի կանոնը, Ֆ.Ֆ. Բրյուս
Կանոնի հարցը, Մայքլ Ջ. Կրուգեր
Աստվածաշնչի հեղինակությունը և ներշնչանքը, Բենջամին Բ. Ուորֆիլդ (առաջադեմ ուսանողների համար)
Աստծո Խոսքի ուսմունքը, Ջոն Մ. Ֆրեյմ (առաջադեմ ուսանողների համար)

Ուսումնասիրության կամ ընտրական ժամանակացույց

Շաբաթ առաջին. Քրիստոնեական ուսմունք, մաս 1

Օր 1. Գլուխ 1
Օր 2. Գլուխ 2
Օր 3. Գլուխ 3, Բաժին 1
Օր 4. Գլուխ 3, Բաժին 2
Օր 5. Ընթերցե՛ք Սաղմոս 119.1-88

Շաբաթ երկրորդ. Քրիստոնեական ուսմունք, մաս 2

Օր 1. Գլուխ 4, Բաժին 1
Օր 2. Գլուխ 4, Բաժին 2
Օր 3. Գլուխ 5, Բաժին 1
Օր 4. Գլուխ 5, Բաժին 2
Օր 5. Ընթերցե՛ք Սաղմոս 119.89-176

Շաբաթ երրորդ. Աստվածային հայտնություն և Աստվածաշնչի արժանահավատությունը

Օր 1. Գլուխ 6
Օր 2. Գլուխ 7, Բաժին 1, Ենթաբաժիններ 1, 2
Օր 3. Գլուխ 7, Բաժին 1, Ենթաբաժիններ 3, 4
Գլուխ 7, Բաժին 2
Օր 4. Գլուխ 8
Օր 5. Գլուխ 9

Շաբաթ չորրորդ. Աստվածաշնչի պատմությունը և նպատակը

Օր 1. Գլուխ 10
Օր 2. Գլուխ 11
Օր 3. Գլուխ 12, Բաժիններ 1, 2
Օր 4. Գլուխ 12, Բաժիններ 3, 4
Գլուխ 13, Բաժին 1
Օր 5. Գլուխ 13, Բաժին 2

Շաբաթ հինգերորդ. Աստծո Խոսքի զորությունը

Օր 1. Գլուխ 14
Օր 2. Գլուխ 15, Բաժին 1
Օր 3. Գլուխ 15, Բաժին 2
Օր 4. Գլուխ 16, Բաժին 1
Օր 5. Գլուխ 16, Բաժին 2

Շաբաթ վեցերորդ. Հավատացյալի արձագանքը Սուրբ գրքին, մաս 1

Օր 1. Գլուխ 17, Բաժին 1
Օր 2. Գլուխ 17, Բաժին 2
Օր 3. Գլուխ 18
Օր 4. Գլուխ 19
Օր 5. Գլուխ 20

Շաբաթ յոթերորդ. Հավատացյալի արձագանքը Սուրբ գրքին, մաս 2

Օր 1.	Գլուխ 21
Օր 2.	Գլուխ 22, Բաժին 1
Օր 3.	Գլուխ 22, Բաժին 2
	Գլուխ 23, հիմնական կետեր 1-4
Օր 4.	Գլուխ 23, հիմնական կետեր 5-8
Օր 5.	Գլուխ 24
	Հավելված

ՄԱՍ ՄԵԿ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱ ՍԻՐԵԼ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

Գլուխ 1. Քրիստոնեական ուսմունք

Այս գլխում կսահմանենք «քրիստոնեական ուսմունք» եզրույթը և կքննարկենք դրա մեծ կարևորությունը յուրաքանչյուր հավատացյալի կյանքում:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Շատ քրիստոնյաների վախեցնում է «ուսմունք» եզրույթը: Կարծում են, թե այդ թեման չափազանց վեր կամ բարդ է սովորական քրիստոնյայի համար, և այն պետք է թողնել աստվածաբաններին կամ գիտնականներին: Այս ուսումնասիրության շրջանակում մենք կսովորենք, որ ուսմունքի նկատմամբ նման վերաբերմունքը աստվածաշնչյան չէ և անառողջ է: Քրիստոնեական ուսմունքը պետք է ուսումնասիրեն և հասկանան բոլորը: Այս հրաշալի թեմայի ուսումնասիրության ճանապարհը կսկսենք «ուսմունք» և «քրիստոնեական ուսմունք» եզրույթների սահմանմամբ:

> **Ուսմունք.** Բառացիորեն նշանակում է «ուսուցում»: Հին Կտակարանում բառը ծագում է եբրայերեն ***lekah*** բառից, որ նշանակում է «այն, ինչն ընկալվել է» (Երկրորդ օրինաց 32.2, Հոբ 11.4, Առակաց 4.2, Եսայիա 29.24): Նոր Կտակարանում այդ բառը ծագում է հունարեն ***didaskalía*** բառից, որը վերաբերում է «սովորեցնելու գործողությանը» (Ա Տիմոթեոս 4.13, 16, 5.17, Բ Տիմոթեոս 3.10, 16) կամ նրան, թե «ինչն է ուսուցանվել» (Մատթեոս 15.9, Բ Տիմոթեոս 4.3):
>
> **Քրիստոնեական ուսմունք.** Հին և Նոր Կտակարանների Գրվածքների համակարգված ուսումնասիրության հիման վրա ձևավորված համոզմունքներ, որոնք քրիստոնյաները կրում, կիրառում և սովորեցնում են:

Պարզ ձևակերպմամբ քրիստոնեական ուսմունքը **Աստվածաշնչի այն ուսուցումներն են, որոնց մենք՝ որպես քրիստոնյաներ, հավատում ենք, և որոնք կիրառում և սովորեցնում ենք ուրիշներին**: Եթե Աստվածաշունչն ուսումնասիրել եք, ապա ուսումնասիրել եք ուսմունքը: Եթե երբևէ ինչ-որ մեկի հետ կիսվել եք ձեր սովորածով, ապա սովորեցրել եք ուսմունքը: Հետևաբար այս կամ այն կերպ յուրաքանչյուր քրիստոնյա աստվածաբան է:

1. Ըստ վերոնշյալի՝ ինչպե՞ս է սահմանվում «քրիստոնեական ուսմունք» ասվածը: Լրացրե՛ք բաց թողնված հատվածները.

   ա. *Հ_____ և Ն_____ Կտակարանների Գրվածքների ուսումնասիրության հ_____ վ_____ ծ_____ հ_____, որոնք քրիստոնյաները կ_____, կ_____ և ս_____ են:*

2. Հիմնվելով վերոնշյալ ճշմարտությունների քննարկման վրա՝ տվե՛ք «քրիստոնեական ուսմունքի» սահմանումը ձեր բառերով.

   _____

   _____

   _____

3. Հիմնվելով այն ճշմարտությունների վրա, որոնք քննարկել ենք, կարող ենք ասել, որ ուսմունքի ուսումնասիրությունը միայն մասնագիտությամբ աստվածաբանների՞ համար է, թե՞ բոլոր քրիստոնյաների: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը.

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԹԵՄԱՆԵՐԸ

«Ուսմունք» բառում ամփոփված է այն ամենը, ինչ սովորեցնում է Աստվածաշունչը: Այս պատճառով լավ կլինի աստվածաշնչյան ուսմունքը դասակարգել ըստ թեմաների: Ուսումնասիրության տվյալ փուլում մենք կհետևենք դասական կառուցվածքին՝ Աստվածաշնչի կարևոր ուսմունքները տասնվեց տարբեր թեմաների դասակարգելով:

Մատենագիտություն (բիբլիոլոգիա) (հունարեն՝ ***biblía*** = գրքեր + ***logía*** = ուսումնասիրություն կամ խոսույթ). Աստվածաշնչի ուսումնասիրությունն է, ներառում է աստվածային հայտնությունը, աստվածաշնչյան Գրվածքների կազմումը և Աստվածաշնչի հեղինակությունն ու կիրառումը քրիստոնյայի կյանքում: Այն կարող է ներառել նաև հերմենևտիկան (հունարեն՝ ***hermēneúō*** = մեկնաբանել, մեկնել), որը Աստվածաշնչի մեկնաբանության սկզբունքների ուսումնասիրությունն է:

Աստվածաբանություն (թեոլոգիա) (հունարեն՝ ***theós*** = Աստված + ***logía*** = ուսումնասիրություն կամ խոսույթ). Աստծո ուսումնասիրությունն է, ներառում է Աստծո բնությունը, հատկանիշները և գործերը: Տվյալ եզրույթը օգտագործվում է նաև ամբողջական վարդապետության մասին խոսելիս:

Քրիստոսաբանություն (քրիստոլոգիա) (հունարեն՝ ***Christós*** = Քրիստոս + ***logía*** = ուսումնասիրություն կամ խոսույթ). Քրիստոսի ուսումնասիրությունն է, ներառում է Քրիստոսի բնությունն ու գործերը, հատկապես Նրա կյանքը, մահը, հարությունն ու փառավորվելը:

Պնևմատոլոգիա (հունարեն՝ ***pneúma*** = հոգի + ***logía*** = ուսումնասիրություն կամ խոսույթ). Սուրբ Հոգու ուսումնասիրությունն է, ներառում է Նրա բնությունը և գործերը՝ հատկապես դարձի և քրիստոնեական կյանքի վերաբերյալ:

Հրեշտակաբանություն (անգելոլոգիա) (հունարեն՝ ***ággelos*** կամ ***ángelos*** = հրեշտակ + ***logía*** = ուսումնասիրություն կամ խոսույթ). հրեշտակների ուսումնասիրությունն է, ներառում է հրեշտակների՝ որպես Աստծո ծառաների բնությունը և ծառայությունը:

Դիվաբանություն (դեմոնոլոգիա) (հունարեն՝ ***dáimōn*** = դև + ***logía*** = ուսումնասիրություն կամ խոսույթ). դևերի ուսումնասիրությունն է, ներառում է սատանայի և դևերի բնությունը, գործերը և վերջնական դատաստանը:

Մարդաբանություն (անթրոպոլոգիա) (հունարեն՝ ***ánthrōpos*** = մարդ + ***logía*** = ուսումնասիրություն կամ խոսույթ). մարդու ուսումնասիրությունն է, ներառում է մարդու արարումը, անկումը, բնությունը և կարիքները:

Փրկաբանություն (սոթերիոլոգիա) (հունարեն՝ ***sōtêrion*** = փրկություն + ***logía*** = ուսումնասիրություն կամ խոսույթ). փրկության ուսումնասիրությունն է, ներառում է Քրիստոսի խաչն ու հարությունը, Աստծո գերիշխանությունը և մարդու պատասխանատվությունը, ապաշխարությունը, հավատը և գործերը, ինչպես նաև հավատացյալի արդարացումը, հաստատվելը, սրբագործումը և վերջնական փառավորվելը:

Եկեղեցաբանություն (էկլեսիոլոգիա) (հունարեն՝ ***ekklēsía*** = եկեղեցի + ***logía*** = ուսումնասիրություն կամ խոսույթ). եկեղեցու ուսումնասիրությունն է, ներառում է եկեղեցու հիմնումը, նպատակը, կազմակերպումը, կանոնադրությունը և պատասխանատվությունները:

Վախճանաբանություն (էսխատոլոգիա (հունարեն՝ ***éschatos*** = վերջին [բաներ] + ***logía*** = ուսումնասիրություն կամ խոսույթ). վերջին օրերի ուսումնասիրությունն է, ներառում է մահը, երկինքը և դժոխքը, Քրիստոսի երկրորդ գալուստը և արարչագործության վախճանը:

Բարոյագիտություն (էթիկա) (հունարեն՝ ***ēthikós՝ êthos*** = սովորույթ, բարոյական սովորություն). բարոյական արժեքների ուսումնասիրությունն է, անդրադառնում է մարդկային կյանքի և բարոյականության վերաբերյալ քրիստոնյայի պատշաճ աշխարհայացքին և վարքագծին:

Նվիրման կյանք. Սուրբ գրքում ներկայացված և եկեղեցու պատմության ամբողջ ընթացքում կիրառված նվիրման ուղղությունների կարգուկանոնի ուսումնասիրությունն է:

Ներառում է Խոսքի ուսումնասիրություն, աղոթք, ծոմապահություն, դավանանք, Խոսքի շուրջ խորհրդածություն և երկրպագություն:

Քրիստոնեական ծառայություն. տեղական եկեղեցում գործող հոգևոր պարգևների և տարբեր ծառայությունների ուսումնասիրությունն է, երբ շեշտը դրվում է հովվական ծառայության և հոչակումների վրա:

Ավետարանչություն (հունարեն՝ ***euaggélion*** կամ ***euangélion*** = բարի լուր). ավետարանի բովանդակության և այն աստվածաշնչյան մոտեցմամբ ուրիշներին հաղորդելու միջոցի ուսումնասիրությունն է:

Միսիոլոգիա (լատիներեն՝ ***missio*** = ուղարկել + հունարեն՝ ***logía*** = ուսումնասիրություն կամ խոսույթ). եկեղեցու միսիոներական աշխատանքի ուսումնասիրությունն է, ներառում է Մեծ հանձնարարականը, անհատական միսիոներական կանչը, աշխարհի հոգևոր կարիքները և առաքելության աստվածաշնչյան մեթոդաբանությունը:

Խորհրդատվություն. աստվածաշնչյան խորհրդատվության ուսումնասիրությունն է՝ անհատների հոգևոր, մտավոր և հուզական կարիքները հաշվի առնելով:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

1. Վերանայե՛ք նախորդ երկու էջերում նշված ուսմունքի գլխավոր թեմաները, մինչև դրանք ամրապնդվեն ձեր հիշողության մեջ: Այնուհետև համապատասխանեցրե՛ք եզրույթներից յուրաքանչյուրն իր ճիշտ սահմանմանը.

_____ *Մատենագիտություն*	ա. *Սուրբ Հոգու Անձի և գործի ուսումնասիրություն*
_____ *Աստվածաբանություն*	բ. *Սուրբ գրքի ուսումնասիրություն խորհրդավորության նպատակով*
_____ *Քրիստոսաբանություն*	գ. *Աստծո՝ փրկության գործի ուսումնասիրություն*
_____ *Պնևմատոլոգիա*	դ. *Եկեղեցու նպատակի, կազմակերպման և կանոնադրության ուսումնասիրություն*
_____ *Հրեշտակաբանություն*	ե. *Ավետարանի բովանդակության և աստվածաշնչյան մոտեցմամբ այն ուրիշներին փոխանցելու միջոցների ուսումնասիրություն*
_____ *Դիվաբանություն*	զ. *Սուրբ գրքում ամրագրված բարոյական արժեքների ուսումնասիրություն*
_____ *Մարդաբանություն*	է. *Սուրբ գրքի կազմման, հեղինակության և կիրառության ուսումնասիրություն*
_____ *Փրկաբանություն*	ը. *Սուրբ գրքում նշված և եկեղեցու պատմության ընթացքում կիրառված նվիրման ուղղությունների ուսումնասիրությունս*
_____ *Եկեղեցաբանություն*	թ. *Մարդու արարման, անկման, բնության և կարիքների ուսումնասիրություն*
_____ *Վախճանաբանություն*	ժ. *Սատանայի և դևերի բնության, գործերի և վախճանի ուսումնասիրություն*
_____ *Բարոյագիտություն*	ի. *Մեծ հանձնարարականի և եկեղեցու միսիոներական գործունեության ուսումնասիրություն*
_____ *Նվիրման կյանք*	լ. *Հիսուս Քրիստոսի Անձի և գործի ուսումնասիրություն*
_____ *Քրիստոնեական ծառայություն*	խ. *Հրեշտակների բնության և ծառայության ուսումնասիրություն*
_____ *Ավետարանչություն*	ծ. *Տեղական եկեղեցում ծառայության ուսումնասիրություն՝ շեշտը դնելով հովվության և հոչակումների վրա*
_____ *Միսիոլոգիա*	կ. *Աստծո բնության, հատկանիշների և գործերի ուսումնասիրություն*
_____ *Խորհրդավորություն*	հ. *Վերջին օրերի, Քրիստոսի երկրորդ գալստյան և արարչության վախճանի ուսումնասիրություն:*

Գլուխ 2. Քրիստոնեական ուսմունքի աղբյուրը

Ուսմունքը ճիշտ է, երբ բխում է հեղինակավոր աղբյուրից, որն առանց սխալվելու խոսում է Աստծո, Նրա գործերի և մեզ համար ունեցած Նրա ծրագրի մասին: Ամբողջ աշխարհում աստվածային գիտելիքի՝ նման լիազորություն ունեցող միայն մեկ աղբյուր կա՝ Աստվածաշունչը: Այս ուսումնասիրության առանցքային ճշմարտություններից մեկն այն է, որ մեր համոզմունքների, գործելակերպերի և ուսուցման միակ բացարձակ հեղինակությունն Աստվածաշունչն է: Մեր ամբողջ ուսմունքը պետք է բխի Սուրբ գրքից:

1. Ըստ Բ Տիմոթեոս 3.16-ի՝ բացատրե՛ք, թե ինչու է Աստվածաշունչը քրիստոնեական ուսմունքի միակ արժանահավատ և հեղինակավոր աղբյուրը.

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ներշնչված» *(անգլերենում օգտագործված)* բառը ծագում է հունարեն ***theópneustos*** բառից, որը բառացի թարգմանությամբ նշանակում է «Աստվածաշունչ»: Քրիստոնյաների համար մեծ նշանակություն ունի այն փաստը, որ Աստվածաշունչը Աստծուց ներշնչված, Աստծո անսխալական խոսքն է: Աստվածաշնչի ուսմունքը բացարձակ վստահելի է, խոստումներում Աստված միշտ հավատարիմ է, իսկ դրանում ամփոփված հրամաններն ու սկզբունքները հենց Աստծո իմաստությունն են: Իմաստունները իրենց ուսմունքն ու կյանքը կառուցում են Աստվածաշնչի հիման վրա:

2. Աստվածաշունչն է քրիստոնեական ուսմունքի միակ բացարձակ հեղինակությունը: Այդուհանդերձ, շատերը սխալվում են՝ իրենց համոզմունքների և գործելակերպերի համակարգը ոչ աստվածաշնչյան և ոչ վստահելի աղբյուրների վրա հիմնելով: Ստորև բերված մտքերը նույնականացրե՛ք համապատասխան խոսքերի հետ:

_____ *Երեմիա 17.9*	ա. *Կրոնական կամ առեղծվածային փորձառություններ (հրեշտակների միջոցով փոխանցված ուղերձներ, տեսիլքներ և այլն)*
_____ *Առակաց 14.12*	բ. *Մարդու սիրտը*
_____ *Մատթեոս 15.6-9*	գ. *Աշխարհի փիլիսոփայությունները, ավանդույթները և սկզբունքները*
_____ *Կողոսացիս 2.8*	դ. *Մարդկանց ճանապարհները, մտքերը և կարծիքները*
_____ *Կողոսացիս 2.18*	ե. *Մարդկային ավանդույթները և ցուցումները*

ՆՇՈՒՄՆԵՐ. Չափազանց կարևոր է, որ մենք հավատարիմ մնանք այն համոզմանը, որ Աստվածաշունչը բացարձակ հեղինակություն է, որից բխում են մեր ուսմունքները, համոզմունքները և գործելակերպերը: Մարդու սիրտը խորամանկ է, միտքը կարող է սխալվել, մարդկային ավանդույթները կարող են հակասել Աստվածաշնչին, իսկ կրոնական այնպիսի փորձառությունները, ինչպիսիք են երազները և տեսիլքները, կարող են խաբուսիկ լինել: Գերազանց կլինի, եթե հետևենք մեր մտքերը, զգացմունքները, տեսածը և լսածը Աստծո Խոսքի հետ համեմատելու կանոնին և մերժենք այն ամենը, ինչը չի համապատասխանում Խոսքին:

3. Իմանալով, որ Աստվածաշունչն է քրիստոնեական ամբողջ ուսմունքի անսխալական աղբյուրն ու հեղինակությունը՝ ինչպե՞ս պետք է քրիստոնյան արձագանքի: Ի՞նչ են սովորեցնում մեզ Հին և Նոր Կտակարանների հետևյալ խոսքերը.

   ա. *Հեսու 1.8*

   բ. *Սաղմոս 119.105*

   գ. *Մատթեոս 4.4*

դ. *Մատթեոս 7.24-27*

ե. *Բ Տիմոթեոս 2.15*

զ. *Կողոսացիս 3.16*

4. Նկարագրե՛ք ձեր վերաբերմունքն Աստվածաշնչի նկատմամբ: Արդյոք Աստվածաշունչը ձեր կյանքում կարևո՞ր տեղ է զբաղեցնում: Արդյոք Աստվածաշո՞ւնչն է ձեր բոլոր համոզմունքների և գործելակերպերի հիմքը: Արդյոք կարիք կա՞, որ ձեր առաջնահերթություններում փոփոխություններ անեք:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

Գլուխ 3. Քրիստոնեական ուսմունքի կարևորությունը

Մաս 1. Ուսմունք և քրիստոնեություն

Քրիստոնյաների մեծ մասը հաճախ անտեսում է քրիստոնեական ուսմունքի ուսումնասիրությունը: Դրա վերաբերյալ հաճախ կարելի է լսել հետևյալ պատճառաբանությունները.

Առարկություն 1. «Քրիստոնյան Հիսուսի կարիքն ունի և ոչ թե ուսմունքի»:

Առարկություն 2. «Քրիստոնեությունը սրտի կրոն է և ոչ թե մտքի»:

Առարկություն 3. «Ուսմունքը հանգցնում է քրիստոնեական եռանդը»:

Առարկություն 4. «Ուսմունքը գործնական չէ և քիչ կիրառություն ունի քրիստոնյայի կյանքում»:

Առարկություն 5. «Ուսմունքը երկպառակությունների պատճառ է դառնում»:

Առարկություն 6. «Ուսմունքը չափազանց բարդ է սովորական քրիստոնյայի համար»:

Չնայած այն հանգամանքին, որ այս առարկությունները բավականին տարածված են ժամանակակից քրիստոնյաների շրջանում՝ դրանք անհիմն են և արտահայտում են աստվածաշնչյան քրիստոնեությանն ու Աստծո կամքին անտեղյակ լինելը, ինչը բացահայտված է Սուրբ գրքում: Այս և սրան հաջորդող երկու գլուխներում մենք մեկ առ մեկ կհերքենք այս առարկությունները և ցույց կտանք աստվածաշնչյան ուսմունքի կենսական կարևորությունը քրիստոնյայի կյանքում:

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ՈՒՆԻ ՀԻՍՈՒՍԻ ԵՎ ՈՒՍՄՈՒՆՔԻ ԿԱՐԻՔԸ

Ցանկացած պարագայում փրկության համար մեզ միայն Հիսուսն է պետք: Եվ սակայն ինչպե՞ս կարող ենք ճանաչել իրական Հիսուսին առանց աստվածաշնչյան ուսմունքի իմացության: Աստվածաշունչը սովորեցնում է, որ կլինեն կեղծ քրիստոսներ, որոնք կփորձեն խաբել մեզ, և մենք գիտենք, որ ամենահայտնի աղանդներից շատերն ասում են, թե հավատում են Հիսուսին և Հիսուս են քարոզում: Ինչպե՞ս կարող ենք համոզված լինել, որ հավատացել ենք ճշմարիտ Քրիստոսին, եթե չենք ուսումնասիրել Սուրբ գիրքը և չենք կազմել Քրիստոսի Անձի և գործերի մասին աստվածաշնչյան ուսմունքը: Ավելին՝ ինչպե՞ս կարող ենք համոզված լինել, որ ապրում ենք Նրա կամքի համաձայն, եթե չենք ուսումնասիրել Նրա սովորեցրածը, ինչը մեզ փոխանցվում է Սուրբ գրքի միջոցով: Մենք պետք է գիտակցենք, որ ուսմունքն անփոխարինելի է, եթե ցանկանում ենք հավատալ Աստծուն և ճիշտ կյանքով ապրել Նրա և մարդկանց առջև:

1. Ըստ Մատթեոս 7.28, 29-ի՝ ինչո՞վ էր հիանում ամբոխը.

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հարկ է նշել, որ «վարդապետություն» բառը թարգմանված է հունարեն ***didachê*** բառից, որ նշանակում է «հրահանգ» կամ «ուսմունք» (KJV): Տեր Հիսուս Քրիստոսը բոլոր ուսուցիչներից լավագույնն էր: Նա գիտեր ու հասկանում էր ուսմունքի կարևորությունը և հաճախ էր սովորեցնում Իր աշակերտներին և մարդկանց բազմությանը, որ հավաքվում էին՝ լսելու Նրա խոսքերը: Մարդկության ամենամեծ կարիքը Աստծուն ճանաչելը և Նրա կամքը հասկանալն է: Հիսուսը եկավ՝ մարդկանց հայտնելու Աստծուն և Իր կյանքի օրինակով ու Իր խոսքերով ցույց տալու Նրա կամքը:

2. Մարկոս 4.24, 25-ում ի՞նչ նախազգուշացում տվեց Հիսուսն Իր աշակերտներին Իր վարդապետության (ուսմունքի), ինչպես նաև այն արժևորելու, ըմբռնելու և դրանում հարատևելու նրանց պատասխանատվության մասին:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Տեսե՛ք» արտահայտությունը թարգմանված է հունարեն ***blépō*** բառից, որ նշանակում է «նայել» և «ուշադրություն դարձնել» (ESV) կամ «զգույշ լինել» (KJV): Հիսուսը զգուշացնում է մեզ, որ մեծ ուշադրություն դարձնենք Իր սովորեցրածին (ուսմունքին): Եթե ընդունենք աստվածաշնչյան ուսմունքի կարևորությունը, ապա Տերը մեզ ավելին կսովորեցնի Իր և Իր կամքի մասին: Իսկ եթե անտեսենք Նրա սովորեցրածը, ապա նույնիսկ այն գիտելիքը, որ ձեռք ենք բերել, կորսված կլինի: Ցավոք, շատ քրիստոնյաներ չեն սովորել գնահատել աստվածաշնչյան ուսուցումները: Հաճախ մեր մեղավորությունն այն է, որ Աստծո Խոսքի ադամանդներին վերաբերվում ենք ինչպես ածուխի կտորների:

3. Ի՞նչ է սովորեցնում Գործք 2.42-ը առաջին եկեղեցու քրիստոնյաների և ուսմունքի նկատմամբ նրանց վերաբերմունքի մասին:

ա. *Եվ մ*_____ *հ*_____

*առաքյալների վ*_____:

ՆՇՈՒՄՆԵՐ. Կարո՞ղ եք երևակայել ավելի կենսունակ և Սուրբ Հոգով լցված եկեղեցի, քան Գործք 2-րդ գլխում նկարագրված եկեղեցին էր: 41-րդ խոսքում կարդում ենք, որ մեկ օրում երեք հազար մարդ ապաշխարեց և մկտրվեց: Ո՞րն էր Աստծո այդպիսի մեծ շարժի բանալին: Թեև դրան նպաստող շատ գործոններ կային, գիտենք, որ ամենաորոշիչը քրիստոնյաների անկեղծությունն էր, որով նրանք «միշտ հետևում էին» առաքյալների վարդապետությանը: Հարկ է ևս մեկ անգամ նշել, որ «վարդապետություն» բառը ծագում է հունարեն ***didachê*** բառից, որը կարելի է թարգմանել նաև որպես «հրահանգ» կամ «ուսմունք» (KJV): Ինչպես Տեր Հիսուս Քրիստոսը (Մատթեոս 7.28, 29), այնպես էլ առաքյալները գիտակցում էին ուսմունքը սովորեցնելու անհրաժեշտությունը: Մարդիկ ներում էին ստանում իրենց մեղքերի համար, ինչպես նաև Սուրբ Հոգու պարգևը (Գործք 2.38), սակայն միևնույնն է, առաքյալների վարդապետության կամ ուսմունքի կարիքն ունեին, որպեսզի կարողանային Աստծուն հաճելի կյանքով ապրել և ավետարանի պտղաբեր վկաները լինել:

4. Ըստ Եփեսացիս 4.14, 15-րդ խոսքերի՝ ո՞րն է պատճառներից մեկը, որ քրիստոնյաները պետք է լինեին հասուն և քրիստոնեական ուսմունքով կրթված:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այսօր ավելի շատ կրոնական խմբեր կան, քան քրիստոնեության պատմության մեջ որևէ այլ ժամանակաշրջանում: Հաճախ ենք լսում նոր աղանդի կամ պաշտամունքի տեսակի մասին, որոնք դավանում են քրիստոնեության պատմությունից շեղվող ուսմունքներ: Ո՞վ է ճիշտ: Այս հարցի պատասխանը կարող ենք իմանալ միայն աստվածաշնչյան ուսմունքը պատշաճ կերպով ըմբռնելու դեպքում: Ցանկացած վեճի կամ շփոթմունքի լուծում սկսվում է մեկ հարցադրմամբ. «Ի՞նչ է ասում Աստծո Խոսքը»:

5. Ի՞նչ է հորդորում Պողոս առաքյալը իր երիտասարդ աշակերտ Տիմոթեոսին Ա Տիմոթեոս 4.16-ում: Ինչպե՞ս է նրա խրատը ցույց տալիս ուսմունքի կարևորությունը:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Վարդապետություն» բառը թարգմանված է հունարեն ***didaskalía*** բառից, որը կարող է թարգմանվել նաև որպես «հրահանգ» կամ «ուսմունք» (KJV): Որքանո՞վ է ուսմունքը կարևոր: Ինչ-որ առումով ճիշտ է ասել, որ մեր փրկությունը դրանից է կախված: Հավատը բավարար չէ, քանի դեռ հենված չէ դրան արժանի ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի վրա, ով մեզ փրկելու զորություն ունի: Ուսմունքը կարևոր է, քանի որ այն առաջնորդում է մեզ դեպի ճշմարիտ Փրկիչը, բացատրում է մեզ, թե Ով է Նա, և սովորեցնում է, թե ինչ է Նա մեզնից ակնկալում:

6. Ըստ Ա Տիմոթեոս 6.3-ի՝ որո՞նք են այն առանցքային հատկանիշները, որոնք օգնում են մեզ տարբերակելու ճշմարիտ աստվածաշնչյան ուսմունքը:

   ա. *Այն չպետք է լինի ու_____ ու_____, քան այն, որ առաքյալներին էին սովորեցնում (հունարեն* ***heterodidaskaléō*** բառից՝ ***héteros*** = ուրիշ, այլ + ***didáskō*** = սովորեցնել):

   բ. *Այն պետք է համապատասխանի մեր Տեր Հիսուս Քրիստոսի ո_____ խոսքերին (հունարեն* ***hugiaínō*** *բառից, որ նշանակում է առողջ՝ ի հակադրություն հիվանդի կամ վատառողջի): Այսինքն՝ ճշմարիտ աստվածաշնչյան ուսմունքը տանում է հոգևոր առողջության:*

գ. *Այն պետք է համապատասխանի ա_____ (հունարեն **eusébeia** բառին, որ նշանակում է բարեպաշտություն, ակնածանք և նվիրում Աստծուն): Ճշմարիտ ուսմունքը միշտ կհամապատասխանի բարեպաշտությանը և կտանի դեպի բարեպաշտություն:*

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍՐՏԻ ԵՎ ՄՏՔԻ ԿՐՈՆ Է

Ժամանակակից քրիստոնեության մեջ հաճախ կարելի է լսել հետևյալ պնդումը՝ «Քրիստոնեությունը ուսմունքի գիտելիք կամ էլ աստվածաշնչյան փաստերի ձեռնարկ չէ, այլ սրտի կրոն է՝ Աստծո և Իր ժողովրդի անձնական փոխհարաբերությունը»: Թեև քրիստոնեական հավատի այս հաճախ կրկնվող նկարագրությունը ճշմարտության տարր է պարունակում, այն նաև որոշակիորեն ոչ ճշմարիտ տարր է պարունակում: Ճշմարիտ է, որ քրիստոնեությունը սրտի կրոն է և Աստծո հետ անձնական փոխհարաբերության բարձրագույն դրսևորում, սակայն հավասարապես ճշմարիտ է նաև այն, որ քրիստոնեությունը մտքի կրոն է, որը հիմնված է աստվածաշնչյան ուսմունքի ճշգրիտ իմացության վրա. զգացմունքների և մտքի կամ վերապրումների և Սուրբ գրքի բացարձակ ճշմարտությունների միջև բաժանում չկա: Երկուսն էլ կարևոր դերակատարում ունեն, և դրանցից որևէ մեկն անտեսելու պարագայում թե՛ հավատացյալը և թե՛ եկեղեցին մեծապես կվնասվեն:

1. Աշխարհում և նույնիսկ եկեղեցում հաճախ կարելի է լսել «Հետևի՛ր սրտիդ» արտահայտությունը: Որքանո՞վ է աստվածաշնչյան այս խորհուրդը: Ըստ Երեմիա 17.9-ի՝ որքանո՞վ են վստահելի սրտի հույզերն ու զգացմունքները:

_____

_____

_____

_____

2. Մեր սրտի զգացմունքները կարող են լինել լիովին սխալական, քանի որ դրանք քամու նման փոփոխական են: Այն քրիստոնյան, որն իր կյանքում դրանցով է ուղղորդվում, անկայուն և անհաստատ կլինի իր ձեռնարկած բոլոր բաներում: Արդյոք հավատո՞ւմ եք, որ աստվածաշնչյան ուսմունքով չառաջնորդվող սիրտը քրիստոնեական կյանքի վստահելի առաջնորդ է: Ի՞նչ է զգուշացնում Առակաց 14.12-ը նրանց, ովքեր համարձակվում են առաջնորդվել իրենց սրտի զգացմունքներով և հույզերով:

_____

_____

_____

_____

_____

3. Սիրտը (*այսինքն՝* զգացմունքները և հույզերը) քրիստոնեական կյանքի շատ կարևոր և գեղեցիկ մասն է, սակայն բավարար չէ քրիստոնյային առաջնորդելու համար: Մենք պետք է այդ գործընթացում ներգրավենք նաև միտքը (*այսինքն՝* ինտելեկտը) և աճենք Աստվածաշնչի և դրա ուսմունքի իմացության մեջ: Ըստ Մարկոս 12.30-ի՝ ո՞րն է մեր մարդկային բնության ամենակարևոր տարրերից մեկը, որով սիրում և ծառայում ենք Աստծուն:

   ա. *Եվ սիրի՛ր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ անձով, քո ամբողջ մ_____ և քո ամբողջ զորությամբ:*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Միտք» բառը թարգմանված է հունարեն ***diánoia*** բառից, որը կարող է թարգմանվել նաև «ինտելեկտ» կամ «հասկացողություն»: Մեր մտքով մենք պետք է աճենք Աստծո և Նրա կամքի իմացության մեջ, որպեսզի կարողանանք ճշմարտապես սիրել և ծառայել Նրան, այնպես, ինչպես Նա է պատվիրում: Այդ գիտելիքը մեր մտքի համար բացվում է Աստվածաշնչի միջոցով:

4. Միտքը կարևոր է ոչ միայն Աստծո հատկանիշները և կամքը հասկանալու համար, այլև այն միջոցն է, որով քրիստոնյան կերպարանակից է դառնում Քրիստոսին: Ըստ Հռոմեացիս 12.2-ի՝ ինչպե՞ս կարող է քրիստոնյան խուսափել աշխարհի կերպարանքով կերպարանվելուց և կերպարանակից լինել Քրիստոսին:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո կամքի գիտության մեջ մեր աճը և մեր շարունակական կերպարանակցումը Քրիստոսին սկսվում են մեր մտքի նորոգությամբ: Նման նորոգությունը հնարավոր է Խոսքը կարդալով, սերտելով և դրա շուրջ խորհելով:

5. Ընթերցե՛ք Կողոսացիս 1.9-12-ը, ծանոթացե՛ք դրա բովանդակությանը, այնուհետև պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

   ա. *Ըստ 9-րդ խոսքի՝ ի՞նչ է աղոթում Պողոս առաքյալը Կողոսիայի եկեղեցու համար:*

      (1) Որպեսզի հավատացյալները լցվեին Աստծո կամքի գ_____, ի_____ և հ_____:

   բ. *Ըստ 10-12-րդ խոսքերի՝ ի՞նչ է լինում, երբ քրիստոնյան աճում է Աստծո կամքի գիտության, իմաստության և հանճարի մեջ:*

_____

_____

_____

_____

_____

6. Ըստ Բ Պետրոս 1.5-ի՝ հավատացյալն ի՞նչ պետք է ավելացնի իր հավատին և առաքինությանը, որպեսզի ավելի հասուն և պտղաբեր լինի: Ինչպե՞ս է սա ցույց տալիս մտքի և ուսմունքը հասկանալու կարևորությունը:

_____

_____

_____

_____

_____

7. Ինչպե՞ս է Պետրոս առաքյալը խրատում եկեղեցուն Բ Պետրոս 3.18-ում.

ա. *Աճե՛ք մեր Տեր Հիսուս Քրիստոսի շ_____ և գ_____:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Մեր ուսումնասիրության այս բաժնում սովորեցինք մի կենսական ճշմարտություն. աստվածաշնչյան ուսմունքի իմացությունը քրիստոնեական կյանքի կարևոր տարր է: Ուսմունքի իմացությունն ինքնին նպատակ չէ, սակայն դա այն անփոխարինելի միջոցն է, որի օգնությամբ կերպարանակից ենք լինում Քրիստոսին և պտուղ ենք բերում Աստծո փառքի համար:

Գլուխ 4. Քրիստոնեական ուսմունքի կարևորությունը

Մաս 2. Ուսմունքը և հավատացյալը

Այս գլխում կքննարկենք քրիստոնյայի կյանքում ուսմունքի ուշագրավ կարևորության ևս երկու ապացույց. (1) ուսմունքն է ճշմարիտ քրիստոնեական եռանդի հիմքն ու խթանիչը, և (2) քրիստոնյայի կյանքում ուսմունքը և՛ գործնական է, և՛ օգտակար է:

ՈՒՍՄՈՒՆՔՆ Է ՃՇՄԱՐԻՏ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵՌԱՆԴԻ ՀԻՄՔՆ ՈՒ ԽԹԱՆԻՉԸ

Ոմանք հակառակվում են ուսմունքի ուսումնասիրությանը, քանի որ հավատացած են, որ այն կմարի քրիստոնյայի եռանդն առ Աստված: Նման համոզմունքը չէր կարող ավելի հեռու լինել ճշմարտությունից: Թեև կան որոշ աստվածաբաններ և գիտնականներ, որոնք թողել են իրենց առաջին սերը, բայց նրանց խանդավառության պակասը կամ կորուստը պայմանավորված չէ Աստծո Խոսքի և ուսմունքի լիարժեք ուսումնասիրությամբ: Ըստ Սուրբ գրքի՝ ճշմարտության իմացությունն է նորոգության և արթնության աղբյուրն ու կատալիզատորը:

ՈՒՍՄՈՒՆՔՆ Է ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԹՆՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆ ՈՒ ԿԱՏԱԼԻԶԱՏՈՐԸ

1. Ըստ Ղուկաս 24.32-ի՝ ի՞նչ արեցին աշակերտներն այն բանից հետո, երբ Տեր Հիսուս Քրիստոսը բացատրեց նրանց Սուրբ գրքում Իր մասին գրված խոսքերը (խոսք 27).

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Բորբոքել» բառը թարգմանված է հունարեն ***kaíō*** բառից, որը նաև կարող է թարգմանվել որպես «հրահրել, վառել, հրկիզել»: Տեր Հիսուսը Քրիստոսը Իր աշակերտներին հայտնել էր Իր մասին Աստվածաշնչում գրված խոր ճշմարտությունները, և նրանց սրտերը արտասովոր կերպով շարժվել էին: Հետագայում այս մարդիկ փոխեցին աշխարհը այն ճշմարտություններով, որ լսել էին (Գործք 17.6):

2. Սաղմոս 119.25-ում ի՞նչ է Դավիթ թագավորը խնդրում Աստծուց, երբ նրա սիրտը նվաղած էր՝ հողին հավասարված: Ի՞նչ է սա մեզ սովորեցնում Աստծո Խոսքի և ուսմունքի զորության մասին՝ լցնելու մեր սրտերը նոր կյանքով և եռանդով:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Գաղափարը երկակի է: Դավիթն Աստծուց խնդրում է, որ կենդանացնի իրեն այն բազմաթիվ խոստումների համաձայն, որ Աստված տվել է Իր Խոսքում, ինչպես նաև, որ կենդանացնի իրեն Խոսքի միջոցով:

ՈՒՍՄՈՒՆՔՆ Է ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԹՆՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆ ՈՒ ԿԱՏԱԼԻԶԱՏՈՐԸ

1. Հովսիա թագավորի, այնուհետև Նեեմիայի առաջնորդության տարիներին Իսրայելն ունեցավ երկու ամենամեծ արթնությունները պատմության մեջ: Ըստ հետևյալ խոսքերի՝ ո՞րն էր առաջնային գործոններից մեկը, որը հանգեցրեց այդ արթնություններին: Ի՞նչ է սա մեզ սովորեցնում արթնության հարցում աստվածաշնչյան ճշմարտության դերի մասին:

   ա. *Դ Թագավորաց 22.8-13, 23.1-14*

   _____

   _____

   _____

   _____

   բ. *Նեեմիա 8.1-6*

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Արդյոք հետաքրքիր չէ՞ այն, որ արթնություններից յուրաքանչյուրը Աստծո Խոսքը վերագտնելու արդյունքում է եղել: Աստվածաշնչյան ուսմունքն է ճշմարիտ արթնության հիմքը: Երբ մենք աճում ենք ճանաչողության մեջ, թե ով է Աստված, և ինչ է Նա արել մեզ համար, մեծանում է մեր եռանդը Նրա և Նրա արքայության հանդեպ: Սաղմոսների

գիրքը երկրպագության երգերի ժողովածու է, սակայն պարունակում է նաև Աստծո Անձի և գործերի մասին ամենախոր վարդապետություններից մի քանիսը: Հռոմեացիս 1-11-րդ գլուխները հավանաբար ամենամեծ ուսմունքային քննախոսությունն են Աստվածաշնչում, և սակայն դա գագաթնակետին է հասնում ամբողջ Աստվածաշնչի փառաբանության ամենագեղեցիկ և խանդավառ արտահայտություններից մեկով (11.33-36): Պողոս առաքյալը եկեղեցու պատմության մեջ ամենամեծ աստվածաբանն է եղել՝ միաժամանակ լինելով ամենաեռանդուն քրիստոնյան և պտղաբեր միսիոները: Նրա ուսմունքը Տիրոջ հանդեպ նրա եռանդի, սիրո և ծառայության կարևոր գործոններից է: Եթե ցանկանում ենք Պողոսին նմանվել, ապա պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնենք այն առողջ ուսմունքին, որը ձևավորել է նրա կյանքը, բորբոքել նրա սիրտը և ուղղորդել գործողությունները:

2. Պատմության ամբողջ ընթացքում և մինչ օրս յուրաքանչյուր իրական արթնություն Աստծո ժողովրդի՝ Աստծո Խոսքին վերադառնալու արդյունքն է: Սուրբ գրքում և եկեղեցու պատմության ամբողջ ընթացքում ճշմարիտ արթնության հինգ ակնառու գործոն ենք տեսնում, որոնցից յուրաքանչյուրն ուղղակիորեն կապված է աստվածաշնչյան ուսմունքի հետ:

   ա. *ԱՍՏԾՈ ՊԱՏԿԵՐԸ, ԻՆՉՊԻՍԻՆ ՆԱ ԿԱ.* Արթնություն չի կարող լինել առանց Աստծո և Նրա գործերի մասին ճիշտ պատկերացում ունենալու: Ընդհանուր առմամբ, անկեղծ նվիրումը սկսում է թուլանալ և նվազել, երբ եկեղեցին սկսում է շեղվել Աստծո աստվածաշնչյան պատկերից և փորձում է վերստեղծել Աստծո պատկերը իր կամեցածի պես: Այսօր եկեղեցիներում նախանձախնդրության և ճշմարիտ նվիրվածության բացակայությունը ուղղակիորեն կապված է Աստծո Անձի վերաբերյալ անգետ լինելու հետ: Քանի՞ քրիստոնյա է երբևէ ուսումնասիրել Աստծո ուսմունքը կամ արտոնություն ունեցել լսելու քարոզների ընդարձակ շարք Աստծո հատկանիշների և գործերի մասին:

   բ. *ՄԱՐԴՈՒ ՊԱՏԿԵՐԸ, ԻՆՉՊԻՍԻՆ ՆԱ ԿԱ.* Արթնությունը կարիքից է ծնվում: Մինչ փրկություն ստանալը մեղավորը պետք է գիտակցի, որ ներման կարիք ունի, իսկ քրիստոնյան նախքան իրական արթնություն վերապրելը պետք է գիտակցի, որ շարունակաբար Աստծո կարիքն ունի: Ինչպե՞ս կարող ենք ճանաչել մեր իրական հոգևոր վիճակը՝ Սուրբ գիրքը և դրա ուսմունքը մի կողմ թողնելով: Որպես մեղավորներ՝ մենք մեր մեղքը ծածկելու, Աստծո պատվերները մեղմացնելու և ինքներս մեր մասին մեծ կարծիք ունենալու հակում ունենք: Այդ իսկ պատճառով մեզ Աստծո Խոսքի ողջամիտ ուսմունք է անհրաժեշտ, որպեսզի այն լույս սփռի մեր մեղքի վրա և բացահայտի մեր կարիքը: Մենք պետք է յուրացնենք աստվածաշնչյան ուսմունքը, որպեսզի այն ուղղորդի մեր վարքը և շտկի մեզ, երբ շեղվենք:

   գ. *ՎԵՐԱԴԱՐՁ ԱՂՈԹՔԻՆ ԵՎ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅԱՆԸ.* Սուրբ գրքում և եկեղեցու պատմության ամբողջ ընթացքում իրական արթնության ամենակարևոր գործոններից է եղել աստվածաշնչյան նվիրական կյանքը: Կարծես թե այսօր աղոթքի և երկրպագության նկատմամբ հետաքրքրությունը թարմացել է, և սրա համար պետք է շնորհակալ լինենք Աստծուց: Այդուհանդերձ, ինքներս մեզ պետք է հարց ուղղենք, թե արդյոք Աստծո հանդեպ մեր նվիրման քայլերը համապատասխանում են Սուրբ գրքին ու ողջամիտ ուսմունքին: Մեր նվիրման քայլերից որո՞նք են աստվածաշնչյան: Արդյոք մենք ուսումնասիրե՞լ ենք Աստծո Խոսքը՝ բացահայտելու, թե ինչ է Նա ցանկանում: Լավ կլինի՝ հիշենք, թե ինչպես Աստված հանդիմանեց այն երկու մարդկանց, որոնք Իրեն չէին երկրպագում Իր Խոսքի համաձայն (Ղևտացիս 10.1-3), և թե ինչպես աշակերտները խնդրեցին Հիսուսին, որ իրենց աղոթել

սովորեցներ (Ղուկաս 11.1): Իրական արթնությունը՝ լինի անձնական, թե հավաքական, անմիջական կապ ունի աղոթքի և երկրպագության հետ: Այդուհանդերձ, նվիրման այս երկու գործողություններն էլ պետք է ուղղորդված լինեն ոչ թե սեփական քմահաճույքներով կամ մշակույթի թելադրանքով, այլ Աստծո Խոսքի ողջամիտ ուսմունքով:

դ. *ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՈՒՂՂՈՐԴՈՒՄԸ ԵՎ ՋՈՐՈՒԹՅՈՒՆԸ.* Սուրբ Հոգին իրական արթնության խողովակն է: Նրա կամքին հնազանդվելը բերում է կյանք, զորություն և պտղաբերություն, իսկ Նրա առաջնորդությանը զգայուն չլինելու հետևանքը հոգևոր անպտղությունն է: Իրական արթնություն վերապրելու համար մենք պետք է ճանաչենք Հոգու գերիշխանությունը եկեղեցում և հնազանդվենք Նրա ձայնին: Ինչպե՞ս կարող ենք ճանաչել Սուրբ Հոգու գործելակերպն ու առաջնորդությունը մեր կյանքերում: Սուրբ գիրքը սովորեցնում է մեզ, որ աշխարհում մոլորեցնող շատ ոգիներ կան (Ա Հովհաննես 4.1), և որ դրանց գործունեությունը վերջին օրերում ակտիվանալու է (Ա Տիմոթեոս 4.1, 2): Ինչպե՞ս կարող ենք իմանալ, որ իրապես հետևում ենք Սուրբ Հոգուն: Մենք դա կարող ենք հասկանալ միայն՝ մեր ամեն միտքը, ուսուցումը և գործը աստվածաշնչյան ողջամիտ վարդապետության հետ համեմատելով: Սուրբ Հոգին երբեք չի հակասի Աստվածաշնչին, որն Իր ներշնչանքով է գրվել:

ե. *ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ.* Աստծո կամքին հնազանդվելը յուրաքանչյուր իրական արթնության պսակն է: Որքան էլ մեծ ուշադրություն դարձնենք երկրպագությանը, զգացմունքների մեծ վերելք ապրենք կամ ենթադրյալ հրաշքներ գործենք, եթե չկա հնազանդություն Աստծո կամքին, ապա չկա արթնություն: Սուրբ գրքում գրված կամ եկեղեցու պատմության մեջ տեղի ունեցած բոլոր իրական արթնությունները նույն բանի արդյունքն են՝ անկեղծ հնազանդություն Աստծո Խոսքին և ուսմունքին:

ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ ՈՒՍՄՈՒՆՔԸ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ Է

Որոշ քրիստոնյաներ տարածում են այն գաղափարը, թե ուսմունքը գործնական կիրառություն չունի քրիստոնյայի ամենօրյա կյանքում: Եվ սակայն հետևյալ երեք օրինակները ցույց են տալիս, որ ուսմունքը քրիստոնյայի կյանքում թե՛ գործնական և թե՛ օգտակար է, ինչպես նաև իրապես անփոխարինելի:

Նախ և առաջ՝ առանց Աստծո և Նրա գործերի մասին աստվածաշնչյան գիտելիքի (ուսմունքի) անհնար կլիներ վստահել Աստծուն մեր ամենօրյա կարիքների, խնդիրների և կյանքի փորձությունների մեջ: ***Երկրորդ***՝ առանց փրկության մասին աստվածաշնչյան տեսակետի (ուսմունքի) անհնար կլիներ խաղաղություն և հաստատություն ունենալ մեր՝ հավիտենական կյանքի վերաբերյալ: ***Երրորդ***՝ առանց Աստծո կամքի մասին աստվածաշնչյան հրահանգների (ուսմունք) անհնար կլիներ իմանալ և հնազանդվել Աստծո կամքին մեր անձնական կյանքում, մեր ընտանիքում, եկեղեցում, աշխատանքում, մեր կրթության կամ որևէ այլ ոլորտում:

Երեք հասարակ օրինակներով պարզ է դառնում, որ աստվածաշնչյան ուսմունքի ուսումնասիրությունը քրիստոնյայի կյանքում օգտակար է, գործնական և անփոխարինելի: Միայն Աստծո Խոսքն է մեր համոզմունքների և գործողությունների հաստատ հիմքը:

1. Ի՞նչ է մեզ սովորեցնում Երկրորդ օրինաց 4.5-8-ը այն գործնական օրհնությունների մասին, որոնք հոսում են Աստծո Խոսքի ուսմունքը ճիշտ ըմբռնելու և կիրառելու շնորհիվ:

_____

_____

2. Ի՞նչ է մեզ սովորեցնում Երկրորդ օրինաց 32.46, 47-ը մեր կյանքում Սուրբ գրքի ուսմունքի կարևորության մասին: Ինչպե՞ս պետք է ապրենք՝ արձագանքելով այս ճշմարտությանը:

3. Ըստ հետևյալ խոսքերի՝ ինչպե՞ս կարող է Աստվածաշունչը և դրա ուսմունքը դրական ազդեցություն ունենալ մեր՝ քրիստոնյաներիս առօրյայում:

ա. *Հեսու 1.8*

բ. *Սաղմոս 1.1-3*

գ. *Սաղմոս 119.105*

դ. *Հակոբոս 1.25*

4. Ի՞նչ սովորեցրեց Տեր Հիսուսը Մատթեոս 7.24-28-ում Աստծո Խոսքի և քրիստոնեական կյանքում դրա գործնական կիրառության կարևորության մասին.

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստվածաշնչում ամփոփված իմաստությունը չպետք է սահմանափակվի միայն եկեղեցու գործունեությամբ կամ այսպես կոչված «կրոնական կյանքով»: Աստվածաշունչը քրիստոնյայի ամբողջ կյանքի ձեռնարկն է: Ուսմունքի միջոցով մենք սովորում ենք այնպես ապրել Աստծո և մարդկանց առջև, որ հաճելի լինենք Աստծուն և պատիվ բերենք Նրան: Աստվածաշունչը սովորեցնում է մեզ աղոթել ***և*** ուղղորդել մեր ընտանիքները, այն սովորեցնում է մեզ տասանորդ տալ ***և*** կառավարել մեր անձնական ֆինանսները, այն սովորեցնում է, թե ինչպես դրսևորել մեզ եկեղեցում ***և*** աշխարհում: Աստվածաշունչը խոսում է ժամանակակից մարդու առօրյա կյանքի շատ գործնական հարցերի մասին: Աստվածաշունչը ***գիրք*** է յուրաքանչյուր տարիքային խմբի, յուրաքանչյուր իրավիճակի և յուրաքանչյուր մարդու համար: Լավ կլիներ, եթե մեծ ուշադրություն դարձնեինք Երկրորդ օրինաց 32.47-ում Աստծո հորդորին. «Որովհետև սա ձեզ համար դատարկ բան չէ. որովհետև ձեր կյանքն է»:

Գլուխ 5. Քրիստոնեական ուսմունքի կարևորությունը

Մաս 3. Ուսմունքը և եկեղեցին

Այս գլխում մենք քննարկելու ենք ուսմունքի՝ քրիստոնյայի կյանքում մեծ նշանակություն ունենալու երկու վերջնական ապացույցները. (1) ուսմունքը տարանջատում է լույսը խավարից, և (2) ուսմունքը բոլոր քրիստոնյաների համար է՝ ամենահասուն սուրբից մինչև ամենավերջին նորադարձը:

ՈՒՍՄՈՒՆՔԸ ՏԱՐԱՆՋԱՏՈՒՄ Է ԼՈՒՅՍԸ ԽԱՎԱՐԻՑ

Ցավալի է, որ քրիստոնյաները երբեմն վիճում ու բաժանվում են ուսմունքի պատճառով: Քրիստոնյաների միաբանությունը քրիստոնեական կյանքի կարևոր մասն է, և այն պետք է պաշտպանել, սակայն ոչ ամեն գնով: Այլ կերպ ասած՝ միաբանությունը չպետք է պահպանել աստվածաշնչյան քրիստոնեությունը սահմանող ուսմունքների հաշվին: Արդյոք պե՞տք է Երրորդության ուսմունքը անկարևոր դարձնենք, որպեսզի միաբանություն պահպանենք նրանց հետ, ովքեր մերժում են այն: Իսկ ի՞նչ կասեք Քրիստոսի արյան մասին, հավատով փրկություն ստանալու, Աստծո Խոսքի հեղինակության մասին: Իհարկե ո՛չ: Թեև բաժանումը միշտ ցավալի է, երբեմն այն անհրաժեշտ է: Հետևյալ պարբերություններում պարզ կդառնա այս ճշմարտությունը:

1. Ի՞նչ է մեզ սովորեցնում Հուդայի 3-րդ գլուխը աստվածաշնչյան ուսմունքի և այն պահպանելու հարցում քրիստոնյայի պատասխանատվության մասին:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս համատեքստում «հավատ» բառը վերաբերում է քրիստոնեական հավատի հիմնարար համոզմունքներին և ուսմունքներին: Իսկ «մրցել» բառը թարգմանված է հունարեն ***epagōnízomai*** բառից, որ նշանակում է «եռանդուն ջանք գործադրել ինչ-որ բանի օգտին»: Կարելի է թարգմանել նաև որպես «պատերազմել» կամ «պայքարել»: Քրիստոնյան չպետք է անտարբեր կամ պասիվ լինի ուսմունքի նկատմամբ, երբ տեսնում է, որ այն աղավաղվում է: «Մի անգամ ավանդված» արտահայտությունը նշանակում է, որ քրիստոնեական ուսմունքը հաստատված է և չպետք է փոփոխությունների ենթարկվի: Մենք չպետք է անտեսենք աստվածաշնչյան որոշ ճշմարտություններ այն պատճառով, որ մշակութային տեսանկյունից դրանք հնացած են կամ ոչ արդիական, և ոչ էլ պետք է վերջերս հայտնաբերված «նոր ճշմարտություններ» ավելացնենք Աստծո Խոսքին:

2. Ըստ հետևյալ աստվածաշնչյան խոսքերի՝ ե՞րբ է անհրաժեշտ զատվել նրանցից, որոնք նույնպես իրենց քրիստոնյա են կոչում.

ա. *Հռոմեացիս 16.17, 18*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Վարդապետություններ, որ դուք սովորեցիք» արտահայտությունը վերաբերում է քրիստոնեական հավատի այն հիմնարար ուսմունքներին, որոնք սովորեցրել էին առաքյալները և նրանց ընկերակցությունում եղողները:

բ. *Բ Հովհաննես 9-11*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Կեղծ ուսուցիչներին ընդունելու արգելքը խիստ է հնչում, սակայն անհրաժեշտ է: Այն հավուր պատշաճի հասկանալու համար մենք պետք է մի քանի վճռորոշ ճշմարտություն իմանանք: Առաջին՝ այս խոսքը չի արգելում քրիստոնյաներին հասարակ քաղաքավարություն ցուցաբերել բոլորի նկատմամբ, ավելի շուտ՝ այն արգելում է շփում ունենալ կեղծ ուսուցիչների հետ և միանալ նրանց ծառայությանը: Երկրորդ՝ այստեղ խոսքը վերաբերում է կեղծ ուսուցիչներին, որոնք հերքում են քրիստոնեական հավատը սահմանող հիմնարար ուսմունքները, ինչպիսին է, օրինակ, Քրիստոսի աստվածությունը (խոսք 9): Այս արգելքը չի վերաբերում նրանց, ովքեր հավատարիմ են քրիստոնեական հավատի հիմնարար ուսմունքներին, բայց մեզնից տարբերվում են աննշան կամ ոչ էական ուսմունքների մեկնաբանությամբ:

գ. *Ա Տիմոթեոս 6.3-5*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. 3-րդ խոսքը կեղծ ուսմունքը տարորոշելու կարևոր բանալի է տալիս մեզ: Կեղծ է այն ուսմունքը, որը (1) չի համապատասխանում Տեր Հիսուս Քրիստոսի վարդապետություններին և (2) չի արտացոլում կամ արտահայտում ճշմարիտ աստվածապաշտություն (*ինչպես, օրինակ՝* ճշմարիտ բարեպաշտություն, նվիրում և ակնածանք Աստծո հանդեպ):

դ. *Բ Թեսաղոնիկեցիս 3.6*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մինչ այս պահը մեր ուսումնասիրած բոլոր խոսքերը հիմնականում վերաբերել են ուսմունքին կամ վարդապետությանը: Այս խոսքը մասնավորապես վերաբերում է էթիկային կամ վարքագծին: Այն ասում է, որ մենք պետք է զատենք մեզ ոչ միայն կեղծ ուսուցիչներից, այլև նրանցից, ովքեր ասում են, թե քրիստոնյա են, սակայն այնպիսի կենսակերպ կամ վարքագիծ ունեն, որը հակասում է ողջամիտ ուսմունքին: Միևնույն ժամանակ պետք է հիշենք Պողոս առաքյալի խոսքերը Ա Կորնթացիս 5.9-11-ում. «Գրեցի ձեզ թղթում՝ չխառնվել պոռնիկների հետ: Եվ ոչ թե ամենևին այս աշխարհի պոռնիկների հետ կամ ագահների հետ կամ հափշտակողների հետ կամ կռապաշտների հետ, ապա թե ոչ՝ պետք էր ձեզ, որ հենց աշխարհից դուրս գնայիք: Բայց հիմա գրեցի ձեզ՝ չխառնվել, որ եթե մեկը, որ եղբայր է անվանված, լինի պոռնիկ կամ ագահ կամ կռապաշտ կամ նախատող կամ արբեցող կամ հափշտակող, այնպիսիի հետ հաց էլ չուտել»:

3. Ըստ աստվածաշնչյան այս խոսքերից ձեր սովորածի՝ բացատրե՛ք, թե ինչու է անհրաժեշտ այդ զատումը.

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ուսմունքի նպատակը ոչ թե եկեղեցին պառակտելն է, այլ միաբանելը: Այնուամենայնիվ, երբեմն կարող է անհրաժեշտություն ծագել միմյանցից զատել հավատին և գործելակերպերին վերաբերող հիմնարար ուսմունքները: Քանի դեռ այս աշխարհում ենք ապրում, մեր միջև միշտ լինելու են տարբերություններ, հետևաբար մենք պետք է սովորենք խոնարհություն ու ողորմություն ցուցաբերել բոլորի հանդեպ: Այդուհանդերձ, կան քրիստոնեությունը սահմանող որոշ հիմնարար ուսմունքներ, որոնք մենք պետք է պաշտպանենք, նույնիսկ եթե դա բաժանում բերի: Նման հիմնարար և քննարկման ոչ ենթակա ուսմունքներից են՝ ***Աստվածաշնչի հեղինակությունը.*** Սուրբ գիրքը ներշնչված է Աստծուց, այն անսխալական և բացարձակ հեղինակություն է հավատին և գործելակերպերին վերաբերող բոլոր հարցերում: ***Երրորդությունը.*** միակ ճշմարիտ Աստված գոյություն ունի երեք տարբեր և հավասարազոր Անձերում՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի: ***Մեղքի համընդհանուր լինելը.*** բոլոր մարդիկ ծնվում են ընկած բնությամբ, որը ժառանգել են առաջին մարդուց՝ Ադամից: Ընկած բնության հետևանքը ապստամբությունն է Աստծո դեմ և անհնազանդությունը Նրա օրենքին: Բոլոր մարդիկ մեղավոր են և Աստծո հետ հաշտության կարիք ունեն: ***Աստծո Որդու մարդացումը.*** երկու հազար տարի առաջ Աստծո հավիտենական Որդին սաղմնավորվեց կույսի արգանդում, և ծնվեց Աստված-մարդը՝ Հիսուս Նազովրեցին: Նա կատարելապես Աստված էր և կատարելապես մարդ էր: ***Քրիստոսի մահը.*** Հիսուս Քրիստոսը Աստծո հավիտենական Որդին է, որ կրեց մեր մեղքերը Գողգոթայի խաչի վրա և մեր փոխարեն մահացավ՝ դառնալով փոխարինող զոհ: Նրա մահով բավարարվեցին Աստծո արդարության պահանջները, հանդարտվեց Նրա բարկությունը մեր նկատմամբ, այդպիսով Աստված, պահպանելով Իր արդարությունը, կարողացավ ներել մեզ: ***Հիսուս Քրիստոսի հարությունը.*** Գերեզմանում երեք օր մնալուց հետո Հիսուս Քրիստոսը մեռելներից հարություն առավ նույն ֆիզիկական մարմնով, որով մահացել էր: Նրա հարությունը իրական իրադարձություն էր մարդկության պատմության մեջ: ***Փրկություն հավատով.*** Քրիստոսի կողմից կատարված փրկագնման աշխատանքը կատարյալ էր: Մենք փրկություն ստանալու համար որևէ բան անելու կարիք կամ կարողություն չունենք: Փրկությունը տրվում է շնորհով՝ հավատի միջոցով. այն չի տրվում մեր արժանիքների համար, այլ Աստծո պարգևն է (Եփեսացիս 2.8, 9): Աստծո և մարդկանց միջև միայն մեկ Միջնորդ կա (Ա Տիմոթեոս 2.5), և մարդկանց տրված միայն մեկ անուն կա, որով նրանք փրկություն են ստանում, և այդ անունն է Հիսուս Քրիստոս (Գործք 4.12): ***Սուրբ Հոգին.*** Սուրբ Հոգին Աստված է՝ Երրորդության երրորդ Անձը. Նա ապրում է բոլոր նրանց սրտերում, ովքեր իրապես հավատով դարձել են դեպի Տեր Հիսուս Քրիստոսը: ***Երկրորդ գալուստը.*** Հիսուս Քրիստոսը նորից կգա երկիր՝ փրկելու Իր եկեղեցին և դատելու աշխարհը: Նա գալու է մարմնով, բոլորի համար տեսանելի և հայտնի ձևով: ***Դրախտ և դժոխք.*** յուրաքանչյուր մարդ հավիտյան ապրելու է՝ կա՛մ դրախտում, կա՛մ դժոխքում: Փրկագնվածները հավիտենությունը կանցկացնեն երկնքում՝ Աստծո բարեհաճ ներկայության մեջ, իսկ անհավատները՝ դժոխքում՝ Աստծո բարեհաճ ներկայությունից վտարված:

ՈՒՍՄՈՒՆՔԸ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՎԱՏԱՑՅԱԼԻ ՀԱՄԱՐ Է

Քրիստոնյաների կողմից ուսմունքն անտեսելու ամենահաճախ հնչեցվող արդարացումներից մեկն այն է, որ այն պարզապես չափազանց բարդ է «սովորական» հավատացյալի համար: Այդուհանդերձ, այս արդարացումը ուղղակիորեն հակասում է Սուրբ գրքին: Այն ամենը, ինչ Աստված հայտնում է Իր Խոսքի մեջ, յուրաքանչյուր հավատացյալի համար է: Ճիշտ է, որոշ քրիստոնյաների Աստված օժտել է Իր հայտնությունն ըմբռնելու արտասովոր կարողությամբ, իսկ ուրիշներին՝ համալսարաններում և ճեմարաններում ուսանելու արտոնությամբ: Եվ սակայն

մենք պետք է միշտ հիշենք, որ Աստծո և Նրա կամքի մասին մեր գիտելիքը կախված չէ մեր մտավոր կարողությունից, ոչ էլ հատուկ արտոնությամբ է տրվում, այլ մեծապես պայմանավորված է Նրա կամքն իմանալու և կատարելու մեր ցանկությամբ:

1. Համաձայն Տեր Հիսուս Քրիստոսի՝ Հովհաննես 7.17-ում ասված խոսքի՝ ո՞վ կարող է աճել Աստծո և Նրա կամքի գիտության մեջ: Ի՞նչ է անհրաժեշտ այդ աճի համար:

ՆՇՈՒՄՆԵՐ. Ուշագրավ է, որ քրիստոնեական ուսմունքի գիտությունը ավելի շատ վերաբերում է Աստծո կամքի իմացությանը, քան ինտելեկտին: Այն քրիստոնյան, որը հանձնառել է հնազանդվել Աստծո կամքին, կաճի Աստծո բաների գիտության մեջ: Նա, ով գիտելիք է փնտրում՝ չպարտավորվելով հնազանդվել, քիչ բան կսովորի:

2. Սուրբ գրքում իմաստության և գիտության վերաբերյալ շատ խոստումներ կան Աստծո ամբողջ ժողովրդի համար: Սրանք վերաբերում են ինչպես ճեմարանի դասախոսին, այնպես էլ նորադարձին: Ի՞նչ են խոստանում հետևյալ խոսքերը բոլոր նրանց, ովքեր անկեղծությամբ փափագում են ճանաչել Աստծուն և Նրա ուսմունքը:

   ա. *Մատթեոս 11.25*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Իմաստուններ և գիտուններ» բառերը վերաբերում են նրանց, ովքեր մտավոր և հոգևոր առումներով հպարտացած են և չեն գիտակցում, որ կարիք ունեն Քրիստոսից սովորելու: «Երեխաներ» բառը վերաբերում է խոնարհներին, որոնք ընդունում են իրենց կարիքները և անկեղծությամբ փնտրում են Քրիստոսի ճշմարտությունը: Ա Կորնթացիս 3.18-ում շատ լավ խորհուրդ է գրված նրանց համար, ովքեր իրապես ցանկանում են աճել աստվածաշնչյան ուսմունքի մեջ. «Ոչ ոք իր անձը չխաբի. եթե ձեզնից մեկը կարծում է, թե իմաստուն է այս աշխարհում, թող նա հիմար լինի, որ իմաստուն լինի»: Այլ կերպ ասած՝ նա, ով կարծում է, որ կիրթ է և լուսավորված, պետք է գիտակցի, որ ոչինչ չգիտի: Նման խոնարհությունը, որն ուղեկցվում է Աստծո Խոսքի անկեղծ ուսումնասիրությամբ, կտանի դեպի իսկական գիտելիքը, որը վերափոխում է:

բ. *Ա Հովհաննես 5.20*

ՆՇՈՒՄՆԵՐ. Հիսուս Քրիստոսն է Աստծո Անձի և կամքի մեծագույն հայտնությունը: Աստծո ճանաչողության մեջ իրապես աճելու համար մենք պետք է նայենք Քրիստոսին, «որի մեջ ծածկված են իմաստության և գիտության բոլոր գանձերը» (Կողոսացիս 2.3): Քրիստոսի կյանքով և վարդապետությամբ, ինչպես նաև Սուրբ Հոգով, որ Աստված տվել է ամեն հավատացյալի, մենք կարող ենք ճանաչել Աստծուն և ճշմարիտ ուսմունքը:

գ. *Հովհաննես 14.25, 26*

ՆՇՈՒՄՆԵՐ. Մենք ներառել ենք այս խոստումը, քանի որ այն հաճախ դուրս է բերվում իր սկզբնական համատեքստից և սխալ կիրառություն ստանում: Անմիջապես սկզբնական համատեքստում Հիսուսը խոսում է Սուրբ Հոգու դերի մասին՝ որպես Մեկի, Ով առաջնորդելու էր առաքյալներին ամբողջական ճշմարտության մեջ՝ հատկապես Նոր Կտակարանի գրվածքների վերաբերյալ (Բ Տիմոթեոս 3.16, Բ Պետրոս 1.20, 21): Աստված չի խոստացել ներշնչանք տալ յուրաքանչյուր հավատացյալի, որ նրա ուսմունքն անսխալական լինի, սակայն Նա խոստացել է Սուրբ Հոգու միջոցով առաջնորդել և լուսավորել յուրաքանչյուր հավատացյալի, որ նա կարողանա հասկանալ Աստծուց ներշնչված և առաքյալների կողմից գրված խոսքը (Հովհաննես 16.13, Ա Հովհաննես 2.27):

դ. *Ա Հովհաննես 2.27*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Օծություն» բառը թարգմանված է հունարեն ***chrísma*** բառից և վերաբերում է Սուրբ Հոգուն, Որն ապրում է յուրաքանչյուր հավատացյալի մեջ (Հռոմեացիս 8.9): Սուրբ Հոգին է «Ուսուցիչների Ուսուցիչը», և Նա ունակ է ամեն քրիստոնյայի սովորեցնելու այն, ինչի կարիքը վերջինս ունի, որպեսզի ճանաչի Աստծուն և Նրա կամքը: «Կարիք չունեք, որ որևէ մեկը ձեզ սովորեցնի» արտահայտությունը չի նշանակում, որ եկեղեցիներում ուսուցիչների կարիք չունենք. Եփեսացիս 4.11-ից պարզ երևում է, որ Աստված ուսուցիչների է տվել «սուրբերի կատարելության» համար: Ավելին՝ Հովհաննեսն ինքը սովորեցնում էր նրանց իր նամակով: Այդ արտահայտությունը պարզապես նշանակում է, որ հավատացյալները լիովին կախված չէին ուրիշներից, որոնք պետք է հրահանգավորեին նրանց (Եբրայեցիս 8.11), և հատկապես այն կեղծ ուսուցիչներից, որոնք մտել էին եկեղեցիներ՝ քարոզելով առաքյալների խոսքին հակառակ բաներ: Ամեն հավատացյալ կարող է օգուտ քաղել Աստծո կողմից նման ծառայության մեջ կանչվածների վարդապետությունից և հրահանգներից: Այդուհանդերձ, հավատացյալն ամբողջական կախում չունի մարդկային բացատրություններից: Սուրբ Հոգու միջոցով մենք բոլորս մեր անձնական կյանքում կարող ենք ուսումնասիրել Աստվածաշունչը:

3. Ըստ հետևյալ խոսքերի՝ ինչպե՞ս պետք է արձագանքենք, երբ հանդիպում ենք դժվարհասկանալի աստվածաշնչյան խոսքի կամ ուսմունքի:

ա. *Աղոթել (Մատթեոս 7.7, 8, Հակոբոս 1.5, 6)*

բ. *Խորհրդատվության դիմել (Գործք 8.30, 31, 18.23-26)*

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստվածաշնչի ուսումնասիրության մեջ երկու ծայրահեղություն կա: Առաջին ծայրահեղությունը Խոսքի մեր մեկնաբանությունը ոչ մեկի հետ չքննարկելն ու մյուս անկեղծ հավատացյալների մեկնաբանությունների հետ չհամեմատելն է: Երկրորդ ծայրահեղությունը մյուս հավատացյալների մեկնաբանություններից և այլ աղբյուրներից սովորելն է՝ առանց ինքներս Աստվածաշունչն ուսումնասիրելու: Երկու ծայրահեղություններն էլ հավասարապես վտանգավոր են: Ճիշտ մոտեցումը հավասարակշռությունը պահպանելն է՝ թե՛ Աստվածաշնչի անձնական ուսումնասիրությամբ և թե՛ մեր եզրահանգումներն այլ ժամանակակից հավատացյալների և եկեղեցու պատմության տարբեր հավատացյալների եզրահանգումների հետ համեմատելով:

4. Ունենալով այդքան հրաշալի խոստումներ՝ ինչպիսի՞ն պետք է լինի մեր վերաբերմունքը Աստծո Խոսքի և ուսմունքի նկատմամբ: Ի՞նչ է մեզ սովորեցնում Բ Տիմոթեոս 2.15-ը:

_____

_____

_____

_____

_____

_____

ՄԱՍ ԵՐԿՈՒ

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

Գլուխ 6. Աստվածային հայտնության ընդհանուր նկարագիրը

ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Այս գլխում քննարկելու ենք ***Աստծո հայտնությունը***՝ Աստծո՝ մարդկությանը Իրեն հայտնելու միջոցները: Կսկսենք՝ դիտարկելով հայտնության սահմանումը ընդհանրապես և աստվածային հայտնության սահմանումը՝ մասնավորապես:

Հայտնություն. բացահայտումը նրա, ինչը նախկինում թաքնված կամ անհայտ է եղել: Հունարեն բառը ***apokálupsis***-ն է, որը թարգմանաբար նշանակում «բացահայտում» կամ «արտահայտում»: ***apokalúptō*** բայը նշանակում է «բացել վարագույրը կամ հեռացնել ծածկոցը»:

Աստվածային հայտնություն. Աստծո և Նրա կամքի ինքնարտահայտումն է մարդկանց առջև՝ Աստծո ինքնիշխան և շնորհալի քայլը, որով Նա բացում է Իր և մեր միջև գտնվող վարագույրը, որպեսզի մենք կարողանանք ճանաչել Նրան, Նրա գործերն ու պահանջները: Պատմության ամբողջ ընթացքում աստվածային հայտնությունը տարբեր միջոցներով է դրսևորվել (լսելի ձայն, տեսիլք, հրաշքներ և այլն): Աստծո ամենամեծ հայտնությունը Նրա մարդացումն էր Իր Որդու մեջ: Իսկ ամենամեծ հայտնությունը, որ քրիստոնյան ունի այսօր, Աստվածաշունչն է:

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածային հայտնությունը վճռորոշ նշանակություն ունի մարդու համար, քանի որ մարդը լիովին անընդունակ է իր ջանքերով, խելքով և հոգով Աստծուն ճանաչելու: Մարդը չի կարող գտնել Աստծուն կամ հասկանալ Նրա կամքը, քանի դեռ Աստված առաջինը չի հայտնել Իրեն մարդուն: Այդ անկարողության պատճառը մարդու անկումն է, որը տեղի ունեցավ Ադամի միջոցով: Ադամը ստեղծված էր Աստծո պատկերով, որպեսզի ճանաչեր Աստծուն, հաղորդակցվեր Նրա հետ և իրականացներ Նրա կամքը երկրի վրա: Աստծո պատկերը Ադամի մեջ մեծապես խեղվեց անկումից հետո. նա բարոյապես ապականվեց: Այս խեղումը և բարոյական ապականումը որպես ժառանգություն փոխանցվեցին Ադամի բոլոր հետնորդներին: Այս պատճառով, թեև բոլոր մարդիկ բավականաչափ գիտեն Աստծո մասին, որպեսզի արդարացումներ չունենան, նրանց բարոյական ապականումը և թշնամությունն Աստծո հանդեպ հանգեցնում են նրան, որ մարդիկ անտեսում կամ մերժում են հայտնության բոլոր միջոցները: Մարդու փրկության համար Աստված ոչ միայն պետք է հայտնի Իրեն մարդուն, այլև պետք է աշխատի մարդու սրտի հետ, որպեսզի վերջինս կարողանա հնազանդությամբ արձագանքել այն հայտնությանը, որը ստացել է:

1. Ըստ Հռոմեացիս 3.23-ի՝ ո՞րն է այն հոգևոր ախտը, որն ազդեցություն է ունենում յուրաքանչյուր մարդու վրա: Ի՞նչ է նշանակում «Աստծո փառքից պակասել»:

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Սա Աստվածաշնչի առանցքային խոսքերից է, քանի որ բացատրում է, թե ով է մարդը, որն է մարդու ամենամեծ կարիքը: Մարդը ստեղծված է Աստծո պատկերով (Ծննդոց 1.27) և Աստծո փառքի համար (Եսայիա 43.7): Եվ սակայն մեղքի պատճառով մարդու մեջ խեղվեց Աստծո պատկերը, ինչի հետևանքով մարդն այլևս չունի Աստծուն փառավորելու կամ պատվելու ցանկություն:

2. Ըստ հետևյալ խոսքերի՝ ո՞րն է մարդու մեղքի հետևանքը: Ինչպե՞ս է մարդու մեղավոր կարգավիճակը ազդում Աստծուն ճանաչելու նրա ցանկության և կարողության վրա: Արդյոք մարդը կարո՞ղ է Աստծուն ճանաչել առանց Աստծո հայտնության և մարդու սրտի մեջ Նրա շնորհի աշխատանքի:

   ա. *Հռոմեացիս 1.21, 22*

   բ. *Եփեսացիս 4.17-19*

ԱՍՏԾՈ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ

Խոսքը հստակ սովորեցնում է, որ մարդու հասկացողությունը խեղվել է մեղքի պատճառով, այնքան, որ նա այլևս չի կարող ճանաչել Աստծուն և հասկանալ Նրա կամքը, եթե Աստված առաջինը չգործի Նրա փոխարեն: Այլ կերպ ասած՝ մարդը չի կարող հասնել Աստծուն Իր հասկացողությամբ, ուստի Աստված իջավ դեպի մարդը՝ շնորհի միջոցով Ինքն Իրեն հայտնելով. հայտնությունը կարելի է երկու կարգի բաժանել՝ ***ընդհանուր հայտնություն*** և ***հատուկ հայտնություն***: Ստորև կքննարկենք հայտնության այս երկու կարգերի համառոտ

սահմանումները և օրինակները: Հաջորդ գլխում մանրամասնորեն կքննարկենք ընդհանուր հայտնությունը, իսկ դրան հաջորդող գլխում՝ հատուկ հայտնությունը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

Սա հայտնության այն տեսակն է, որով Աստված Իրեն և Իր կամքը հայտնում է բնության, մարդու ներըմբռնման, խղճի և մարդկային պատմության ընդհանուր ընթացքի միջոցով: Հայտնության այս տեսակը կոչվում է «ընդհանուր» երկու պատճառով.

1. **Այն համընդհանուր է կամ հասանելի բոլոր մարդկանց բոլոր ժամանակներում:** Բոլոր մարդիկ ներըմբռնման միջոցով գիտեն, որ Աստված կա (Հռոմեացիս 1.19), բոլոր մարդիկ ծնվում են խղճմտանքով, որը կա՛մ հաստատում, կա՛մ չի հաստատում նրանց վարքագիծը (Հռոմեացիս 2.15), և բոլոր մարդիկ կարող են տեսնել Աստծուն արարչության մեջ (Սաղմոս 19, Հռոմեացիս 1.19, 20):

2. **Այն ընդհանուր գիտելիք է տալիս Աստծո և Նրա գոյության մասին:** Ընդհանուր հայտնությունից մարդը հասկանում է, որ Աստված կա, և որ Նա, օրինակ, ամենակարող ու արդար է:

ՀԱՏՈՒԿ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

Սա հայտնության այն տեսակն է, որով Աստված ուղղակիորեն մտնում է մարդկանց աշխարհ: Աստված «ներխուժում է» մեր աշխարհ և հայտնում Իրեն մարդկանց՝ գերբնական հաղորդակցության, մատակարարման, Քրիստոսի մարդացման, Խոսքի և այլնի միջոցով: Այս տեսակի հայտնությունը «հատուկ» է կոչվում երկու պատճառով.

1. **Այն որոշակի է և հասանելի է որոշակի մարդկանց որոշակի ժամանակներում:** Նկատի՛ առեք հետևյալ օրինակները. Իսրայելի գերբնական ազատումը Եգիպտոսի գերությունից, Աստծո օրենքի ստացումը Սինա լեռան վրա, Աստծո Որդու մարդացումը, Աստծո ներշնչանքով Նոր Կտակարանի ստեղծումը:

2. **Այն հատուկ գիտելիք է տալիս Աստծո և Նրա կամքի մասին:** Հատուկ հայտնությամբ Քրիստոսով հայտնի դարձավ Աստծո փրկագնման ծրագիրը, և Աստծո կամքի հետ կապված հատուկ պատվիրաններ տրվեցին:

Գլուխ 7. Ընդհանուր հայտնություն

Հիմա, երբ արդեն ընդհանուր անդրադարձ ենք կատարել աստվածային հայտնությանը, հաջորդ երկու գլուխները կնվիրենք դրա երկու տեսակների՝ ընդհանուր և հատուկ հայտնությունների մանրամասն ուսումնասիրությանը: ***Ընդհանուր հայտնությունը*** վերաբերում է նրան, ինչ Աստված հայտնում է Իր մասին բնության, մարդու ներըմբռնման, խղճմտանքի և մարդկության պատմության ընթացքի միջոցով: Հայտնության այս տեսակը կոչվում է «ընդհանուր», քանի որ տրված է բոլոր մարդկանց և Աստծո մասին սահմանափակ կամ ընդհանուր տեղեկություն է տալիս:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Արարչություն

Աստված է բոլոր բաների Արարիչը՝ երկնքի, երկրի և դրա բոլոր բնակիչների: Հետևաբար Արարչի մատնահետքերն Իր արարչության մեջ տեսնելը տարօրինակ չէ: Արարչության մասին մտածելով՝ մարդը կարող է ստանալ Աստծո գոյության և զորության հաստատումը:

1. Ի՞նչ է մեզ սովորեցնում Սաղմոս 19.1-4-ը արարչության միջոցով ստացվող Աստծո հայտնության մասին:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս սաղմոսը գեղեցիկ քնարական տարամտություն է: Երկրորդ խոսքում կարդում ենք, որ օրը օրվան «խոսք է բխում», սակայն երրորդ խոսքում գրված է, որ «լեզու չկա, և խոսք չկա»: Սա հակասություն չէ, այլ զորավոր ճշմատության պերճախոս արտահայտում. թեև ձայն չի լսվում, արարչությունը մշտապես վկայություն է տալիս Աստծո փառքի մասին:

2. Հռոմեացիս 1.19, 20-ում գրված են Սուրբ գրքի ամենակարևոր խոսքերն արարչության միջոցով Աստծո հայտնության մասին: Ի՞նչ է մեզ սովորեցնում Հռոմեացիս 1.19-ը մարդկանց մասին:

   ա. *Որովհետև Աստծո գիտելիքը հ_____ է նրանցում:* «Նրանցում» արտահայտությունը ոչ միայն ցույց է տալիս, որ միակ և ճշմարիտ Աստծո մասին գիտելիքը արտահայտվում է Նրա արարչությամբ, այլև այն, որ Աստված Ինքն Իր մասին գիտելիքը դրոշմել է ամեն մարդու սրտի մեջ: Տիեզերքը, որն Աստված ստեղծել է, հաստատումն է

նրա, ինչ բոլոր մարդիկ արդեն գիտեն. կա միայն մեկ ճշմարիտ Աստված, որ արժանի է երկրպագության և հնազանդության:

բ. *Որովհետև Ա_____ գ_____ հ_____ նրանցում:* Բոլոր մարդկանց հայտնի է Աստծո գոյությունը, քանի որ Աստված դրա մասին հայտնել է ամեն մարդու: Այստեղից պարզ է դառնում, որ բոլոր մարդիկ ունեն Աստծո մասին գիտելիք, քանի որ հենց Աստված է դրել դա մարդկանց մեջ: Այս գիտելիքը մարդկանցից կախված չէ. դա Աստծո գործն է: Եվ խոսքը չի վերաբերում անհասանելի կամ թաքնված գիտելիքին, որը կարելի է ձեռք բերել միայն գերզարգացած տրամաբանություն ունենալու պարագայում. սա բնածին գիտելիք է, որն ունեն բոլոր մարդիկ: Այս պատճառով էլ ոչ մի մարդ արդարացում չունի:

3. Աստված ոչ միայն մարդկանց ***մեջ*** հայտնի է դարձրել Իր գոյությունը, այլև հաստատել է այդ գիտելիքը փառահեղ ձևով: Ըստ Հռոմեացիս 1.20-ի՝ ինչպե՞ս է Աստված հաստատում Իր գոյության մասին գիտելիքը:

ա. *Ս_____:* Մարդուն շրջապատող բնական աշխարհի սքանչելի մանրամասները վկայություն են տալիս Աստծո գոյության մասին: Բնության հրաշալի ու գրեթե անվերջանալի բարդությունների համար չկա այլ տրամաբանական բացատրություն, քան այն, որ դրանք ստեղծվել են Մեկի խելամիտ նախագծով:

4. Ըստ Հռոմեացիս 1.20-ի՝ ի՞նչ կարելի է իմանալ Աստծո մասին՝ Նրա արարչությանը նայելով.

ա. *Նրա ա_____ բ_____:* Թեև Սուրբ գիրքը վկայություն է տալիս այն մասին, որ Աստված Հոգի է (Հովհաննես 4.24), և ոչ ոք չի տեսել Նրան Իր ամբողջ փառքի մեջ (Հովհաննես 1.18), Խոսքը վկայում է նաև, որ Նրա հատկանիշները կարելի է ճանաչել այն ամենի միջոցով, ինչ Նա ստեղծել է:

բ. *Նրա մ_____ զորությունը և Ա_____:* Այստեղ արդեն ավելի մանրամասնորեն նշվում են այն «հատկանիշները», որոնց մասին խոսվում էր վերևում: Պարզ է, որ մեր տիեզերքը հավիտենական չէ և ունեցել է սկիզբ: Ավելին՝ պարզ է, որ մեր տիեզերքը չունի այնպիսի զորություն և իմաստություն, որ ոչնչից ստեղծի ինքն իրեն: Հետևաբար պետք է լինի Արարիչ, Որը եղել է մինչ արարչությունը և որևէ սահմանափակման ենթակա չէ. Աստված, Որը հավիտենական է և ամենազոր՝ Պատճառ առանց պատճառի, Արարիչ առանց արարչի, Մեկը, Ով պարզապես կա առանց սկզբի և վերջի: Աստվածաշունչն արարչության պատմությունը սկսում է հետևյալ խոսքերով՝ «Սկզբում Աստված...» (Ծննդոց 1.1): Սաղմոսների գրքում կարդում ենք. «Դեռ որ սարերը չէին ծնված, և երկիրս ու աշխարհս չէիր ստեղծել. հավիտենից մինչև հավիտյան Դու ես Աստված» (Սաղմոս 90.2):

5. Աստված Իրեն մարդկությանը հայտնում է արարչության միջոցով: Այս հայտնությունը պետք է տանի մարդկանց Աստծո զորությունը ընդունելուն և Նրան որպես Արարչի երկրպագելուն: Այդուհանդերձ, ըստ Հռոմեացիս 1.21-23-ի՝ ինչպե՞ս մարդիկ արձագանքեցին արարչության միջոցով Աստծո հայտնությանը.

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Խոսքում կարդում ենք, որ Ադամից հետո բոլոր մարդիկ ապստամբ և կործանարար արձագանք են տալիս արարչության միջոցով Աստծո հայտնությանը: Աստված Իրեն չի թաքցրել մարդուց. մարդն է թաքնվում Աստծուց՝ միտումնավոր անտեսելով ու նույնիսկ մերժելով Աստծո հայտնությունը, որպեսզի կարողանա շարունակել իր մեղսալից ապստամբությունը:

Մարդու ներըմբռնումը

«Ներըմբռնում» բառը ծագում է լատիներեն ***intueri*** [***in*** = վրա + ***tueri*** = նայել] բառից: Այն վերաբերում է ինչ-որ բան իմանալու կամ հասկանալու կարողությանը՝ առանց բանականությունը գիտակցաբար գործի դնելու: Սա ներհատուկ գիտելիք է, որով օժտում է Աստված, և տրվում է մինչև անձնական ուսումնասիրություն կատարելը կամ սովորելը: Աստծո Խոսքից և փորձից գիտենք, որ մարդն ունի Աստծո մասին բնածին կամ ներըմբռնողական գիտելիք: Յուրաքանչյուր ազգություն, ժողովուրդ և ցեղ աստվածության մասին որոշակի հայեցակարգ ունի, և չնայած այդ հայեցակարգերում Աստծո պատկերի ակնհայտ աղավաղումներին՝ սա ցույց է տալիս, որ աստվածայինի մասին գիտելիքը արմատացած է յուրաքանչյուր մարդու սրտում: Նույնիսկ աթեիստը, որը մերժում է Աստծո գոյությունը, ստիպված է ընդունել, որ այդ եզրահանգմանը նախ եկել է Աստծուն հավատալուց հետո: Մարդու մեջ կա մի բան, որը ճանաչում է աստվածայինն ու հավիտենականը և ձգտում դրան: Աստվածաբան Օգոստինոս Հիպպոսը (մ.թ. 354-430 թթ.) դա հետևյալ կերպ է բացատրում. «Դու մեզ Քեզ համար ես ստեղծել, Տե՛ր, և մեր սրտերը հանգիստ չեն առնում, քանի դեռ Քեզ չեն գտել»[1]:

1. Ի՞նչ է ասում Ծննդոց 1.27-ը մարդու արարչության մասին:

   ա. *Եվ Աստված մարդուն ստեղծեց Իր պ_____, Աստծո պ_____ ստեղծեց նրան:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Խոսքը հռչակում է, որ Աստված Ադամին և Եվային ստեղծեց Իր պատկերով. սրանով մարդկությունն առանձնանում է մյուս բոլոր արարածներից: Քանի որ մարդը ստեղծվեց հենց Աստծո պատկերով, արդյոք չպե՞տք է ակնկալենք, որ նա կունենա իրեն Ստեղծողի մասին բնածին կամ ներըմբռնողական գիտելիք: Հակոբոսը սովորեցնում է, որ չնայած մարդու անկմանը՝ ամեն մարդ շարունակում է կրել Աստծո պատկերը (Հակոբոս 3.9):

2. Հռոմեացիս 1.19-ում ի՞նչ է սովորեցնում Սուրբ գիրքը Աստծո մասին մարդու ներըմբռնման կամ բնածին գիտելիքի վերաբերյալ.

   ա. *Որովհետև Աստծո գիտելիքը հայտնի է ն_____, որ Ա_____ հայտնեց նրանց:*

[1] *Confessions* 1, 1: PL 32, 661.

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքը կարող է կրել երկու հնարավոր իմաստ: Առաջին՝ դա կարող է նշանակել, որ Աստված Իր գոյությունը հայտնի է դարձրել բոլոր մարդկանց այն ամենի միջոցով, ինչ Ինքն արարել է: Երկրորդ՝ դա կարող է նշանակել, որ Աստված Իր մասին ներհատուկ կամ ներըմբռնողական գիտելիք է դրել ամեն մարդու մեջ, ինչը պարզապես հաստատվում է տեսանելի արարչությամբ: Երկրորդ մեկնաբանությունը կարծես ավելի նախընտրելի է: Աստծո մասին գիտելիքը հյուսված է մարդու էության մեջ:

3. Ժողովող 3.11-ում գրված է մարդու՝ որպես Աստծո ստեղծագործության մասին ամենահիասքանչ հռչակումներից մեկը: Ինչպե՞ս է այս խոսքը վկայում Աստծո վերաբերյալ մարդու գիտելիքի մասին.

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հավիտենությունը դրել է նրանց սրտում» արտահայտությունը մարդու՝ որպես Աստծո հատուկ ստեղծագործության ամենագեղեցիկ նկարագրություններից մեկն է: Այն, որ Աստված հավիտենության մասին գիտելիքը դրել է մարդու սրտում, ժամանակավորից դեպի հավիտենականը մղող ազդակ է առաջացնում: Սա է պատճառը, որ եթե նույնիսկ մարդն «ամբողջ աշխարհը ստանա» (Մատթեոս 16.26), դա չի բավարարի նրա սրտի փափագը, որը ժամանակավորից և աշխարհայինից վեր է: Այստեղ կարող ենք կրկնել Օգոստինոսի իմաստուն խոսքերը. «Նա մեզ ստեղծել է Իր համար, և մեր սրտերը չեն հանգստանա, քանի դեռ չեն գտել Նրան»:

4. Մարդը ստեղծվել է Աստծո մասին բնածին գիտելիքով, որի մասին նաև վկայում է արարչության մյուս մասը: Եվ սակայն, ըստ Հռոմեացիս 1.18-ի, ինչպե՞ս է մարդն արձագանքել այդ գիտելիքին:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Բռնել» բառը թարգմանված է հունարեն ***katéchō*** բառից, որ նշանակում է «պահել», «հետ պահել», «զսպել»: Մարդիկ օժտված են Աստծո մասին բնածին կամ ներըմբռնողական գիտելիքով, ինչը հաստատվում է արարչության փառքով և խրթինությամբ: Այդուհանդերձ, Աստծուն փնտրելու փոխարեն ընկած մարդը ճնշում է այդ գիտելիքը՝ փորձելով հանել Աստծուն իր մտքից, որպեսզի կարողանա անկաշկանդ մեղք գործել:

Մարդու խղճմտանքը

Սուրբ գիրքը հաստատում է, որ բոլոր մարդիկ ունեն խղճմտանք՝ բարու և չարի մասին բնածին գիտելիք, ինչպես նաև բարին գործելու հարկադրանք: Խղճմտանքն ավելին է, քան անձնական ցանկությունները կամ հակումները: Այն Աստծո կամքի դրսևորումն է՝ բարոյականության մասին օրենք, որն Աստված դրել է ամեն մարդու սրտում: Թեև մարդն անկում է ապրել, և չնայած աշխարհի անվերջանալի բազմազանություն ունեցող մշակույթներին՝ բոլոր քաղաքակրթություններում կա ընդհանուր համաձայնություն բարու և չարի վերաբերյալ: Խղճմտանքը չմերժելու և սխալ չմեկնաբանելու դեպքում այն կարող է լինել դեպի Աստված և Նրա կամքը տանող փոքրիկ ուղեցույց:

1. Ըստ Հռոմեացիս 2.14, 15-ի՝ ի՞նչ է արել Աստված բոլոր մարդկանց Իրեն հայտնելու համար:

   ա. *Ասված Իր Օ_____ գրել է բոլոր մարդկանց ս_____ (Հռոմեացիս 2.15):* Աստված մարդուն ստեղծել է Իր պատկերով (Ծննդոց 1.26, 27): Թեև այդ պատկերը խիստ աղավաղվել է մեղքի պատճառով, այն ամբողջովին չի կորսվել (Ծննդոց 9.6, Ա Կորնթացիս 11.7, Հակոբոս 3.9): Այդ պատկերի կողմերից մեկն այն է, որ բոլոր մարդիկ ներքուստ գիտեն՝ ինչն է ճիշտ, ինչը՝ սխալ. Աստված Իր օրենքը գրել է (հունարեն՝ ***graptós***, որ նշանակում է «դրոշմել» կամ «փորագրել») ամեն մարդու սրտի մեջ: Նրա օրենքը յուրաքանչյուր մարդու սրտի մեջ կա: Այդ իսկ պատճառով բոլոր մշակույթներն ունեն նույնանման բարոյական չափորոշիչներ, որոնք արտացոլում են Աստծո օրենքը (*օրինակ՝* ասել ճշմարտությունը, ծնողներին պատվել, արգելել սպանությունը, շնությունը, գողությունը և այլն): Այս հայտնությունը ոչ միայն Աստծո գոյության, այլև Նրա արդարության ապացույցն է: Այս պատճառով էլ բոլոր մարդիկ պատասխանատվության են կանչվելու Դատաստանի օրը:

   բ. *Ասված խ_____ է տվել ամեն մարդու (Հռոմեացիս 2.15):* Խղճմտանք (հունարեն՝ ***suneídēsis***) բառը վերաբերում է մարդու մեջ Աստծո պատկերի մեկ այլ կողմին. այն թույլ է տալիս չափել նրա համապատասխանությունը այն օրենքին, որն Աստված գրել է մարդու սրտում: Խղճմտանքը պաշտպանում կամ հաստատում է մարդու քայլերը, երբ վերջինս հնազանդվում է Աստծո օրենքին, և մեղադրում կամ դատապարտում է անհնազանդության ամեն արարք: Ուստի խղճմտանքը ցույց է տալիս մարդու մեղավորությունը և արդար Աստծո հետ հաշտվելու կարիքը:

2. Աստված Իրեն հայտնել է մարդուն արարչության և խղճմտանքի միջոցով: Սա պետք է բերի նրան, որ մարդն ընդունի Աստծուն որպես իր Արարչի և ջանասիրաբար փնտրի Նրան: Ըստ Հռոմեացիս 3.9-12-ի՝ ինչպե՞ս է մարդն արձագանքել Աստծո հայտնությանը արարչության միջոցով:

   _____

   _____

3. Ըստ հետևյալ աստվածաշնչյան խոսքերի՝ ի՞նչ կարող է կատարվել այն մարդու հետ, որը շարունակում է անտեսել կամ մերժել խղճմտանքը:

ա. *Հռոմեացիս 1.28-32*

բ. *Եփեսացիս 4.18, 19*

գ. *Ա Տիմոթեոս 4.2*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Դաղված» արտահայտությունը թարգմանված է հունարեն ***kautēriázō*** բառից, որ նշանակում է «խանձվելու աստիճանի այրված կամ տաք երկաթով դրոշմված»: Երբ մարդու մարմինը խարանվում կամ խանձվում է, այն կորցնում է զգայունությունը կամ զգալու ունակությունը: Նույնը է՛լ ավելի սարսափելի ձևով տեղի է ունենում մարդու խղճմտանքի հետ, երբ այն այնպես է խարանվում, որ կորցնում է զգայունությունը չարի նկատմամբ և առանց ամոթի հանձնվում է դրան:

դ. *Տիտոս 1.15*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Պղծված» բառը թարգմանված է հունարեն ***miaíno*** բառից, որը կարելի է թարգմանել նաև «աղտոտված», «ներկված» կամ «փչացած»: Խղճմտանքը նվեր է Աստծո կողմից, որի մասին հարկավոր է պատշաճ կերպով հոգ տանել: Եթե մարդը շարունակաբար մերժի իր խղճմտանքի ձայնը և իրեն հանձնի մեղքի ցոփությանը, ապա խղճմտանքը կաղտոտվի, կաղավաղվի և կկոշտանա: Այս ճշմարտությունն ապացուցելու կարիք չկա: Բոլոր մշակույթների պատմական գրքերը լի են պղծված կամ այրված խղճմտանքով մարդկանց և հասարակությունների վայրագությունների անհամար օրինակներով:

Մարդկության պատմությունն

Աստված Իրեն հայտնել է մարդկության պատմության տարեգրությունների միջոցով, այնքան հստակ, որ կարող եք հաստատ ասել, որ մարդու պատմությունն Աստծո պատմությունն է մարդկանց աշխարհում: Ժամանակների ամենասկզբից Աստված գործել է աշխարհում և շարժվել դեպի փրկագնման Իր նպատակը: Կարիք չկա շատ երկար խորհելու մարդկության պատմության շուրջ, որպեսզի տեսնենք, որ Նա Իր ինքնիշխան ձեռքով կատարել է Իր կամքն ու ի չիք դարձրել ամեն հակառակվող ուժ կամ գործ: Պատմության միջոցով Աստծո հայտնության ամենամեծ օրինակներից երկուսը Իսրայելի ժողովրդի և եկեղեցու պահպանումն է: Հազարավոր տարիներ Իսրայելն ու եկեղեցին հալածվել են գրեթե մինչև բնաջնջում: Սակայն Աստված միշտ միջամտել է՝ փրկելով երկուսին էլ, և նույնն անում է մինչ օրս:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Ընդհանուր հայտնության միջոցով (արարչություն, ներըմբռնում, խղճմտանք և մարդկության պատմություն) Աստված Իրեն հայտնել է բոլոր մարդկանց: Այդուհանդերձ, միայն ընդհանուր հայտնությունը բավարար չէ երկու հիմնական պատճառով: Առաջին՝ այն սահմանափակ գիտելիք է տալիս: Այն ապացուցում է, որ կա Աստված, Որը ստեղծել է տիեզերքը, որ Նա արդար է, և որ մարդը խախտել է Նրա օրենքը, սակայն այն չի հայտնում Աստծո փրկագնող ծրագրի մասին: Երկրորդ՝ այն սահմանափակ է մարդու էության պատճառով: Ընկած մարդը բարոյապես խեղված արարած է, որը թշնամություն ունի Աստծո Անձի և օրենքի նկատմամբ: Մարդն ինքնավարություն է ցանկանում, որպեսզի ազատություն տա իր բարոյական խեղվածությանը: Հետևաբար նա մերժում է Աստծո մասին բնածին գիտելիքը, որը նրան տրված է, և ողջունում է անտրամաբանական էվոլյուցիան, որպեսզի հեռացնի Աստծուն Իր արարչությունից, մերժում է իր խղճմտանքի թելադրանքը և անտեսում մարդկության պատմության կրկնվող դասերը: Մարդուն փրկելու համար Աստված պետք է ուղղակիորեն միջամտեր մարդու աշխարհին նրանով, ինչը կոչում ենք ***հատուկ հայտնություն***:

Գլուխ 8. Հատուկ հայտնություն

Ընդհանուր հայտնությունը վերաբերում է Աստծո հայտնությանը բնության, մարդու և պատմության մեջ: Հատուկ հայտնությունը վերաբերում է Աստծո անմիջական միջամտությանը մարդկանց աշխարհին: Այն «հատուկ» է կոչվում, քանի որ հատուկ, փրկարար գիտելիք է տալիս Աստծո մասին և հասանելի է եղել որոշակի անձանց որոշակի ժամանակներում և վայրերում: Մեր ուսումնասիրության շրջանակում կուսումնասիրենք հատուկ հայտնության երեք տեսակները՝ գերբնական դրսևորումներ, Աստծո Որդու մարդացումը և Սուրբ գրքի ստեղծումը:

ԳԵՐԲՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ

Պատմության ողջ ընթացքում Աստված մարդկանց հետ խոսել է գերբնական տարբեր միջոցներով: Ստորև ներկայացված են առավել ակնառու միջոցներից մի քանիսը.

1. ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ (հունարեն՝ ***theós*** = Աստված + ***phaínō*** = հայտնվել): Աստվածաշնչյան պատմության մեջ եղել են դեպքեր, երբ Աստված տեսանելի կերպով Իրեն հայտնել է մարդուն. Աբրահամի այցելուն (Ծննդոց 18.1-22), Հակոբի հետ գոտեմարտողը (Ծննդոց 32.22-32) և այն զինվորը, որ հայտնվեց Հեսուին (Հեսու 5.13-15), դրա օրինակներն են: Աստված հայտնվել է նաև Հագարին Տիրոջ հրեշտակի միջոցով (Ծննդոց 16.7-14), Մովսեսին՝ վառվող թփի միջոցով (Ելից 3.16) և Սամսոնի ծնողներին (Դատավորաց 13.17-22): Քանի որ Սուրբ գիրքն ասում, է, որ «Աստծուն [Հորը] ոչ ոք երբեք չի տեսել» (Հովհաննես 1.18), շատ գիտնականներ հավատացած են, որ աստվածահայտնության վերոնշյալ օրինակներում հայտնվել է Երրորդության երկրորդ Անձը՝ Աստծո Որդին: Կարևոր է հասկանալ Հին Կտակարանում աստվածահայտնության տարբեր դեպքերի և Նոր Կտակարանում Աստծո մարդացման տարբերությունը: Աստվածահայտնության օրինակներում Աստված Իրեն ցույց է տվել ***մարդու կերպարանքով***: Իսկ մարդացման դեպքում Աստված իրականում ***դարձել է մարդ*** և ծնվել կույս Մարիամից, ընդ որում՝ հղիացումը Սուրբ Հոգուց էր (Մատթեոս 1.18, 20, Ղուկաս 1.35):

2. ԼՍԵԼԻ ՁԱՅՆ: Սուրբ գրքում տեսնում ենք դեպքեր, երբ Աստված Իր ծառաների հետ խոսել է լսելի ձայնով: Հին Կտակարանում Աստված «երես առ երես» խոսել է Մովսեսի հետ (Ելից 33.11, Թվոց 12.5-8), թվացյալ մարդկային ձայնով կանչել է Սամուելին (Ա Թագավորաց 3), մեղմ զեփյուռի նմանվող ձայնով խոսել է Եղիսեի հետ (Գ Թագավորաց 19.11-13): Նոր Կտակարանում Աստված լսելի ձայնով խոսել է՝ վկայություն տալով Հովհաննես Մկրտչին Հիսուսի մասին (Մատթեոս 3.16, 17), առաքյալներին (Մատթեոս 17.5) և ամբոխին (Հովհաննես 12.28-30):

3. ՏԵՍԻԼՔՆԵՐ ԵՎ ԵՐԱԶՆԵՐ: Սուրբ գրքում Աստված օգտագործում է երազները և տեսիլքները՝ Իր Խոսքը կամ կամքը Իր ծառաներին հայտնելու համար: Երազները և տեսիլքները աստվածայինի փոխանցումն են մի շարք պատկերների կամ մտքերի միջոցով: Նման հաղորդակցություն կարող է տեղի ունենալ, երբ մարդը քնած է, արթուն կամ տրանսի նմանվող վիճակում: Կարևոր է նկատի առնել, որ Սուրբ գիրքը զգուշացնում է նաև, որ ոչ

բոլոր երազներն ու տեսիլքներն են Աստծուց (Երկրորդ օրինաց 13.1-5): Պողոս առաքյալը զգուշացնում է Կողոսիայի եկեղեցուն, որ չտարվեն տեսիլքներով (Կողոսացիս 2.18):

4. ՀՐԵՇՏԱԿՆԵՐ: «Հրեշտակ» բառը թարգմանված է եբրայերեն ***malak*** և հունարեն ***ág-gelos*** բառերից: Երկու դեպքում էլ այն բառացիորեն նշանակում է «սուրհանդակ». ուստի տարօրինակ չէ, որ Աստված օգտագործում է նրանց Իր կամքն Իր ծառաներին հայտնելու համար: Ինչպես գերբնական հաղորդակցության մյուս միջոցները, այնպես էլ հրեշտակների հայտնվելը հազվադեպ է տեղի ունենում՝ միայն մեծ կարիքի դեպքում կամ ծայրահեղ իրավիճակներում: Կարևոր է նշել նաև, որ Սուրբ գիրքը զգուշացնում է, որ ոչ բոլոր հրեշտակային այցելություններն են Աստծուց: Սատանան կարող է լուսո հրեշտակի կերպարանք առնել՝ խաբելու նպատակով (Բ Կորնթացիս 11.14): Պողոս առաքյալը զգուշացրել է Կողոսիայի եկեղեցուն, որ չտարվեն հրեշտակներով (Կողոսացիս 2.18):

5. ՀՐԱՇՔՆԵՐ: Հրաշքը Աստծո արտասովոր գործն է, որը գերազանցում է բնականը: Հրաշք-ների աստվածաշնչյան հայեցակարգը ներառում է տարբեր տեսակի իրադարձություններ, ինչպիսիք են, օրինակ՝ քաղաքի կործանումը (Ծննդոց 19.24, 25), ծովը կիսելը (Ելից 14.21, 22), երկաթի կտորի՝ ջրի երեսին բարձրանալը (Դ Թագավորաց 6.6), կույրի տեսողության վերականգնումը (Հովհաննես 9.1-12) կամ մահացածի հարությունը (Հովհաննես 11.38-44): Ինչ վերաբերում է աստվածային հայտնությանը, ապա հրաշքի նպատակը Աստծուն և Նրա կամքը մարդուն հայտնելն է (Ելից 10.1, 2) կամ հաստատելը, որ սուրհանդակը կամ ուղերձը Աստծուց էր (Ելից 4.1-9, Հովհաննես 7.31, 10.38): Ինչպես գերբնական հաղորդակցության մյուս միջոցների դեպքում, այստեղ էլ Աստվածաշունչը զգուշացնում է, որ ոչ բոլոր հրաշքներն են Աստծուց: Սատանան և նրա կեղծ մարգարեները ևս կարող են հրաշքներ գործել՝ խաբելու նպատակով (Ելից 7.8-12, Մատթեոս 7.21-23, Հայտնություն 19.20):

ԱՍՏԾՈ ՈՐԴՈՒ ՄԱՐԴԱՑՈՒՄԸ

Աստծո և Նրա կամքի ամենամեծ հայտնությունը մարդկության պատմության մեջ Իր Որդի Հիսուս Քրիստոսի մարդացումն էր: «Մարդացում» բառը (լատիներեն՝ ***in*** = մեջ + ***carn*** = մարմին) վերաբերում է մարմին դառնալու գործողությանը կամ նշանակում է մարդկային մարմին ստանալ: Քրիստոնեական ուսմունքի մեջ «մարդացում» ասվածն այն մասին է, որ Աստծո Որդին թողել է Իր փառքը երկնքում, ծնվել կույսից (ընդ որում՝ կույսը հղիացել է Սուրբ Հոգուց) և ապրել այս երկրի վրա որպես Հիսուս Նազովրեցի՝ Աստծո Որդի և Մարդու Որդի: Ամբողջովին լինելով Աստված՝ Նա կատարելապես ներկայացնում էր Աստծո ամբողջ էությունը: Ամբողջովին լինելով մարդ՝ Նա եկավ մարդկանց մոտ մեզ հասկանալի կերպով:

1. Եբրայեցիս 1.1-3-ը Հիսուս Քրիստոսի Անձին և գործին վերաբերող աստվածաշնչյան ամենակարևոր խոսքերից է: Կարդացե՛ք խոսքն այնքան, որ դրա բովանդակությունը ամրապնդվի ձեր մեջ, այնուհետև պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

   ա. *Ըստ 1-ին խոսքի՝ ինչպե՞ս էր նախկինում Աստված խոսում Իր ժողովրդի հետ.*

   _____

   _____

   _____

բ. *Ըստ 2-րդ խոսքի՝ ինչպե՞ս է Աստված խոսում Իր ժողովրդի հետ այս՝ վերջին օրերում.*

_____

_____

_____

գ. *Ըստ 3-րդ խոսքի՝ ինչո՞ւ է Հիսուսը Աստծո և Նրա կամքի ամենակատարյալ կամ ամբողջական հայտնությունը.*

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Նրա փառքի լույսը» և «Նրա էության նկարագիրը» արտահայտությունները կարող են համապատասխանաբար թարգմանվել նաև որպես «Նրա փառքի կատարյալ արտացոլանքը» և «Նրա էության ճշգրիտ արտահայտումը»: Սա Քրիստոսի աստվածությունը հաստատող անհերքելի պնդում է: Քանի որ Նա Աստված է, Նա է Աստծո ամենակատարյալ և ամբողջական հայտնությունը:

2. Հովհաննես 1.1-ին և 14-րդ խոսքերում կարող ենք կարդալ Աստծո Որդու և Նրա մարդացման մասին Աստվածաշնչի ամենակարևոր հռչակումներից մի քանիսը: Ուշադրությամբ կարդացե՛ք այդ երկու խոսքերը և պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

ա. *Ի՞նչ անուն կամ կոչում է տրված Աստծո Որդուն առաջին խոսքում.*

(1) Բ_____: Հունարեն ***lógos*** բառը, որը կարելի է թարգմանել նաև որպես «խոսք» կամ «բառ»: Հիսուսն Աստծո «Խոսքն» է, Նրա Անձի և կամքի կատարյալ փոխանցումը, հայտնությունը և խոսույթը:

բ. *Որո՞նք են մյուս մեծ ճշմարտությունները Աստծո Որդու մասին, որ մեզ հաղորդվում են 1-ին խոսքում.*

(1) Նա գոյություն ուներ ս_____: Նա հավիտենական Աստված է: Նա կար մինչ աշխարհի սկիզբը և ներկա էր, երբ աշխարհը ստեղծվեց: Նա չունի սկիզբ և վերջ:

(2) Նա միշտ Ա_____ մոտ էր: Որդին Հորը հավասարազոր է և գոյություն է ունեցել ամբողջ հավիտենության ընթացքում՝ Նրա հետ կատարյալ հաղորդակցության մեջ, սակայն Նա նաև Հորից զատ Անձ է:

(3) Նա Ա_____ էր: Սա Որդու աստվածության մասին ամենահստակ և ամենազորավոր հռչակումներից է: Նա ունի նույն Աստծո էությունը: Եվ բառի բուն ու ամբողջական իմաստով Աստված է:

գ. *Ըստ 1-ին խոսքի՝ Աստծո Որդին Երրորդության երկրորդ Անձն է՝ Հորն ու Հոգուն հավասար, սակայն նաև Նրանցից զատ: Ըստ Հովհաննես 1.14-ի՝ Որդին ինչպե՞ս Աստծուն հայտնեց մարդկանց.*

(1) Եվ Բանը մ_____ եղավ և բ_____ մեր մեջ: Հիսուսն Աստծո կատարյալ հայտնությունն է երկու պատճառով: ***Առաջին՝*** Նա Աստված է՝ Նրա փառքի կատարյալ արտացոլանքը և Նրա էության ճշգրիտ նկարագիրը: ***Երկրորդ՝*** Նա դարձավ մարդ՝ առանց Իր աստվածությունը թողնելու. Որդին մարդկային մարմնի մեջ մտավ և դարձավ իսկական մարդ: «Բնակվել» բառը թարգմանված է հունարեն ***eskēnōsen*** բառից, որ նշանակում է «վրան կանգնեցնել» կամ «վրանում բնակվել»: Հին Կտակարանում Աստծո ներկայությունը մարդկանց շրջանում վրանի կամ տապանակի մեջ էր (Ելից 33.9, 10): Իր մարդացմամբ Աստված, իսկական մարդու մարմին առած, «բնակվեց» մարդկանց մեջ:

3. Ըստ Ա Հովհաննես 1.1-ի՝ որքա՞ն անձնական և հասանելի էր Հիսուս Քրիստոսի Անձով Աստծո հայտնությունը.

ա. *Մարդիկ լ_____ Նրան իրենց ականջներով:*

բ. *Մարդիկ տ_____ Նրան իրենց աչքերով:*

գ. *Մարդիկ ն_____ Նրան:* Այս նախադասությունն ավելորդ չէ: «Նայեցին» խոսքը թարգմանված է հունարեն ***theáomai*** բառից, ինչը կարելի է թարգմանել նաև որպես «դիտել», «ուսումնասիրել» կամ «հետևել»: Սա կրում է ուշադիր դիտարկելու կամ զննելու իմաստը: Մարդիկ պարզապես աչքերը չսահեցրին մարդացած Որդու վրայով, նրանք ուշադրությամբ հետևեցին և քննեցին Նրա կյանքը:

դ. *Մարդիկ շ_____Նրան իրենց ձեռքերով:* Այս պնդումը առանցքային է Քրիստոսի մարդացման և հարության առնչությամբ: Նա եկավ իսկական մարդկային մարմնով և հարություն առավ նույն իսկական մարմնով (Հովհաննես 20.25-28):

4. Եզրափակելով՝ նշե՛ք, թե ինչ են մեզ սովորեցնում Աստվածաշնչի հետևյալ խոսքերն Աստծո հայտնության մասին Իր Որդու միջոցով: Ինչպե՞ս են այդ խոսքերն ապացուցում, որ Նա էր և է բոլոր աստվածային հայտնություններից ամենամեծը.

ա. *Հովհաննես 1.18*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Պատմել» բառը թարգմանված է հունարեն ***exēgéomai*** բառից, որ նշանակում է «բացատրել, մանրամասնել, շարադրել, հայտնի դարձնել կամ բացահայտել»:

բ. *Հովհաննես 14.8, 9*

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Տեր Հիսուս Քրիստոսը Աստծո ամենամեծ հայտնությունն է և Նրա գոյության ու աշխարհի մեջ ներգրավվածության անվիճելի ապացույցը: Այն ամենը, ինչ կարելի է իմանալ Աստծո մասին, դրսևորվում է Նազովրեցի Հիսուսում: Ոչ մի այլ ուսուցիչ կամ մարգարե չի կարող ոչինչ ավելացնել Աստծո այն հայտնության վրա, որը տրվել է Հիսուսով: Նա է Աստված, Որը հայտնվել է մեզ մարդու կերպարանքով (Կողոսացիս 2.9): Նա է Աստծո Խոսքը, որ մարմին է դարձել (Հովհաննես 1.1, 14): Հետևաբար մենք ճիշտ կվարվենք, եթե հնազանդվենք Մատթեոսի 17.5-ում մեզ տրված Աստծո հորդորին՝ «Դա է Իմ սիրելի Որդին, Որին Ես հավանել եմ. Դրա՛ն լսեք»:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

Այս դասից սովորեցինք, որ պատմության ողջ ընթացքում Աստված Իրեն և Իր կամքը հայտնել է տարբեր գերբնական հաղորդակցությունների միջոցով, ինչպիսիք են աստվածահայտնությունը, տեսիլքները, երազները, լսելի ձայնը, հրեշտակները և հրաշքները: Մենք նաև իմացանք, որ երկու հազար տարի առաջ Աստված մարդուն տվեց Իր և Իր կամքի ամենամեծ հայտնությունը Հիսուս Քրիստոսի Անձի միջոցով: Այդուհանդերձ, մնացել է ամենավճռական հարցերից մեկը.

Ինչպե՞ս է Աստված մեզ հետ խոսում այսօր՝ քսանմեկերորդ դարում:

Որտեղի՞ց գիտենք, որ այն, ինչ տեսնում, լսում և զգում ենք, ճշմարիտ է: Ո՞ր հեղինակության վրա կարող ենք հիմնել մեր համոզմունքները և գործողությունները: Պատասխանը գրված է Բ Տիմոթեոս 3.16, 17-ում.

«Ամեն Գիրք աստվածաշունչ է և օգտակար՝ վարդապետության և հանդիմանության և ուղղելու և արդարության խրատելու համար, որ Աստծո մարդը կատարյալ լինի՝ բոլոր բարի գործերի համար պատրաստված»:

Աստվածաշունչն է քրիստոնյայի կյանքի ամենաբարձր հեղինակությունը և բոլոր հայտնությունների, վերապրումների, վարդապետությունների և գաղափարների վավերացման չափորոշիչը: Ցանկացած հայտնություն, վերապրում, վարդապետություն, գաղափար, վերաբերմունք կամ գործողություն, որը հակասում է կամ չի համապատասխանում աստվածաշնչյան վարդապետությանը, պետք է մերժվի: Աստվածաշունչն է քսանմեկերորդ դարի քրիստոնյայի ամենակարևոր և օգտակար հայտնությունը: Ահա այս պատճառով մենք պետք է հետևենք և հնազանդվենք Պողոս առաքյալի հորդորին՝ գրված Բ Տիմոթեոս 2.15-ում.

«Ջա՛նք արա, որ քո անձը ընտիր կանգնեցնես Աստծո առաջ իբր մի մշակ առանց ամոթի, որ ճշմարտության խոսքն ուղիղ մատակարարես»:

Գլուխ 9. Աստվածաշնչի արժանահավատությունը

Այս գլխում մենք կդիտարկենք Աստվածաշնչի արժանահավատությունը որպես Աստծո անսխալական գրավոր հայտնություն մարդուն:

Ի՞ՆՉ Է ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

«Աստվածաշունչ» բառը ծագում է հունարեն ***biblía*** բառից, որը բառացի թարգմանվում է «գրքեր»: Սա վերաբերում է Հին և Նոր Կտակարանների վաթսունվեց գրքերի հավաքածուին, որը քրիստոնեական եկեղեցին ընդունում է որպես Աստծո և Նրա կամքի ինքնահայտնությունը մարդուն՝ գրված Աստծո ներշնչմամբ:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ՝ ՆԵՐՇՆՉՎԱԾ ԱՍՏԾՈՒՑ

Քրիստոնյաները հավատում են, որ Աստվածաշունչը Աստծո հայտնությունն է մարդուն, և որ այն Աստծուց է բխում: Այդուհանդերձ, սա հանգեցնում է առանցքային մի քանի հարցերի: Եթե Աստվածաշունչն Աստծուց է, ապա ինչպե՞ս է այն գրվել: Եթե աստվածաշնչյան ճշմարտությունները գրվել են մարդկանց միջոցով, ապա ինչպե՞ս կարող ենք համոզված լինել, որ նրանք սխալներ թույլ չեն տվել գրելիս: Այս հարցերին պատասխանելու համար մենք մատնանշում ենք Աստծո իմաստությունը, զորությունը և կանխագիտությունը՝ մարդկանց առաջնորդելու Իր հայտնությունը գրի առնելու և պահպանելու գործում: Քրիստոնյաները հավատում են, որ Աստվածաշունչը ***ներշնչված է*** Աստծուց: «Աստվածային ներշնչանք» ասվածը վերաբերում է Սուրբ Հոգու գերբնական ազդեցությանը այն մարդկանց վրա, որոնք գրել են Սուրբ գիրքը, ինչի արդյունքում ստացվել է Աստծո բացարձակապես արժանահավատ գրավոր հայտնությունը:

1. Սուրբ գրքի արժանահավատության և աստվածային ծագման մասին ամենավճռորոշ խոսքերից մեկը գրված է Բ Տիմոթեոս 3.16-ում: Ի՞նչ է մեզ սովորեցնում այս խոսքը.

   ա. *Ա_____ Գիրք ա_____ է:* «Աստվածաշունչ» բառը թարգմանված է հունարեն ***theópneustos*** բառից, ինչը բառացիորեն նշանակում է «Աստծուց ներշնչված»: Սուրբ գրքի խոսքերը ներշնչված են Աստծուց: Կարևոր է նշել, որ Աստծուց ներշնչված լինելու ուսմունքը վերաբերում է ***ամբողջ*** Սուրբ գրքին: Աստվածաշնչի բնագիր ձեռագրերում գրված ամեն խոսք ներշնչված է Աստծուց և կրում է Աստծո Խոսքի լիարժեք հեղինակությունը:

2. Ի՞նչ է մեզ սովորեցնում Բ Պետրոս 1.21-ը Աստվածաշնչի ներշնչման և դրա ստեղծման գործում մարդու դերակատարման մասին.

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Շարժված» բառը թարգմանված է հունարեն ***phérō*** բառից, որ նշանակում է «տանել» կամ «կրել»: Աստվածաշունչը ներշնչված է Աստծուց և գրավոր տեսքով հաղորդվել է մարդկանց միջոցով, որոնք «շարժվել» կամ «առաջնորդվել են» Սուրբ Հոգով: Հիմնվելով այս ճշմարտությունների վրա՝ կարող ենք անել հետևյալ երկու կարևոր դիտարկումները. (1) մարդն է գրի առել Աստվածաշունչը, ուստի յուրաքանչյուր հեղինակի անհատականությունն ու ոճը ակնհայտ են, և (2) Սուրբ Հոգին է հեղինակներին ուղղորդել, հետևաբար Աստվածաշունչը Աստծուց ներշնչված և Նրա անսխալական հայտնությունն է մարդուն:

3. Մեր ուսումնասիրության այս հատվածը եզրափակելու համար կքննարկենք վերջին հարցը: Ըստ Մատթեոս 4.4-ի՝ ի՞նչ կարծիք ուներ Հիսուս Քրիստոսը Սուրբ գրքի՝ Աստծուց ներշնչված լինելու մասին.

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Վերոնշյալ խոսքերից սովորեցինք, որ Աստվածաշունչը ներշնչվել է Աստծուց և գրվելով Սուրբ Հոգով առաջնորդված մարդկանց միջոցով՝ փոխանցվել է մեզ գրավոր կերպով:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոնյայի համար մեծ կարևորություն ունի այն փաստը, որ Աստվածաշունչը Աստծուց ներշնչված Նրա անսխալական Խոսքն է: Սա նշանակում է, որ Աստվածաշունչը լիովին արժանահավատ է, դրանում հիշատակված խոստումներին Աստված միշտ հավատարիմ է, իսկ պատվիրաններն ու սկզբունքները Աստծո իմաստությունն են: Իմաստուն և հնազանդ հավատացյալն իր կյանքը կարող է կառուցել՝ հիմնվելով դրանում գրված ամեն խոսքի վրա:

1. Ի՞նչ են մեզ սովորեցնում հետևյալ խոսքերը Աստծո և Նրա Խոսքի արժանահավատության մասին:

   ա. *Թվոց 23.19*

   _____

   _____

   _____

   _____

   _____

բ. *Հեսու 23.14*

գ. *Սաղմոս 119.137, 138*

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո բնավորությունը կամ էությունը որոշվում է Նրա գործերի բնույթով: Քանի որ Աստված արդար և հավատարիմ է, ապա կարող ենք նույնն ակնկալել այն Խոսքից, որը Նա տվել է մեզ:

2. Աստծո Խոսքի արժանահավատությունը ուղղակիորեն կապված է դրա հավիտենական (այն մնում է հավիտյան) և անփոփոխելի (այն չի փոխվում) լինելու հետ: Եթե Աստծո Խոսքը հավիտենական չլիներ, կամ եթե դրանում գրված խոստումները և հրամանները փոփոխության ենթակա լինեին, ապա այն արժանահավատ չէր լինի: Ի՞նչ են մեզ սովորեցնում հետևյալ խոսքերը Աստծո Խոսքի հավիտենական, անփոփոխելի և արժանահավատ լինելու մասին.

ա. *Սաղմոս 119.89, 90*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հաստատ» արտահայտությունը թարգմանված է եբրայերեն ***natsab*** բառից, ինչը կարող է թարգմանվել նաև որպես «անշարժ ամրացված» (ESV) կամ «ապահով կանգնած» (NET): «Հավիտյան հաստատ է» արտահայտությունը կարող է թարգմանվել նաև որպես «Դու հրամայել ես, որ Քո կանոնները հավիտյան մնան» (NET): Նկատի՛ առեք, որ 90-րդ խոսքում Աստված վստահեցնում է, որ հավատարիմ է Իր գործերում և Խոսքում:

բ. *Սաղմոս 119.152*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հաստատել» բառը թարգմանված է եբրայերեն ***yasad*** բառից, ինչը կարելի է թարգմանել նաև որպես «հիմնել» կամ «ամրացնել»: Այս խոսքը վերաբերում է հիմք գցելուն, որի վրա շենք է կառուցվում:

գ. *Եսայիա 40.6-8*

դ. *Ղուկաս 21.33*

3. Սուրբ գրքի արժանահավատության հետ ուղղակիորեն կապված մեկ այլ ճշմարտություն է այն, որ Խոսքն անսխալական է՝ սխալմունքից ազատ: Ի՞նչ են մեզ սովորեցնում հետևյալ խոսքերը նշված ճշմարտության մասին.

ա. *Սաղմոս 12.6*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մաքուր» բառը թարգմանված է երբրայերեն ***tahor*** բառից, ինչը կարելի է թարգմանել նաև «ջինջ»: Աստվածաշնչում յոթ թիվը ամբողջականության կամ կատարելության նշան է: Յոթ անգամ մաքրված արծաթը ամենամաքուր արծաթն է:

բ. *Սաղմոս 119.140*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մաքրված» բառը թարգմանված է եբրայերեն ***tsaraph*** բառից, որ նշանակում է «հալեցնել», «զտել» կամ «փորձել»: Աստծո Խոսքը «շատ մաքուր» է, ինչպես կատարյալ զտված, անբիծ արծաթը կամ ոսկին:

գ. *Առակաց 30.5, 6*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ամեն» բառն այստեղ խիստ կարևոր է: Աստվածաշունչը ոչ թե Աստծո Խոսք է ***պարունակում***, այլ Աստվածաշունչը Աստծո Խոսքն ***է***: Աստվածաշունչը ոչ թե մասամբ, այլ ամբողջությամբ է ներշնչված Աստծուց: «Փորձված» բառը թարգմանված է եբրայերեն ***tzaraph*** բառից, որ նշանակում է «զտված»: Նույն այդ բառը կիրառված է Սաղմոս 12.6-ում. «Ինչպես արծաթ, որ բովի մեջ երկրի վրա սրբված **[*tzaraph*]** և յոթն անգամ պարզված է»:

4. Սաղմոս 19.7-9-ում ներկայացված են Աստծո Խոսքի վեց տարբեր հատկանիշներ, որոնք ցույց են տալիս դրա արժանահավատությունը: Նշե՛ք այդ հատկանիշները հետևյալ վարժության մեջ:

   ա. *Տիրոջ օրենքը ա_____ է (խ. 7):* Թարգմանված է եբրայերեն ***tamin*** բառից, որը նաև նշանակում է «ամբողջականություն», «լիարժեքություն», «բավարարություն»: Թեև բնությունը հայտնում է Աստծո փառքը (խխ. 1-6), Սուրբ գիրքն Աստծո առավել ամբողջական հայտնությունն է:

բ. *Տիրոջ վկայությունը ճ_____ է (խ. 7):* Թարգմանված է եբրայերեն ***aman*** բառից, որ նշանակում է «վստահել»: Այն է՝ Տիրոջ վկայությունները լիովին արժանի են վստահության. դրանց վրա կարելի է հենվել:

գ. *Տիրոջ պատվիրանները ու_____ են (խ. 8):* Թարգմանված է եբրայերեն ***yashar*** բառից, որ նշանակում է «հարթ», «շիտակ» կամ «ուղղաձիգ»: Տիրոջ պատվիրանները մարդուն առաջնորդում են արդարության ուղիղ արահետներով: «Քո բոլոր ճանապարհներում ճանաչի՛ր Նրան, և Նա կուղղի **[*yashar*]** քո ճանապարհները» (Առակաց 3.6):

դ. *Տիրոջ հրամանները մ_____ են (խ. 8):* Թարգմանված է եբրայերեն ***bar*** բառից, որ նշանակում է «մաքրություն» և «անարատություն»: Աստծո պատվիրանները մաքուր են, քանի որ Աստծուց են բխում, իսկ Աստված ամբողջովին սուրբ ու արդար է:

ե. *Տիրոջ վախը ս_____ է, մնում է հավիտյան (խ. 9):* Այստեղ Աստծո Խոսքը նշվում է որպես Տիրոջ երկյուղ, հավանաբար որովհետև այն սովորեցնում է մեզ երկյուղել կամ ակնածել Աստծուց, իսկ հնազանդությունը Խոսքին Աստծո հանդեպ մեր ակնածանքը դրսևորելու առաջնային կերպն է: «Սուրբ» բառը թարգմանված է եբրայերեն ***tahor*** բառից, որ նշանակում է «մաքուր» և «ջինջ»: «Տիրոջ խոսքերը մաքուր **[*tahor*]** խոսքեր են, ինչպես արծաթ, որ բովի մեջ երկրի վրա սրբված և յոթ անգամ պարզված է» (Սաղմոս 12.6):

զ. *Տիրոջ դատաստանները ճ_____են և ա_____ (խ. 9):* «Տիրոջ դատաստաններ» ասելով՝ նկատի են առնված Նրա պատվիրանները: Այդ արտահայտությունը կարող է թարգմանվել նաև որպես «Տիրոջ կանոններ» (ESV) կամ «Տիրոջ կողմից տրված դատաստաններ» (NET): «Ճշմարիտ» բառը թարգմանված է եբրայերեն ***’emet*** բառից, որ նշանակում է «ամրություն», «հավատարմություն» և «ճշմարտություն»: «Արդար» բառը թարգմանված է եբրայերեն ***tzadeq*** բառից, ինչը նշանակում է «ուղիղ» և «անաչառ»: Տիրոջ դատաստանները արդար են, քանի որ դրանք հնչում են արդար Աստծո բերանից և դեպի արդարություն են տանում բոլոր նրանց, ովքեր հետևում են դրանց:

ԱՄՓՈՓՈՒՄ

Աստվածաշունչը Աստծո անսխալական խոսքն է և բացարձակ հեղինակություն է քրիստոնյայի համար, որը փափագում է ճանաչել Աստծուն և կատարել Նրա կամքը: Ոչ մի այլ գիրք, վարդապետություն, փիլիսոփայություն կամ ավանդույթ չպետք է Աստվածաշնչից վեր կամ նույնիսկ Աստվածաշնչին հավասար դասվի: Աստվածաշունչը բացարձակապես յուրօրինակ է և Աստծո կատարյալ հայտնությունն է մարդուն:

Գլուխ 10. Աստվածաշնչի համառոտ պատմությունը

Այս գլխում կքննարկենք Սուրբ գրքի՝ հազար հինգ հարյուր տարիների ընթացքում (մ.թ.ա. տասնչորսերորդ դարից մինչև մ.թ. առաջին դարը) հասարակության տարբեր խմբերին պատկանող ավելի քան քառասուն հեղինակների կողմից գրված վաթսունվեց գրքերի համառոտ պատմությունը: Աստվածաշնչի ստեղծման և կազմման պատմությունը Աստծո նախախնամության և ինքնիշխանության ամենազարմանալի դրսևորումներից է: Դա Նրա աշխատանքն է՝ սկզբից մինչև վերջ՝ սկսած գրողներին ներշնչանք տալուց մինչև նրանց գրվածքները մինչ ներկա ժամանակները և հավիտյան պահպանելը: Ինչպես Հիսուսն է հռչակել. «Երկինքը և երկիրը կանցնեն, բայց Իմ խոսքերը չեն անցնի» (Մարկոս 13.31):

ԲՆՕՐԻՆԱԿ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Որպես Աստվածաշնչի ստեղծման առաջին քայլ՝ Աստված թելադրեց մարդկանց Իր խոսքերը, և վերջիններս գրի առան դրանք, ու կազմվեց այն, ինչ մենք այսօր կոչում ենք բնօրինակ ձեռագրեր: Սկզբում Սուրբ գիրքը չի գրվել անգլերենով, շքեղ կաշվե կազմով պատված ոսկեզօծ եզրերով նուրբ թղթի վրա: Բնօրինակ ձեռագրերը հաճախ գրվել են կոշտ նյութերի վրա այնպիսի լեզուներով, որոնց այսօր չեն տիրապետում մեզնից շատերը:

ԲՆՕՐԻՆԱԿ ՆՅՈՒԹԵՐԸ

Աստվածաշնչի հեղինակները տարբեր նյութեր են օգտագործել Սուրբ Հոգու թելադրանքով ստացված Աստծո Խոսքը պահպանելու համար:

<u>ՔԱՐ</u>

Տասը պատվիրանները գրվել են քարե տախտակների վրա Աստծո մատով (Ելից 24.12, 31.18, 32.15, 16, 34.1, 28, Երկրորդ օրինաց 4.13, 5.22): Այն ժամանակ բառերը քարի վրա սայրի միջոցով էին փորագրվում:

<u>ՓԱՅՏ</u>

Սայրն օգտագործվում էր նաև փայտի վրա խոսքեր փորագրելու համար: Հաճախ փորագրումներն արվում էին մոմապատ տախտակների վրա, այնուհետև մաքրում էին մոմը և նույն տախտակի վրա մեկ այլ ուղերձ գրում (Եսայիա 8.1, 30.8, Ամբակում 2.2, Ղուկաս 1.63):

<u>ՊԱՊԻՐՈՒՍ</u>

Պապիրուսը պատրաստվում էր ճեղքված շաքարեղեգից, որի երկու մասերը իրար վրա էին սեղմում այնպես, որ կոշտ թղթանման նյութ ստացվեր: Այնուհետև դրանք իրար էին միացնում՝ ստանալով մոտ քսան էջից բաղկացած գլան: Պապիրուսի վրա գրում էին բարակ եղեգով կամ թանաքով: Պապիրուսի մասին հիշատակումներ կարող ենք տեսնել Բ Հովհաննես 12-ում, Բ Տիմոթեոս 4.13-ում և Հայտնություն 5.1-ում:

Մագաղաթ

Մագաղաթը պատրաստվում էր այծի կամ ոչխարի հաստ կաշվից: Աստծո Խոսքը սովորաբար գրվում էր հենց մագաղաթի վրա, որին փոխարինելու եկավ պապիրուսը մ.թ.ա. մոտ 200 թվականին: Մագաղաթի մասին հիշատակումներ կարող ենք տեսնել Բ Տիմոթեոս 4.13-ում: Նոր Կտակարանը մագաղաթի վրա գրելու համար անհրաժեշտ կլիներ հիսունից վաթսուն ոչխար, ինչը շատ թանկ կարժենար:

ԲՆԱԳՐԻ ԼԵԶՈՒՆԵՐԸ

Մեր Աստվածաշունչները թարգմանված են բնօրինակ ձեռագրերից, որոնք գրվել էին հեղինակների կողմից կիրառելի լեզուներով: Հին Կտակարանը հիմնականում գրվել է եբրայերեն, իսկ Նոր Կտակարանը՝ հունարեն:

Եբրայերեն

Հին Կտակարանը գրվել է եբրայերեն՝ բացառությամբ մի քանի հատվածների, որոնք գրվել են արամերեն[2]: Եբրայերենը սեմական լեզու է, որն ունի քսաներկու բաղաձայն: Սկզբում այն գրվել է առանց ձայնավորների. այնուհետև մի խումբ հրեա գիտնականներ, որոնց կոչում էին ***մասորեթներ*** (կամ ավանդապաշտներ), ավելացրին ձայնավորներ, որպեսզի բառերը հեշտ արտասանվեին (մ.թ. 600-950 թթ.): Եբրայերենի քերականությունը հեշտ է, իսկ բառապաշարը հարուստ չէ, այդուհանդերձ, այն պատկերավոր և նկարագրական լեզու է: Հետևյալ օրինակը վերցված է եբրայերեն Աստվածաշնչից՝ Սաղմոս 23.1-ին խոսքն է: Այն կարդում են աջից ձախ.

א רוֹמְזִמ דִוָדְל: הָוהְי יִעֹר, אֹל רָסְחֶא.

Հունարեն

Ամբողջ Նոր Կտակարանը գրված է հունարենով: Այն ժամանակահատվածում, երբ գրվել է Նոր Կտակարանը, կար հունարենի երկու բարբառ՝ (1) ***աթթիկ հունարեն.*** սա դասական կամ ընդունված բարբառն էր, որն օգտագործում էին Աթթիկ թերակղզում, որտեղ Աթենքն է, և (2) ***կոին հունարեն*** (ծագում է հունարեն «հասարակ» բառից). Նոր Կտակարանը գրվել է **կոին հունարենով,** որը հայտնի է նաև որպես ալեքսանդրյան բարբառ, հասարակ աթթիկ կամ հելլենիստական հունարեն: Սա հասարակ ժողովրդի լեզուն էր հունահռոմեական աշխարհում մ.թ.ա. 300 թ-ից մինչև մ.թ. 300 թ.: Այս լեզվին հատկանշական են ձևի և շարահյուսության պարզությունը, ճշգրտությունը և հստակությունը: Հետևյալ օրինակը վերցված է հունարեն Նոր Կտակարանից. Հովհաննես 3.16-րդ խոսքն է: Այն կարդում են ձախից աջ:

> Οὕτως γὰρ ἠγάπησεν ὁ θεὸς τὸν κόσμον, ὥστε τὸν υἱὸν τὸν μονογενῆ ἔδωκεν, ἵνα πᾶς ὁ πιστεύων εἰς αὐτὸν μὴ ἀπόληται ἀλλ᾽ ἔχῃ ζωὴν αἰώνιον.

ԲՆԱԳՐԻ ՁԵՎԱՉԱՓԸ

Սկզբնապես Աստվածաշնչի գրքերը բաժանված չեն եղել գլուխների և խոսքերի: 1228 թվականին Սթիվեն Լանթոնը՝ Քենթերբերիի արքեպիսկոպոսը, Աստվածաշունչը բաժանեց գլուխների: Գլուխների և խոսքերի բաժանված Աստվածաշնչի առաջին ժամանակակից օրինակը

[2] Եզրաս 4.8-6.18, 7.12-26, Երեմիա 10.11, Դանիել 2.4-7.28

տպագրվեց 1551 թվականին Փարիզում Ռոբերտ Էստիենի կողմից՝ որպես լատիներեն թարգմանության՝ Վուլգաթայի հրատարակություն: Աստվածաշունչը գլուխների և խոսքերի բաժանելու նպատակը ընթերցանությունը դյուրին դարձնելն էր:

ՀԻՆ ԿՐԿՆՕՐԻՆԱԿՆԵՐԸ

Աստվածաշնչի բնօրինակ ձեռագրերը, որոնք գրվել են հեղինակների կամ նրանց օգնականների ձեռքով, այլևս չկան: Հետևաբար մենք պետք է հենվենք այն հին կրկնօրինակների վրա, որոնք ունենք: Այստեղ հետևյալ հարցն է առաջանում. որտեղի՞ց գիտենք, որ մեր ունեցած հին կրկնօրինակները բնօրինակների անսխալ վերարտադրությունն են: Պատասխանը երկկողմանի է: ***Առաջին***՝ նույն Աստված, որ ներշնչել է հեղինակներին գրել Սուրբ գիրքը, ինքնիշխան է և զորավոր՝ պահպանելու այն կրկնօրինակներում: ***Երկրորդ***՝ Հին Կտակարանի ավելի քան երկու հազար ամբողջական և մասնակի հին կրկնօրինակները, ինչպես նաև Նոր Կտակարանի մոտ հինգ հազար կրկնօրինակները և վաղ տարբերակների տասը հազար կրկնօրինակները անվիճելի ապացույցն են, որ այսօր մեր ունեցած Աստվածաշունչը բնօրինակ ձեռագրերի ճիշտ վերարտադրությունն է: Ոչ մի հինավուրց փաստաթուղթ այդքան վկայված չէ, որքան Աստվածաշունչը:

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՀԻՆ ԿՐԿՆՕՐԻՆԱԿՆԵՐԸ

Այն ակնածանքի շնորհիվ, որ հրեաներն ունեին Աստծո Խոսքի նկատմամբ, և այն աշխատանքի շնորհիվ, որին իրենց նվիրել էին գրագիրները, վերարտադրվեցին Հին Կտակարանի ավելի քան երկու հազար մասնակի և ամբողջական կրկնօրինակներ, որոնք մենք այսօր ունենք: Չնայած այն հանգամանքին, որ որոշ կրկնօրինակների միջև կան չնչին տարբերություններ, բնագիր խոսքը կարելի է վերաշարադրել հետևյալ եղանակներով՝ (1) մանրամասնորեն համեմատելով կրկնօրինակները՝ հատկապես ամենահին տարբերակները, և (2) ուսումնասիրելով Հին Կտակարանից արված մեջբերումները Նոր Կտակարանում և Սուրբ գրքից զատ այլ գրականության մեջ: Ստորև ներկայացված են Հին Կտակարանի ամենամեծ կարևորությունն ունեցող որոշ կրկնօրինակներ:

Մեռյալ ծովի մատյանները

1947 թվականին հարյուրավոր եբրայերեն ձեռագրեր են հայտնաբերվել Մեռյալի ծովի մոտ գտնվող Քումրանի քարանձավներում: Կա հավանականություն, որ մ.թ.ա. երկրորդ կամ առաջին դարում դրանք այդտեղ էր թաքցրել Էսսենես կոչվող մի հրեական աղանդ: Ձեռագրերը պարունակում են Հին Կտակարանի բոլոր մասերը՝ բացի Եսթերի գրքից: Դրանք գրվել են մ.թ.ա. երկրորդից առաջին դարերի ընթացքում, հազար տարով ավելի հին են, քան դրանցից առաջ հայտնաբերված բոլոր ձեռագրերը, և գրեթե նույնական են ավելի ուշ հայտնաբերված օրինակների հետ: Ուստի դրանք ապացուցում են բնօրինակ ձեռագրերի ճշգրիտ կրկնօրինակումը:

Սեպտուագինտա (LXX)

Սեպտուագինտան եբրայերեն Հին Կտակարանի հունարեն տարբերակն է: Ըստ ավանդության՝ այն թարգմանել են յոթանասուն հրեա գիտնականներ մ.թ.ա. 280-150 թվականներին Եգիպտոսում՝ Ալեքսանդրիայում. այդ պատճառով էլ կոչվում է «Սեպտուագինտա»՝ լատի-

ներենից թարգամանաբար՝ «յոթանասնից» (***septuaginta***): Այս թարգմանության նպատակն է եղել Աստծո Խոսքը փոխանցել այն հրեաներին, որոնք եբրայերեն չեն խոսել: Սեպտուագինտան հաճախ է օգտագործվել Հիսուսի ժամանակներում, ինչպես նաև ընդունվել է առաջին եկեղեցու կողմից: Նոր Կտակարանում Հին Կտակարանից արված մեջբերումների մեծ մասը վերցված է Սեպտուագինտայից:

Մասորեթական տեքստը

Մասորեթական տեքստը կրկնօրինակել են մի խումբ հրեա գիտնականներ, որոնք հայտնի էին որպես ***մասորեթներ*** կամ ***ավանդապաշտներ*** (եբրայերեն՝ ***masoreth*** = ավանդույթ): Մինչև վեցերորդ դարը եբրայերեն ձեռագրերը բաղաձայնական են եղել (պարունակել են միայն բաղաձայններ և չունեն ձայնավորներ): Վեցերորդից տասներորդ դարերի ընթացքում մասորեթները ստեղծեցին ձայնավորների և հնչյունների այնպիսի համակարգ, որը թույլ կտար ճիշտ արտաբերել խոսքերը: Այս ձայնավորները և հնչյունները ավելացվեցին եբրայերեն ձեռագրերին, որոնց լուսանցքներում գրեցին տեքստային տարբերությունները:

Նոր Կտակարանի հին կրկնօրինակները

Նոր Կտակարանի հին կրկնօրինակները կարելի է դասակարգել երկու եղանակով՝ (1) ըստ տարեթվերի և այն նյութի, որի վրա դրանք գրվել են և (2) ըստ նմանությունների կամ ընդհանուր բնութագրերի:

Տարեթիվ եվ նյութ

Բնօրինակ Նոր Կտակարանի ձեռագրերի հունարեն կրկնօրինակները, որոնք այսօր ունենք, մեզ են հասել տարբեր դարերից և գրված են տարբեր նյութերի վրա: Ըստ այդմ՝ առանձնացվել է երեք առաջնային խումբ կամ դասակարգ.

Պապիրի՝ հունարեն ձեռագրեր, որոնք գրվել են պապիրուսի վրա երկրորդ և երրորդ դարերում:

Ունցիալներ՝ հունարեն ձեռագրեր, որոնք կրկնօրինակվել են չորրորդից իններորդ դարերի ընթացքում ամբողջությամբ մեծատառ, առանց բացատների և կետադրական նշանների: Ստորև ներկայացված է Հովհաննես 1.1-ին խոսքը ունցիալ գրով («Սկզբում էր Բանը, և Բանը...»).

ΕΝΑΡΧΗΗΝΟΛΟΓΟΣΚΑΙΟΛΟΓΟΣ

Մինիսկյուլներ՝ հունարեն ձեռագրեր, որոնք կրկնօրինակվել են իններորդից տասնհինգերորդ դարերում՝ թե՛ մեծատառերով և թե՛ փոքրատառերով: Ստորև ներկայացված է մինիսկյուլ գրի օրինակ՝ կրկին Հովհաննես 1.1-ին խոսքը («Սկզբում էր Բանը, և Բանը...»).

Ἐν ἀρχῇ ἦν ὁ Λόγος, καὶ ὁ Λόγος

Նմանություններ կամ առանձնահատկություններ

Առաջին եկեղեցում, երբ նամակ կամ Ավետարան էր ուղարկվում որևէ հարանվանության կամ անհատի, այն կրկնօրինակվում և ուղարկվում էր հարակից հարանվանություններին: Այս ընթացքում անխուսափելի էին դառնում ձեռագիր կրկնօրինակների միջև փոքրիկ շեղումներն ու տարբերությունները: Այդ տարբերությունների մեծ մասը գրագիրների սխալների կամ բարդ

տեքստի իմաստը հստակեցնելու գրագրի ցանկության հետևանքն էր: Երբ հաստատված եկեղեցին, որն ուներ գրվածքի օրինակը, նոր հարանվանություն էր հիմնում, այդ գրվածքից մեկ այլ կրկնօրինակ էր պատրաստում նոր եկեղեցու համար: Հետագայում նույն այդ օրինակից ավելի շատ կրկնօրինակներ էին արվում՝ հարակից նոր հարանվանություններին ուղարկելու նպատակով: Ժամանակի ընթացքում այն ձեռագրերը, որոնք օգտագործել էին նույն տարածքին պատկանող եկեղեցիները, ունենում էին նույն առանձնահատկությունները և տարբերությունները: Այս պատճառով գիտնականներն այժմ կարողանում են խմբավորել հին ձեռագրերը՝ դրանք համեմատելով եկեղեցական տարբեր կենտրոնների հովիվների և աստվածաբանների գրվածքներում առկա աստվածաշնչյան մեջբերումների հետ: Ստորև ներկայացված են չորս ամենակարևոր ընտանիքները կամ խմբերը.

Բյուզանդական գրվածք (կոչվում է նաև Մեծամասնական, Անտիոքյան կամ Սիրիական տեքստ): Այս գրվածքին հատկանշական են պարզությունը և մանրակրկիտությունը: Յոթերորդ դարից մինչև տպագրահաստոցի հայտնագործումը (մ.թ. 1450-1456 թթ.) Բյուզանդական գրվածքը ամենաընդունելին և ամենաշատ շրջանառվողն է եղել: Այն հիմք է ծառայել 1516 թվականին Էրազմուսի կողմից մշակված ***Տեքստուս Ռեսեպտուսի*** [***Textus Receptus***] և «King James» թարգմանության համար:

Ալեքսանդրյան գրվածք: Այս գրվածքին հատկանշական են հակիրճությունը և համառոտությունը: Այն մեծապես հիմք է ծառայել Աստվածաշնչի «Նոր ամերիկյան ստանդարտ» (NASB), «Անգլերեն ստանդարտ» (ESV) և «New King James» (NKJ) թարգմանությունների համար:

Արևմտյան գրվածք: Այս գրվածքը շրջանառվել է Իտալիայում, Գալիայում, Հյուսիսային Աֆրիկայում և Եգիպտոսում: Եկեղեցու հայտնի հայրեր Իրենեոսը, Տերտուղիանոսը և Կիպրիանոսը օգտվել են այս գրվածքից: Արևմտյան գրվածքին հատկանշական են ընդարձակությունը և փակագծերի կիրառությունը: Իմաստը հստակեցնելու և հարստացնելու նպատակով փոփոխվել, հանվել և ավելացվել են բառեր, արտահայտություններ և նախադասություններ:

Կեսարյան գրվածք (կոչվում է նաև Եգիպտական գրվածք): Այս գրվածքը հավանաբար գրվել է Եգիպտոսում: Կա կարծիք, որ Որոգինեսը դրա օրինակը բերել է Կեսարիա, որտեղ Եվսեբիուսը և այլք օգտագործել են այն: Հետագայում այն Կեսարիայից տարվել է Երուսաղեմ, որտեղ դրանից օգտվել է Կիրիլը: Կեսարյան գրվածքը համարվում է Ալեքսանդրյան և Արևմտյան գրվածքների միջինը:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՐՎԱԾՔԸ

Վերոնշյալ պարբերություններն ընթերցելուց հետո կարող է հարց առաջանալ՝ «Ինչպե՞ս հասկանալ, թե որ գրվածքն է ամենամոտը բնագրին»: Այն գիտնականները, որոնք նվիրել են իրենց այս ծանր և բծախնդիր աշխատանքին, իրենց որոշումները հիմնում են հետևյալ նկատառումների վրա.

1. ԳՐՎԱԾՔԻ ՏԱՐԵԹԻՎԸ: Եթե մյուս բոլոր գործոնների հարցում կա հավասարություն, ապա նախապատվություն տրվում է ամենահին գրվածքին: Որքան ավելի վաղ է տարեթիվը, այնքան ավելի քիչ է այլ տարբերակների առկայության հավանականությունը:

2. ԸՆԹԵՌՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ: Սովորաբար նախապատվություն է տրվում առավել դժվարընթեռնելի գրվածքին՝ ի հակադրություն ընթերցողի համար հարմար գրվածքի: Հին գրագիրները կրկնօրինակելիս գրվածքներում ճշտումներ անելու սովորություն ունեին՝ դրանք ավելի դյուրընթեռնելի և հասկանալի դարձնելու նպատակով:

3. ԳՐՎԱԾՔԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Որպես կանոն՝ նախապատվություն է տրում ամենահակիրճ և համառոտ գրվածքին: Հին գրագիրների շրջանում գրվածքների մեջ բառեր և արտահայտություններ ավելացնելու միտում կար՝ հստակություն մտցնելու և գրվածքն առավել ընթեռնելի դարձնելու նպատակով:

4. ԱԿՆՀԱՅՏ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Այն գրվածքը, որում ավելի շատ են պարադոքսները՝ ակնհայտ հակասությունները, առավել նախընտրելի է: Հին գրագիրներից ոմանք փոփոխության էին ենթարկում այն գրվածքները, որոնք հակասական կամ դժվար ներդաշնակեցվող էին ***թվում***: Սրա պատճառն այն չէր, որ Աստծո խոսքերում իրական հակասություններ կային, այլ այն, որ գրագիրները թերի էին ըմբռնում գրվածքը:

5. ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՄԲՈՂՋԻ ՀԵՏ: Նախապատվություն է տրվում այն գրվածքին, որն իր բառապաշարով և ոճով ամենաներդաշնակն է ամբողջ փաստաթղթի կամ հեղինակի այլ հնարավոր գրվածքների հետ:

ԿԱՆՈՆԸ

«Կանոն» բառը ծագում է հունարեն ***kanôn*** բառից, որ նշանակում է չափիչ ձող, չափորոշիչ կամ կանոն: Կարթագենի երրորդ ժողովի ժամանակ այս բառն օգտագործվեց Սուրբ գրքի այն գրքերի ցանկի մասին խոսելիս, որոնք ներշնչված են Աստծուց և պետք է ընդունվեն որպես քրիստոնեական հավատի և վարքագծի չափորոշիչ կամ կանոն: Աստծուց ներշնչված և Աստվածաշնչում ներգրավված գրքերը կոչվում են «կանոնական»: Այն գրքերը, որոնք Աստծուց ներշնչված չեն և չեն ընդգրկվել Սուրբ գրքում, կոչվում են «ոչ կանոնական»:

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԸ

Հին Կտակարանի գրքերը գրվել են մոտ հազար տարվա ընթացքում՝ մ.թ.ա. 1450–400 թվականներին: Պահպանողական գիտնականների մեծ մասը (հրեա և քրիստոնյա) այն կարծիքին է, որ Հին Կտակարանի բոլոր գրքերը գրվել, հավաքվել և հրեաների կողմից Սուրբ գիրք են ճանաչվել մինչև մ.թ.ա. 300 թվականը: Միայն այն փաստը, որ Հին Կտակարանի գրքերը հունարեն են թարգմանվել (Սեպտուագինտա) մ.թ.ա. 280-150 թվականներին, օժանդակում է այդքան վաղ տարեթվի գաղափարին: Հիմնվելով հրեաների կարևոր ավանդույթի վրա՝ որոշ գիտնականներ հավատացած են, որ Եզրասն է առաջնորդել առաջին ժողովը, որի ընթացքում ընդունվել են հրեական կանոնի գրքերը: Կարևոր է նշել, որ Հիսուսը և առաքյալները ընդունել են հրեական Սուրբ գրքի բացարձակ հեղինակությունը:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԸ

Նոր Կտակարանի գրքերը չեն ընտրվել եկեղեցական ժողովներով կամ հռչակագրերով, այլ դրանք ընդունվել են հայտնի աշխարհի եկեղեցիների և հավատացյալների կողմից: Երկրորդ դարի վերջում չորս Ավետարանները, Գործք Առաքելոցը և Պողոսի տասներեք թղթերը հավա-

տացյալների և եկեղեցիների կողմից ամենուր լայնորեն ընդունված էին որպես Սուրբ Գրվածք: Մինչ Կարթագենի երրորդ ժողովը՝ մ.թ. 397 թվականը, Նոր Կտակարանի՝ եկեղեցիների կողմից ընդունված բոլոր գրքերը արդեն մեծ մասամբ ճանաչված էին որպես Սուրբ Գրվածք:

Նոր Կտակարանի կանոնի այս համառոտ քննարկումը եզրափակելով՝ օգտակար կլինի իմանալ, թե ինչպես էին եկեղեցիները, ժողովները և եկեղեցու հայրերը որոշում, թե ո՛ր գրքերը պետք է ընդգրկվեին դրանում: Նոր Կտակարանի մաս դառնալու և կանոնի մեջ ընդգրկվելու համար գիրքը պետք է բավարարեր որոշակի պահանջների հետևյալ ոլորտներում:

Հեղինակը: Հեղինակը պետք է լիներ առաքյալ կամ առաքյալների ընկերակցության մեջ ներգրավված անձնավորություն, օրինակ՝ Մարկոսը, Ղուկասը կամ, հավանաբար, Եբրայեցիս թղթի հեղինակը:

Բովանդակությունը: Գրքի վարդապետությունը կամ ուսմունքը պետք է համապատասխաներ Սուրբ Գրվածքի մյուս գրքերին:

Տիեզերական ընդունելություն: Գիրքը պետք է ճանաչվեր ամբողջ եկեղեցու կողմից:

Ընդունելություն եկեղեցու հայրերի կողմից: Վճռորոշ էր այն մարդկանց կարծիքը, որոնք սովորել էին առաքյալների ոտքերի մոտ նստած: Արդյոք նրանք գիրքն ընդունո՞ւմ էին որպես առաքելական: Արդյոք այդ գրքից մեջբերումներ անո՞ւմ էին իրենց գրվածքներում:

Անձնական շինություն: Գիրքը պետք է կարողանար խանդավառել, համոզել և շինություն բերել քրիստոնյաներին գիտելիքի և նվիրման հարցերում:

ԱՊՈԿՐԻՖ

Ապոկրիֆային գրքեր

«Ապոկրիֆային» բառը ծագում է հունարեն ***apókruphos*** բառից, որ նշանակում է «թաքնված»: Խոսքը այն տասնչորս գրքերի մասին է, որոնք չեն ընդգրկվել Հին և Նոր Կտակարանների կանոնի մեջ: Միայն 1546 թվականին Տրիենտի ժողովի ժամանակ էր, որ Հռոմի կաթոլիկական եկեղեցին կանոնական[3] հռչակեց տասնմեկ ապոկրիֆային գրքերը: Վատիկանի առաջին ժողովը հաստատեց այդ որոշումը 1826 թվականին: Ապոկրիֆային են համարվում հետևյալ գրքերը՝ ***Ա Եզրաս, Բ Եզրաս, Թովիտի գիրք, Հուդիթի գիրք, Հավելումներ Եսթերի գրքին*** (Եսթերի հանգիստը), ***Իմաստության գիրք*** (կամ Սողոմոնի իմաստության գիրքը), ***Էկլեսիաստիկուս*** (կամ Սիրաքի որդի Հիսուսի իմաստության գիրքը), ***Բարուքի գիրքը*** (և Երեմիայի նամակը), ***Ազարիայի աղոթքը*** (և Երեք սուրբ զավակների երգը), ***Սուսաննայի պատմությունը, Բելը և վիշապը, Մանասեի աղոթքը, Ա Մակաբացիներ*** և ***Բ Մակաբացիներ***:

Կանոնականի խնդիրները Ապոկրիֆի հետ

Ստորև ներկայացված են ամենակարևոր պատճառները, թե ինչու ապոկրիֆային գրքերը չեն համարվել և չպետք է համարվեն հավասարազոր Սուրբ գրքին՝ որպես հավատի և վարքի կանոն:

[3] Բոլոր թվարկված գրքերը՝ բացի Ա Եզրասից, Բ Եզրասից և Մանասեի աղոթքից

1. **Ապոկրիֆային գրվածքները երբեք ընդգրկված չեն եղել հրեական կանոնի մեջ:**
2. **Հրեական սինագոգը երբեք Աստծուց ներշնչված չի համարել ապոկրիֆային գրվածքները:**
3. **Ապոկրիֆային գրվածքներից ոչ մեկը Աստծուց ներշնչված լինելու հավակնություն չունի:** Ապոկրիֆային գրվածքների որոշ հեղինակներ անգամ հերքում են այն, թե իրենք Աստծուց են ներշնչվել[4]:
4. **Հրեաները երբեք մեջբերումներ չեն արել ապոկրիֆային գրվածքներից, ինչպես Աստծուց ներշնչված գրվածքներից:**
5. **Ո՛չ Հիսուսը, ո՛չ նույնիսկ առաքյալները երբևէ մեջբերումներ չեն արել ապոկրիֆային գրվածքներից, ինչպես Աստծուց ներշնչված գրվածքներից:**
6. **Հայտնի հրեա պատմաբան Հովսեփոսը և հրեա փիլիսոփա Փիլոն չեն ընդունել ապոկրիֆային գրվածքները որպես Աստծուց ներշնչված:**
7. **Լատիներեն թարգմանության՝ «Վուլգաթայի» թարգմանիչ Ջերոմը ապոկրիֆային գրվածքները չի համարում Աստծո կողմից ներշնչված:**
8. **Ապոկրիֆային որոշ գրվածքներում կան պատմական, աշխարհագրական և ուսմունքային ակնհայտ սխալներ:**
9. **Սուրբ գրքի հետ համեմատելիս ակնհայտ է ապոկրիֆային գրվածքների զիջող որակը:**
10. **Եկեղեցու առաջին չորս դարերի ընթացքում ապոկրիֆային գրվածքներից որևէ մեկն ընդգրկված չի եղել կանոնական գրքերի ցանկում:** Նույնիսկ Հռոմի կաթոլիկական եկեղեցին մինչ 1546 թվականի Տրիենտի ժողովը պաշտոնապես չի ընդունել ապոկրիֆային գրվածքները:

Ամփոփում

Հաշվի առնելով ապոկրիֆային գրվածքների դեմ եղած զգալի վկայությունները՝ լավագույն տարբերակը Վեսթմինսթերի հավատի դավանանքը (1643 թ.) կամ Լոնդոնի մկրտական դավանանքն (1689 թ.) ընդունելն է.

> «Այն գրքերը, որոնց ընդունված է անվանել «Ապոկրիֆ», Աստծուց ներշնչված չեն և Սուրբ գրքի կանոնի մաս չեն կազմում, հետևաբար դրանք հեղինակություն չեն Աստծո եկեղեցու համար և չպետք է հաստատվեն կամ գործածվեն որպես ավելին, քան մյուս մարդկանց կողմից հեղինակված գրվածքները»[5]:

[4] Էկլեսիաստիկուսի նախաբան, Ա Մակաբացիների 4.46, 9.27, Բ Մակաբացիների 15.38, 39
[5] Լոնդոնի մկրտական դավանանք, գլուխ 1.3

Գլուխ 11. Աստվածաշնչի նպատակը

Մաս 1. Աստվածաշունչը և քրիստոնյաների հոգևոր արթնությունը

Քննարկեցինք Աստվածաշնչի բացարձակ արժանահավատությունը, իսկ հիմա մեր ուշադրությունը կուղղենք դրա կարևոր նպատակին քրիստոնյայի կյանքում: Հետևյալ ցուցակում ներառված են Աստվածաշնչի ինն առանցքային նպատակները, որոնք կուսումնասիրենք այս և հաջորդ երկու գլուխներում: Աստվածաշունչը (1) հայտնում է Հիսուս Քրիստոսի և Նրա փրկության մասին, (2) մեր հավատի հիմքն է, (3) վավերացնում է մեր համոզմունքները, (4) նպաստում է սրբագործմանը, (5) սովորեցնում է արդարություն և իմաստություն, (6) տալիս է հույս և մխիթարություն, (7) տալիս է ուժ հոգևոր պատերազմում, բերում է (8) օրհնություն, բերում է (9) կյանք, ուրախություն և փառաբանություն:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՀԱՅՏՆՈՒՄ Է ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՎ ՆՐԱ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիսուս Նազովրեցին պատմության ամենակարևոր Անձն է: Նա Աստծո բոլոր խոստումների իրագործումը և մարդկության միակ հույսն է: Յուրաքանչյուր մարդու կյանքի ընթացքը կախված է Աստծո հետ իր փոխհարաբերությունից: Նրանք, ովքեր Հիսուս Քրիստոսին դավանում են որպես Տիրոջ ու Փրկչի, փրկված կլինեն: Նրանք, ովքեր մերժում են Նրան, հավիտենական կորստյան կմատնվեն: Նրա մասին գրված է Աստվածաշնչի գրեթե բոլոր էջերում՝ առաջին խոսքերից մինչև վերջին գլուխը: Հին Կտակարանում Նա խոստացված Փրկիչն է: Ավետարաններում Նա իրականացված խոստումն է՝ աշխարհի Փրկիչը, փառքի Տերը և Թագավորը, որ գալու է: Աստվածաշնչի ամենավճռորոշ նպատակը Հիսուսի և Նրա միջնորդությամբ տրվող փրկության մասին հայտնելն է: Աստվածաշնչի մեր ուսումնասիրության նպատակը պետք է լինի Քրիստոսին ճանաչելը, Նրա փրկությունն ու կամքը հասկանալը և Նրան կերպարանակից լինելը:

1. Ըստ Հովհաննես 5.39, 40-ի՝ ո՞րն է Սուրբ գրքի մեծ նպատակը.

_____

_____

_____

_____

_____

2. Ըստ Հովհաննես 1.45-ում գրված Փիլիպպոսի խոսքերի՝ որո՞նք են Հին Կտակարանի հիմնական նպատակը և թեման.

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Քրիստոսի ժամանակներում, երբ ասում էին «Օրենքը և Մարգարեները», նկատի ունեին ամբողջ Հին Կտակարանը: Հիսուս Քրիստոսի հայտնությունը չի սկսվում Նոր Կտակարանում. այն կարելի է տեսնել Աստվածաշնչի առաջին խոսքերից:

3. Աստվածաշունչը բացահայտում է ոչ միայն Հիսուսի Անձը, այլև այն փրկությունը, որը միայն Նրանում է: Ի՞նչ են մեզ սովորեցնում հետևյալ խոսքերը նշված ճշմարտության մասին.

   ա. *Հովհաննես 20.30, 31*

   բ. *Բ Տիմոթեոս 3.15*

4. Վերոնշյալ խոսքերում առկա վարդապետությունը ծայրահեղ կարևոր է Սուրբ գիրքն ուսումնասիրողի համար: Աստծո Խոսքի ուսումնասիրության մեր նպատակը միայն փաստերը և պատվիրաններն իմանալը չէ. մեր ուսումնասիրության նպատակն է Քրիստոսին ճանաչելը, «որի մեջ ծածկված կան իմաստության և գիտության բոլոր գանձերը» (Կողոսացիս 2.3): Աստվածաշնչի ուսումնասիրությունը ավելին է, քան մտքի վարժանք. այն Անձի փնտրտուք է՝ Աստծո փնտրտուքն է Քրիստոսում: Ի՞նչ են մեզ սովորեցնում Երեմիա 9.23, 24-րդ խոսքերը.

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉՆ Է ՄԵՐ ՀԱՎԱՏԻ ՀԻՄՔԸ

Մենք փրկվում ենք հավատով (Եփեսացիս 2.8). առանց հավատի անհնար է հաճեցնել Աստծուն (Եբրայեցիս 11.6): Սակայն ի՞նչ է հավատը: Միայն Աստվածաշունչն է հստակ պատասխանում այս վճռորոշ հարցին:

1. Ինչպե՞ս է Աստվածաշունչը սահմանում հավատը Եբրայեցիս 11.1-ին խոսքում.

   ա. *Հավատը հ_____ բաների հ_____ է:*

   բ. *Հավատը չ_____ բաների ա_____ է:*

   ՆՇՈՒՄՆԵՐ. Եբրայեցիս 11.1-ը տալիս է ամբողջ Աստվածաշնչի ամենակարևոր սահմանումներից մեկը: Սակայն դրա ամբողջ կարևորությունը հասկանալու համար մենք պետք է երկու հարցի պատասխանենք: ***Առաջին***՝ ինչպե՞ս կարող ենք ստանալ մեր հույսի հաստատությունը: ***Պատասխան.*** Մենք կարող ենք ունենալ հաստատությունը նրա, ինչի համար հույս ունենք, քանի որ Աստված դա խոստացել է Իր Խոսքում: ***Երկրորդ***՝ ինչպե՞ս կարող ենք ունենալ չերևացած բաների ապացույցը: ***Պատասխան.*** Կարող ենք ունենալ չերևացող բաների ապացույցը, քանի որ Աստված խոստացել է դա Իր Խոսքում:

2. Հռոմեացիս 4.18-21-րդ խոսքերում Աստվածաշունչը Աստծո Խոսքի և հավատի կապակցվածության վերաբերյալ ազդեցիկ օրինակ է ներկայացնում: Աբրահամն արդեն մոտ հարյուր տարեկան էր, իսկ Սառան ամուլ էր, ու նրանք երեխաներ չունեին: Եվ հակառակ այդ հանգամանքներին՝ Աբրահամը հավատում էր Աստծո խոստմանը, հավատում էր, որ որդի է ունենալու: Ըստ Հռոմեացիս 4.21-ի՝ ո՞րն էր նրա վստահության հիմքը.

   ա. *Աբրահամը լիովին հ_____ էր (որ որդի էր ունենալու), քանի որ Աստված խ_____ էր:*

   ՆՇՈՒՄՆԵՐ. Աբրահամը չէր ***տեսնում*** իր որդուն, նա դեռևս չէր ծնվել, իսկ հանգամանքները հուսահատեցնող էին: Այդուհանդերձ, Աբրահամը համոզված էր, որ որդի էր ունենալու, քանի որ Աստված խոստացել էր և կարող էր իրականացնել Իր խոստումը: Աբրահամի հավատը հիմնված էր Աստծո Խոսքի և Աստծո բնավորության ազնվության վրա: Այստեղից արժեքավոր դաս ենք քաղում. ***անհնար է անկեղծությամբ հավատալ՝ չիմանալով Աստծո խոստումները:***

3. Ըստ աստվածաշնչյան այն խոսքերի, որոնց ծանոթացանք՝ բացատրե՛ք հետևյալ ճշմարտությունը. անհնար է անկեղծությամբ հավատալ՝ չիմանալով Աստծո խոստումները.

   _____

   _____

   _____

   _____

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉՆ Է ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ՄԵՐ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԸ

Սովորեցինք, որ Աստված Իրեն և Իր կամքը հայտնում է աստվածահայտնության, տեսիլքների, երազների, լսելի ձայնի, հրեշտակների և հրաշքների միջոցով: Հասկանում ենք նաև, որ Աստված Իր ամենամեծ հայտնությունը տվել է մեզ երկու հազար տարի առաջ Հիսուս Քրիստոսի մարդացմամբ: Իսկ այսօր ինչպե՞ս է Աստված խոսում Իր ժողովրդի հետ: Ինչպե՞ս կարող ենք համոզված լինել, որ այն, ինչ տեսել, լսել և զգացել ենք, ճշմարիտ է: Ո՞րն է այն հեղինակությունը, որով ստուգում ենք մեր համոզմունքների և գործողությունների վավերականությունը: Պատասխանը կարելի է գտնել Աստվածաշնչում:

1. Ի՞նչ են սովորեցնում մեզ Բ Տիմոթեոս 3.16, 17-րդ խոսքերն Աստվածաշնչի և դրա հեղինակության մասին եկեղեցու և անհատ քրիստոնյայի կյանքում.

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստվածաշունչը քրիստոնյայի կյանքի ամենաբարձր հեղինակությունն է: Ցանկացած հայտնություն, գաղափար, վարդապետություն, վերապրում, վերաբերմունք կամ գործողություն, որը չի համապատասխանում Աստծո Խոսքին, պետք է մերժվի:

2. Եսայիա 8.19, 20-ում երևում է Աստծո Խոսքը չափորոշիչ դարձնելու կարևորությունը, որի հետ պետք է համեմատել մյուս բոլոր վարդապետությունները: Ի՞նչ է սովորեցնում այս խոսքը.

3. Կորնթոսի եկեղեցում կային ուսմունքային և բարոյական խնդիրներ, քանի որ այնտեղի քրիստոնյաները ավելի մեծ ուշադրություն էին դարձնում վերապրումներին, քան Աստծո Խոսքին: Ի՞նչ է պատվիրում Պողոս առաքյալը Ա Կորնթացիս 14.36-38-րդ խոսքերում՝ այդ խնդիրները լուծելու համար.

4. Սովորեցինք, որ Սուրբ գիրքն է այն վերջնական հեղինակությունը, որից պետք է բխեն մեր համոզմունքները և քայլերը: Ըստ Մարկոս 7.7-9, 13-ի՝ ո՞րն էր փարիսեցիների ամենամեծ սխալը: Ինչո՞ւ էր Հիսուսն այդքան խիստ հանդիմանում նրանց.

ՆՇՈՒՄՆԵՐ. Փարիսեցիներն իրենց ավանդույթները վեր էին դասում Աստծո Խոսքից, ինչը լուրջ սխալների էր հանգեցնում: Եվ մենք պետք է գիտակցենք, որ ավանդույթներից զատ շատ այլ բաներ կան, որոնք մենք կարող ենք սխալմամբ Աստվածաշնչից վեր դասել, օրինակ՝ մեր գաղափարները, մարդկային կարծիքները, հոգևոր վերապրումները և այլն: Մենք պետք է զգուշությամբ ամեն բան քննենք Աստծո Խոսքով և մերժենք այն ամենը, ինչը Խոսքով չի հաստատվում:

5. Ըստ Բ Տիմոթեոս 2.15-ի՝ ի՞նչ կարող ենք անել փարիսեցիների և Կորնթոսի եկեղեցու սխալից կամ հերձվածությունից խուսափելու համար.

Գլուխ 12. Աստվածաշնչի նպատակը

Մաս 2. Աստվածաշունչը և քրիստոնյայի հոգևոր աճը

Այս գլխում մենք կշարունակենք ուսումնասիրել Աստվածաշնչի նպատակները քրիստոնյայի կյանքում:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՆՊԱՍՏՈՒՄ Է ՍՐԲԱԳՈՐԾՄԱՆԸ

Աստծո ամենամեծ նպատակը մեր կյանքերում մեր սրբագործումն է, որպեսզի կերպարանակից լինենք Նրա Որդուն (Հռոմեացիս 8.29): «Սրբագործել» բառը թարգմանված է լատիներեն ***sanctificare*** բառից (***sanctus*** = սուրբ + ***facere*** = դարձնել), որ նշանակում է «առանձնացնել» կամ «սուրբ դարձնել»: Սրբագործումը մեր հոգևոր աճի գործընթացն է, որի միջոցով մենք ավելի քիչ ենք նմանվում այս ընկած աշխարհին և ավելի ենք նմանվում Քրիստոսին: Հետևյալ վարժություններում կսովորենք, որ Աստվածաշունչն այդ գործընթացում առանցքային տարր է:

1. Ըստ Հովհաննես 17.15-17-ի՝ ինչպե՞ս է Աստված սրբագործում Իր զավակներին.

_____

_____

_____

_____

2. Հռոմեացիս 12.2-ում Պողոս առաքյալն ասում է մեզ, թե ինչ չանենք, և հորդորում է, թե ինչ անենք, ինչպես նաև նշում է այդ երկու ցուցումներին հնազանդվելու միջոցը: Նրա պնդումներից երևում է, որ Սուրբ գիրքը հիմնային կարևորություն ունի մեր սրբագործման մեջ.

   ա. *Արգելք. Մի՛ կ_____այս աշխարհի կերպարանքով:* Բառացիորեն ասված՝ «մի՛ ընդունեք նույն ձևը», ինչ այս ընկած ու մեղսալից աշխարհն ունի:

   բ. *Հորդորը. Այլ ն_____:* Այս հորդորը ծագում է հունարեն ***metamorphóō*** բառից, ինչը կարելի է թարգմանել նաև որպես «փոխակերպվել»: Նույն բառն օգտագործում են գիտնականները՝ նկարագրելու բոժոժի փոխակերպումը թիթեռի: Այդ բառն օգտագործվել է նաև Մատթեոսի Ավետարանում՝ նկարագրելու Տեր Հիսուս Քրիստոսի կերպարանափոխումը Փոխակերպման սարի վրա (Մատթեոսի 17.1, 2):

   գ. *Միջոցները. ձեր մտքի ն_____:* Այս նորոգությունը տեղի է ունենում Աստծո Խոսքը ներքուստ ընդունելու շնորհիվ: Մեր ազատությունը մեղքի ամենօրյա ազդեցությունից և մեր առաջընթացը դեպի հասունություն և կերպարանակցումը Քրիստոսին կախված են նրանից, թե որքանով են մեր կյանքերը ներծծված Աստծո Խոսքով:

3. Հովհաննես 8.34-ում Հիսուսը սովորեցնում է, որ այն մարդը, որը մեղքի մեջ է ապրում, մեղքին գերի է: Ըստ 31, 32-րդ խոսքերի՝ ինչպե՞ս կարող է քրիստոնյան ավելի մեծ ազատություն վերապրել մեղքի իշխանությունից և ավելի սրբագործվել.

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Կենալ» բառը (խ. 31) թարգմանված է հունարեն ***ménō*** բառից, որ նշանակում է «բնակվել», «մնալ», «տեղավորվել», «ապրել»: Եթե մենք ցանկանում ենք ազատ լինել մեղքից և կերպարանակից լինել Քրիստոսին, ապա պետք է Աստծո Խոսքը «դարձնենք մեր տունը»:

4. Աստծո Խոսքի մեջ մնալով՝ մենք կարող ենք ավելի մեծ ազատություն վերապրել մեղքի բռնակալությունից: Այս սկզբունքը նկարագրված է Սաղմոս 119.9-11-րդ խոսքերում: Ի՞նչ կարող ենք սովորել 9-րդ և 11-րդ խոսքերից.

_____

_____

_____

_____

5. Սաղմոս 119.11-ում Դավիթը հռչակում է. «Իմ սրտում թաքցրի Քո խոսքերը, որ չմեղանչեմ Քո դեմ»: Հետևյալ վարժության մեջ գրի՛ առեք Դավթի խոսքերի ***հակառակը***, որպեսզի է՛լ ավելի լավ պատկերացնեք մեր կյանքերը Աստծո Խոսքով հագեցնելու կարևորությունը.

ա. *«Քո Խոսքերը* ***չթ***_____ *իմ սրտում, որ մ*_____ *քո դեմ»:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այն քրիստոնյան, որն իր կյանքը հագեցնում է Աստծո Խոսքով, ամրոց է կառուցում, որն իրեն պաշտպանում է մեղքի մահաբեր ազդեցությունից: Այն քրիստոնյան, որն անտեսում է Աստծո Խոսքի ուսումնասիրությունը, դուռ է բացում մեղքի համար և ինքն իրեն վտանգում է:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ Է ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ

Կարելի է ասել, որ Աստվածաշունչը քրիստոնյայի կյանքի ձեռնարկն է: Առանց Աստվածաշնչի անհնար է լիովին հնազանդվել Աստծուն և ապրել մեր կյանքերի համար Նրա ծրագրի համաձայն: Սուրբ գրքում պարունակված ցուցումները, իմաստությունը և սկզբունքներն անփոխարինելի են:

1. Ըստ Առակաց 1.2-4-ի՝ որո՞նք այն օգուտները, որ Աստվածաշունչը խոստանում է նրանց, ովքեր ջանում են սովորել Աստվածաշնչից.

   ա. *Ի*_____ *(խ. 2)*՝ գիտելիք և դրա պատշաճ կիրառությունը:

   բ. *Խ*_____ *(խ. 2)*՝ ներառում է շտկում և հանդիմանություն:

   գ. *Հանճարի խոսքերը հ*_____ *կարողություն (խ. 2)*:

   դ. *Իմաստության խ*_____*, այսինքն՝ արդարություն, իրավունք և ուղղություն (խ. 3):*

   ե. *Խ*_____ *(խ. 4)*՝ ներառում է խելամտություն, զգուշություն և խորաթափանցություն:

   զ. *Գ*_____ *(խ. 4)*՝ ճիշտ տեղեկություն:

   է. *Խ*_____ *(խ. 4)*՝ ճիշտ որոշումներ կայացնելու կարողություն:

2. Աստծո Խոսքը իմաստություն է խոստանում բոլոր նրանց, ովքեր ջանում են սովորել դրա ճշմարտությունները՝ անկախ իրենց ակնհայտ անկարողությունից: Ըստ Առակաց 1.4, 5-ի՝ ո՞վ կարող է իմաստություն սովորել Սուրբ գրքից.

   ա. *Պ*_____ *(խ. 4)*՝ միամիտները. նրանք, ովքեր հեշտությամբ խաբվում են թույլ դատողության պատճառով:

   բ. *Ե*_____ *(խ. 4).* նրանք, ովքեր կյանքում քիչ փորձառություն կամ գիտելիք ունեն:

   գ. *Ի*_____ *և բ*_____ *(խ. 5).* նրանք, ովքեր արդեն ունեն գիտելիքի, իմաստության և հասկացողության բարձր աստիճան:

   ՆՇՈՒՄՆԵՐ. Ամբողջ Աստվածաշնչում բոլոր մարդկանց համար հասանելի են Աստծո գիտությունն ու իմաստությունը: Երիտասարդներն ու պարզամիտները կարող են իմաստուն դառնալ, իսկ իմաստունները կարող են է՛լ ավելի իմաստնանալ:

3. Ըստ Առակաց 1.7-ի՝ ո՞րն է ամենամեծ էթիկական ճշմարտությունը կամ բարոյական իմաստությունը, որն Աստծո Խոսքը կարող է մեզ փոխանցել.

   _____

   _____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Վախ» բառը թարգմանված է եբրայերեն ***yirah*** բառից, որը կարելի է թարգմանել նաև որպես «ակնածանք» կամ «հարգանք»: Աստծո մասին խոսելիս այն նշանակում է խորագույն ակնածանքը և հարգանքը, որը տանում է երկրպագության և հնազանդության: Տիրոջ երկյուղը ամեն ճշմարիտ գիտելիքի հիմքն ու առաջին քայլն է:

4. Ըստ Բ Տիմոթեոս 3.16-ի՝ որո՞նք են այն չորս ուղիները, որոնցով Սուրբ գիրքը հայտնում է Աստծո կամքը և վերափոխում մեզ՝ կերպարանակցելու Իր Որդուն.

   ա. *Վ*_____. թարգմանված է հունարեն ***didaskalía*** բառից, որ նշանակում է հրահանգ, ուսմունք կամ ուսուցում: Աստվածաշունչն է փրկությանը վերաբերող ամեն գիտության՝ ուսմունքի, էթիկայի, բարոյախոսության, բնավորության, իմաստության, ճիշտ մտածողության, ճիշտ ապրելակերպի և այլնի հիմքն ու աղբյուրը:

   բ. *Հ*_____. թարգմանված է հունարեն ***elégchō*** բառից, որ նշանակում է «խրատել», «նախատել» կամ «նկատողություն անել»: Այնպես, ինչպես դատախազն է փաստեր բացահայտում ամբաստանյալի դեմ՝ վերջինիս հանցանքի համար մեղադրելու համար, այդպես էլ Սուրբ գրքի ճշմարտություններն են հանդիմանում մեզ մեր սխալների համար: Սուրբ գիրքը ոչ միայն ***Աստծուն*** է բացահայտում մեզ համար, այլև դրա օգնությամբ ինքներս մեզ ենք բացահայտում: Եբրայեցիս 4.12-ը հռչակում է. «Որովհետև Աստծո խոսքը կենդանի է և զորավոր և ամեն երկսայրի սուրից ավելի կտրուկ է և թափանցում է մինչև շնչի և ոգու և հոդվածների և ծուծի բաժանվելը և քննող է սրտի մտքերը և խորհուրդները»:

   գ. *Ու*_____. թարգմանված է հունարեն ***epanórthōsis*** բառից, որ նշանակում է «վերականգնել» և «պատշաճ վիճակի բերել»: Աշխարհիկ հունարենում այս բառն օգտագործվել է նկարագրելու ընկած առարկան ուղղելու կամ ընկածին ոտքի կանգնեցնելու գործողությունը: Աստվածաշունչը ընդամենը դատախազ չէ, որը մատնանշում է մեր սխալները, այն նաև բժիշկ է և խորհրդատու, որը վերականգնում է մեզ և վերադարձնում ճիշտ ճանապարհին:

   դ. *Ա*_____ *խ*_____. «խրատ» բառը թարգմանված է հունարեն ***paideia*** բառից, որ նշանակում է «վերապատրաստում», «կրթում», «երեխայի դաստիարակություն»: Աստվածաշունչը դրական և գործնական հրահանգներ է տալիս, որոնց կիրառությունը վարքագծային փոփոխություն է բերում:

5. Ըստ Ա Տիմոթեոս 1.5-ի՝ ո՞րն է ճշմարիտ աստվածաշնչյան բոլոր հրահանգների նպատակը.

_____

_____

_____

6. Հիմնվելով Մատթեոսի 7.24-27-ի վրա՝ համեմատե՛ք այն մարդուն, որն իր կյանքը կառուցում է Աստծո Խոսքի վրա, նրա հետ, ով այդպես չի վարվում.

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՀՈՒՅՍ ԵՎ ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ

Խնդիրները և փորձությունները չեն անհետանում միայն այն պատճառով, որ մենք քրիստոնյա ենք դառնում: Հիսուսը սովորեցնում էր, որ աշխարհում նեղություն կունենանք (Հովհաննես 16.33): Դժվար ժամանակներում մեզ անսասան հույս և մխիթարություն է անհրաժեշտ: Իսկ Աստվածաշնչում անհամար խոստումներ կան, որոնցից յուրաքանչյուրը նախատեսված է քաջալերելու մեզ վստահությամբ և առանց վախի հետևելու Աստծուն:

1. Ըստ Հռոմեացիս 15.4-ի՝ ո՞րն է Սուրբ գրքի ստեղծման ամենակարևոր նպատակներից մեկը.

_____

_____

_____

_____

_____

2. Սաղմոս 119.49-56-ում կարդում ենք այն փորձությունների մասին, որոնցով անցնում էր Դավիթը: Ինչպե՞ս էր նա դրանց արձագանքում: Մենք շատ բան կարող ենք սովորել նրա օրինակից: Ընթերցե՛ք խոսքը՝ ծանոթանալով դրա բովանդակությանը, այնուհետև պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

   ա. *Ըստ հետևյալ աստվածաշնչյան խոսքերի՝ ի՞նչ փորձություններով էր անցնում Դավիթը.*

   (1) Նա անցնում էր ն_____ (խ. 50):

   (2) Ամբարտավանները ծ_____նրան (խ. 51):

   (3) Բ_____ էր բռնել նրան (խ. 53):

բ. *Ըստ հետևյալ աստվածաշնչյան խոսքերի՝ ինչպե՞ս էր Դավիթն արձագանքում այդ փորձություններին.*

(1) Նա չէր ծ_____ Աստծո Խոսքից (խ. 51):

(2) Նա հ_____ Աստծո հավերժական իրավունքները (խ. 52):

(3) Նա պ_____ էր Աստծո օրենքը (խ. 55):

գ. *Ըստ հետևյալ աստվածաշնչյան խոսքերի՝ ինչպե՞ս էր Աստծո Խոսքը պահում Դավթին նրա փորձություններում և փառապանքներում.*

(1) Աստծո Խոսքը ա_____ էր նրան նրա նեղության մեջ (խ. 50):

(2) Աստծո Խոսքը մ_____ էր նրան (խ. 50):

(3) Աստծո հրամանները նրա համար ե_____ էին (խ. 54):

3. Հիմնվելով այն ճշմարտությունների վրա, որոնք ուսումնասիրեցինք Սաղմոս 119.49-56-րդ խոսքերում՝ ամփոփ ներկայացրե՛ք, թե քրիստոնյան ինչպես պետք է հենվի Աստծո Խոսքի վրա փորձությունների ժամանակ.

_____

_____

_____

_____

_____

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՈՒԺ Է ՏԱԼԻՍ ՀՈԳԵՎՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Քրիստոնյաները Երկնքի քաղաքացիներ են (Փիլիպպեցիս 3.20, 21), սակայն ապրում են երկրի վրա: Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ ամբողջ աշխարհը սատանայի տիրապետության տակ է (Բ Կորնթացիս 4.4, Ա Հովհաննես 5.19), որն անընդհատ պատերազմում է քրիստոնյաների դեմ, որոնք ապրում են Աստծո փառքի համար և կատարում են Նրա կամքը: Քրիստոնեական կյանքում ավելի մեծ հաղթանակներ տոնելու համար մեզ անհրաժեշտ է զենք, որը կուղղորդի և կզորացնի մեզ թշնամուն և նրա ծրագրերին դեմ կանգնելու համար: Աստվածաշունչն այդ զենքն է:

1. Ըստ Եփեսացիս 6.12-րդ խոսքի՝ ո՞վ է ընդդիմանում քրիստոնյայի ամենօրյա ընթացքին Քրիստոսի հետ: Ո՞ւմ կամ ինչի՞ դեմ պետք է քրիստոնյան պայքարի.

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ի՞նչ են նշանակում այս եզրույթները: Ո՞ւմ կամ ինչի՞ն են դրանք վերաբերում: Կան բազմաթիվ մեկնաբանություններ և ենթադրություններ, սակայն միայն մեկ մեկնաբանությունն է հստակ: Վերոնշյալը վերաբերում է սատանային և դևերին, որոնք մշտապես ջանում են խոչընդոտել Աստծո գործը այս աշխարհում և ոչնչացնել քրիստոնյաների վկայությունը: Հետաքրքիր է, որ օգտագործված է «պատերազմ» բառը, որը թարգմանված է հունարեն ***pólē*** բառից, որ նշանակում է «ըմբշամարտ»: Իսկ «դեմ» բառը վերաբերում է դեմառդեմ վիճաբանելուն:

2. Ըստ Եփեսացիս 6.10-16-րդ խոսքերի՝ հավատացյալը պետք է ապրի արդարությամբ, հավատով և պատրաստված լինի: Ավելին՝ պետք է զինված լինի բոլոր այն հոգևոր զենքերով, որ Տերը տվել է: Ամենակարևոր զենքերից մեկը նշված է Եփեսացիս 6.17-ում՝ որպես «Հոգու սուր»: Ըստ այս աստվածաշնչյան խոսքի՝ ինչի՞ մասին է խոսքը.

   ա. *Ա*_____ *Խ*_____*:* Ինչպե՞ս է ստացվում, որ Աստծո Խոսքը Հոգու սուրն է: «Սուր» բառը թարգմանված է հունարեն ***máchaira*** բառից. դա հռոմեական կարճ թուրն է կամ դաշույնը, որ հիմնականում գործածվել է որպես պաշտպանիչ զենք: «Խոսք» բառը թարգմանված է հունարեն ***rhêma*** բառից, որ նշանակում է «այն, ինչ խոսվել է», «հռչակված ուղերձ կամ խոսք»: Սուրբ գիրքն աստվածաշունչ է (Բ Տիմոթեոս 3.16), ինչպես նաև «ամեն խոսք, որ դուրս է գալիս Աստծո բերանից» (Մատթեոս 4.4): Սուրբ գիրքը գրի է առնվել մարդկանց կողմից, որոնց շարժել և առաջնորդել է Սուրբ Հոգին (Բ Պետրոս 1.21), և դա Նրա աշխատանքն է: Որպես հավատացյալներ՝ մենք պետք է տիրապետենք Աստծո Խոսքին Սուրբ Հոգու զորությամբ մեր հոգևոր թշնամիների դեմ պատերազմում: Երբ մեզ վրա հարձակում են գործում, մենք պետք է պատասխանենք Աստծո Խոսքի հանդեպ ունեցած վստահությամբ և հնազանդությամբ, ինչպես Քրիստոսն արեց, երբ կռիվ տվեց սատանայի դեմ անապատում (Մատթեոս 4.1-11):

3. Ըստ Մատթեոս 4.4, 7, 10-րդ խոսքերի՝ ինչպե՞ս Հիսուսը հաղթահարեց սատանայի գայթակղությունները: Ինչպե՞ս կարող ենք հետևել Նրա օրինակին.

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Խիստ կարևոր է հասկանալ, որ Տերը չհաղթեց սատանային՝ պարզապես մեջբերելով Աստծո Խոսքը, այլ նաև հնազանդվելով դրան: Մենք ևս չպետք է պարզապես մեջբերենք աստվածաշնչյան խոսքեր, երբ պայքարում ենք գայթակղության դեմ, այլև պետք է հավատանք և հնազանդվենք դրանց:

4. Ըստ Ա Հովհաննես 2.14-ի՝ ինչո՞ւ երիտասարդները, որոնց Հովհաննեսը գրում էր, կարող էին հաղթել չարին.

   ա. *Նրանք զ_____ էին, քանի որ Աստծո Խոսքը բ_____ էր նրանում:* «Բնակվել» բառը թարգմանված է հունարեն ***ménō*** բառից, որ նշանակում է «ապրել», «մնալ», «տեղավորվել»: Երիտասարդները զորավոր էին, քանի որ Աստծո Խոսքը դարձրել էին իրենց տունը: Նրանք ներքուստ տեղ էին տվել Աստծո Խոսքին և ապրում էին դրան հնազանդվելով: Փորձության ժամանակ նրանք կախված էին Խոսքից, և մենք պետք է սովորենք հետևել նրանց օրինակին:

Գլուխ 13. Աստվածաշնչի նպատակը

Մաս 3. Աստվածաշունչը և քրիստոնյայի հոգևոր օգուտները

Այս գլխում կշարունակենք ուսումնասիրել Աստվածաշնչի նպատակները քրիստոնյայի կյանքում:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ Է ԲԵՐՈՒՄ

Աստված հավատացյալներին տվել է հոգևոր բոլոր օրհնությունները Քրիստոսում (Եփեսացիս 1.3), սակայն առանց Աստծք Խոսքի անհնար է իմանալ, թե դրանք ինչ օրհնություններ են: Աստվածաշունչը նման է անհաշվելի հարստությունների հանքի: Եթե մենք ջանասիրաբար փնտրենք դրա ճշմարտությունները, ապա օրհնությունների առատ գանձեր կգտնենք մեր կյանքերի համար: Եկեղեցու պատմության ողջ ընթացքում շատ քրիստոնյաներ ապրել են ոսկու միլիոնավոր ձուլակտորների վրա նստած աղքատների նման: Իրենց տրամադրության տակ ունենալով անվերջանալի հոգևոր օրհնություններ՝ նրանք չեն ստացել դրանք Աստծո Խոսքն անտեսելու կամ այն չիմանալու պատճառով: Մենք պետք է խուսափենք այս սխալից և նվիրենք մեզ Աստծո խոստումները ճանաչելուն, դրանց հավատալուն և հնազանդվելուն:

1. Սաղմոս 1.1-4-ում ամփոփված է Խոսքի միջոցով տրվող օրհնությունների ամենագեղեցիկ նկարագրություններից մեկը: Ընթերցե՛ք խոսքը, ծանոթացե՛ք դրա բովանդակությանը, այնուհետև կատարե՛ք ստորև ներկայացված վարժությունը:

   ա. *2-րդ խոսքի լույսի ներքո նկարագրե՛ք, թե որն է ճիշտ արձագանքն Աստծո Խոսքին.*

   _____

   _____

   _____

   _____

   բ. *3-րդ խոսքի լույսի ներքո նկարագրե՛ք այն մարդուն, որի կամքը Տիրոջ օրենքի մեջ է, որը խորհում է դրա շուրջ օր ու գիշեր.*

   _____

   _____

   _____

   _____

գ. *4-րդ խոսքի լույսի ներքո նկարագրե՛ք այն մարդուն, որն անտեսում է Աստծո Խոսքն ու դրա ազդեցությունից դուրս ապրում.*

_____

_____

_____

_____

_____

_____

2. Հեսու 1.1-8-րդ խոսքերում Աստված Հեսուին խոստանում է հաջողություն տալ այն բոլոր բաներում, որոնք Իր կամքի համեմատ են: Ըստ 7-8-րդ խոսքերի՝ ի՞նչ էր Աստված պահանջում Հեսուից.

   ա. *Ք_____եղի՛ր, որ պահես և անես Աստծո ամեն օ_____ պես (խ. 7):*

   բ. *Չխ_____օրենքից աջ կամ ձախ (խ. 7):*

   գ. *Մտածի՛ր Աստծո օրենքի շուրջ ց_____ և գ_____ (խ. 8):*

3. Հակոբոս 1.25-ում պարունակվում է խոստում, որը նման է Հեսու 1.7-8-ի խոստումին: Ի՞նչ է այս խոսքը սովորեցնում մեզ Աստծո Խոսքի օրհնությունների և մեր պատասխանատվության մասին.

_____

_____

_____

_____

4. Ըստ Ղուկաս 11.27-28-ի՝ ի՞նչ է Տեր Հիսուս Քրիստոսը սովորեցնում մեզ Աստծո Խոսքին ճիշտ արձագանքելու և դրա արդյունքների մասին.

_____

_____

_____

_____

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԲԵՐՈՒՄ Է ԿՅԱՆՔ, ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աստվածաշունչը մարդկության պատմության ամենակարևոր և գլխավոր գիրքն է: Աստվածաշնչից ենք սովորում Քրիստոսի միջոցով փրկագնման, փրկության և այն անհամար օրհնությունների մասին, որ Աստված ունի բոլոր նրանց համար, ովքեր հավատում են: Նրանց, ովքեր ծանոթ չեն Աստվածաշնչին կամ չեն հասկանում այն, Աստվածաշունչը կարող է թվալ կանոններով և արգելքներով լի ստրկացնող գիրք, մինչդեռ այն ճիշտ հակառակն է: Աստվածաշունչն այն գիրքն է, որն Աստված տվել է մեզ՝ վտանգներով լի այս աշխարհում քաջալերելու և ուղղորդելու համար: Նրանք, ովքեր կարդացել, հավատացել և հնազանդվել են Աստվածաշնչին, գիտեն, որ այն կյանքի, ուրախության և փառաբանության աղբյուր է:

1. Մարդիկ սխալվում են՝ կարծելով, թե Աստվածաշունչը ստրկացնում է և բեռնավորում: Ի՞նչ են սովորեցնում մեզ հետևյալ աստվածաշնչյան խոսքերը Աստծո Խոսքի իրական բնույթի և ազդեցության մասին այն մարդկանց կյանքերում, որոնք հավատում են դրան.

   ա. *Հովհաննես 6.63*

   _____

   _____

   _____

   _____

   ՆՇՈՒՄՆԵՐ. «Մարմին» ասվածը վերաբերում է մարդկային անկում ապրած մեր բնությանը, որը բացարձակապես ունակ չէ ճշմարիտ կյանք կամ հոգևորություն ստեղծելու մեզանում: Ի հակադրություն դրա՝ Քրիստոսի խոսքերը հոգի են և կյանք: Սուրբ Հոգին արդյունավետորեն աշխատում է Աստծո Խոսքի միջոցով՝ հոգևոր կյանք ստեղծելով նրանց ներսում, ովքեր լսում և հավատում են դրան:

   բ. *Հովհաննես 8.31-32, 34*

   _____

   _____

   _____

   _____

   _____

   ՆՇՈՒՄՆԵՐ. «Կենալ» բառը թարգմանված է հունարեն ***ménō*** բառից, որ նշանակում է «բնակվել», «ապրել», «տեղավորվել»: Իրական ազատությունը գալիս է Աստծո Խոսքի մեջ «բնակվելուց», Նրա խոստումների վրա հենվելուց և Նրա հրամաններին հնազանդվելուց:

գ. *Ա Հովհաննես 5.3*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ծանր» բառը թարգմանված է հունարեն ***barús*** բառից, որը կարող է թարգմանվել նաև «ծանրաբեռնող» կամ «դժվար»: Խոսքը ինչ-որ բանի մասին է, որը ծանրաբեռնում է, ճնշում ու տանջում: Նույն խոսքը Հիսուսն օգտագործում է նաև Մատթեոս 23.4-ում փարիսեցիների հոգնեցուցիչ և ճնշող ավանդույթների մասին խոսելիս. «Ծանր **[*barús*]** և դժվարակիր բեռներ են կապում և դնում մարդկանց ուսերին»:

2. Մատթեոս 11.28-30-րդ խոսքերում ի՞նչ է Հիսուսն ասում Իր վարդապետության մասին: Արդյոք այն ծանր և ստրկացնո՞ղ է, թե՞ կյանք և ազատություն տվող: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

3. Սաղմոս 119.44, 45-րդ խոսքերում Դավիթը առանցքային պնդում է անում, որով հնազանդությունը կապում է ազատության հետ: Ըստ Դավթի՝ արդյոք հնազանդությունն Աստծո Խոսքին սահմանափակո՞ւմ է հավատացյալի ազատությունը, թե՞ ընդլայնում է այն: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը.

4. Ինչպե՞ս է Դավիթը նկարագրում Աստծո Խոսքը Սաղմոս 19.7-11-ում: Ըստ 10-11-րդ խոսքերի՝ արդյոք այն իր համար անօգուտ ծանր աշխատա՞նք էր, թե՞ ուրախություն: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը.

5. Աստվածաշունչը չոր գրական աշխատանք չէ. այն զորավոր է և կենարար: Երբ այն իր արժանի տեղն է զբաղեցնում մեր կյանքերում, մենք լցվում ենք խաղաղությամբ, ուրախությամբ և փառաբանությամբ, նույնիսկ դժվար իրավիճակներում և փորձություններում: Ի՞նչ են մեզ սովորեցնում հետևյալ խոսքերն այդ ճշմարտության մասին.

ա. *Երեմիա 15.16*

բ. *Սաղմոս 119.162-165*

գ. *Սաղմոս 119.71-72*

6. Այն ուրախությունը, բերկրանքը և գովասանքը, որ Աստծո Խոսքն է բերում է մեր կյանք, կախված չեն մեզ շրջապատող իրավիճակներից: Այս ճշմարտությանը վերաբերող ի՞նչ հռչակում է անում Դավիթը Սաղմոս 119.143-ում: Ինչպե՞ս կարող ենք այս ճշմարտությունը կիրառել մեր կյանքերում:

7. Այս գլուխը կեզրափակենք մի շատ կարևոր հիշեցումով: Աստվածաշունչը չի տալիս մեզ կյանք, ուրախություն և խաղաղություն՝ պարզապես Աստծո կամքը հայտնելով. այդ օգուտ-ները տրվում են մեզ, քանի որ Աստծո Խոսքը ուղղորդում է մեզ դեպի Աստծո Որդին, Որում է կյանքը: Ի՞նչ էր սովորեցնում Հիսուսը այս ճշմարտության մասին Հովհաննես 5.39, 40-րդ խոսքերում: Ի՞նչ զգուշացում է սա մեզ բոլորիս համար.

Գլուխ 14. Աստծո Խոսքի զորությունը

Մաս 1. Ուղղորդում և իմաստություն

Աստվածաշունչն ավելին է, քան գիրք. այն Աստծուց ներշնչված Աստծո Խոսքն է՝ զորավոր և կարող փոխելու մեր կյանքերը և վերափոխելու մեզ ու կերպարանակից դարձնելու Հիսուս Քրիստոսին: Աստվածաշունչը մի շարք փոխաբերություններ է օգտագործում՝ ցույց տալու, թե ինչպես է այն վերափոխում մեր կյանքերը: Այս և սրան հաջորդող երկու գլուխներում քննարկելու ենք այդ բառապատկերները և դրանց նշանակությունները:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՆՄԱՆ Է ՃՐԱԳԻ

Թեև քրիստոնյաները փրկագնված են և նոր արարած են Քրիստոսում, պետք է շարունակեն ապրել այս խավար և ընկած աշխարհում: Աստծո Խոսքը միակ վստահելի լույսը կամ ճրագն է, որը կարող է քրիստոնյային ուղղորդել կյանքի անհամար վտանգներով անցնելիս:

1. Ի՞նչ է մեզ սովորեցնում Սաղմոս 119.105-ը Աստծո Խոսքի մասին: Ըստ Սաղմոս 119.106-ի՝ ինչպե՞ս պետք է այս ճշմարտությունը կիրառվի մեր կյանքերում.

_____

_____

_____

_____

_____

2. Առակաց 6.20-23-ը Աստծո Խոսքին վերաբերող գեղեցիկ և զորավոր պարբերություն է, որում Խոսքը ներկայացվում է որպես ուղղորդող ճրագ: Ընթերցե՛ք խոսքը և ծանոթացե՛ք դրա բովանդակությանը, այնուհետև պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

   ա. *Ինչպե՞ս է Աստծո Խոսքը նկարագրված 23-րդ խոսքում.*

_____

_____

_____

_____

բ. *Ըստ 20-21-րդ խոսքերի՝ քրիստոնյան ինչպե՞ս պետք է արձագանքի Աստծո Խոսքին, որպեսզի այն իսկապես ճրագ լինի նրա ոտքերի համար և լուսավորի նրա ճանապարհը.*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հոր պատվիրան» և «մոր օրենք» ասվածը վերաբերում է Աստծո օրենքին. Երկրորդ օրինաց 6.1-9-րդ խոսքերում ծնողներին պատվիրվում է Աստծո օրենքը սովորեցնել իրենց երեխաներին:

գ. *Ըստ 22-23-րդ խոսքերի՝ ի՞նչ խոստումներ է տալիս Սուրբ գիրքը նրանց, ովքեր ապրում են Խոսքի լույսով.*

_____

_____

_____

_____

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՆՄԱՆ Է ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ

Այս այլասերված և ընկած աշխարհում կան շատ ձայներ, որոնք մշտապես փորձում են գրավել քրիստոնյաների ուշադրությունը, սակայն Աստծո Խոսքն է այն խորհրդականը, որը երբեք սխալներ թույլ չի տալիս և չի խաբում: Սուրբ գիրքն է այն աղբյուրը, որից մենք պետք է խորհուրդ ընդունենք, և այն չափորոշիչը, որի հիման վրա պետք է քննենք մյուս բոլոր խորհուրդները: Ինչպես Եսայիա մարգարեն է ասում Եսայիա 8.20-րդ խոսքերում. «Օրենքին և վկայությանը դիմեք. եթե նրանք չխոսեն այս խոսքի համեմատ, նրանք արշալույս չունեն»:

1. Ի՞նչ է Դավիթը հռչակում Աստծո Խոսքի մասին Սաղմոս 119.24-ում: Ինչպիսի՞ փոխհարաբերություն ուներ Դավիթն Աստծո Խոսքի հետ և ի՞նչ վերաբերմունք էր ցուցաբերում դրա նկատմամբ.

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Խորհրդական» բառը (KJV/NKJV/ESV) թարգմանված է եբրայերեն ***etsah*** բառից, որ նշանակում է «խորհուրդ, ռազմավարություն կամ պատշաճ ծրագիր տալ»:

2. Սաղմոս 119.97-104-ը զորավոր խոսքեր են, որոնք ներկայացնում են այն մեծ օրհնությունները, որոնք կարող ենք ունենալ՝ Խոսքը մեր գլխավոր խորհրդականը դարձնելով: Ընթերցե՛ք խոսքը և ծանոթացե՛ք դրա բովանդակությանը, այնուհետև պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

   ա. *Ըստ 97-րդ և 103-րդ խոսքերի՝ ինչպե՞ս էր Դավիթը վերաբերվում Աստծո Խոսքին: Ինչպիսի՞ն պետք է լինի մեր վերաբերմունքը.*

   բ. *Ըստ 98-100-րդ խոսքերի՝ ի՞նչ օգուտ կամ առավելություն ուներ Դավիթը Աստծո Խոսքն իր խորհրդականը դարձնելու շնորհիվ.*

   գ. *Աստծո Խոսքի խորհուրդը լսելը միայն բավական չէ, մենք պետք է նաև հնազանդվենք դրան: Ըստ 101-104-րդ խոսքերի՝ ինչպե՞ս էր Դավթի կյանքում արտահայտվում այս ճշմարտությունը: Ինչպե՞ս այն պետք է արտահայտվի մեր կյանքերում.*

3. Սաղմոս 32.8, 9-ը պարունակում է Աստծո խորհրդին վերաբերող խոստում և հորդոր, ինչպես նաև այն, որ մենք պետք է հնազանդվենք դրան: Ընթերցե՛ք խոսքը և ծանոթացե՛ք դրա բովանդակությանը, այնուհետև պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

   ա. *Ի՞նչ է Աստված խոստանում հավատացյալներին 8-րդ խոսքում.*

   _____

   _____

   _____

   _____

   բ. *Ի՞նչ է Աստված հորդորում հավատացյալներին 9-րդ խոսքում.*

   _____

   _____

   _____

   _____

4. Աստծո Խոսքը որպես մեր խորհրդական դիտարկելու թեման կեզրափակենք Աստծո ուղղորդման մասին Սուրբ գրքի ամենագեղեցիկ խոստումներից մեկով: Ստորև գրի առե՛ք Սաղմոս 73.24-ի վերաբերյալ ձեր մտքերը.

   _____

   _____

   _____

   _____

   _____

Գլուխ 15. Աստծո Խոսքի զորությունը

Մաս 2. Բացահայտում և ոչնչացում

Աստվածաշունչը մի շարք փոխաբերություններ է օգտագործում՝ ներկայացնելու այն, թե ինչպես կարող է Խոսքը վերափոխել մեր կյանքերը: Այս գլխում կշարունակենք քննարկել այդ փոխաբերությունները և դրանց նշանակությունները:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՆՄԱՆ Է ՍՐԻ ԵՎ ՀԱՅԵԼՈՒ

Սկզբում գուցե պարզ չլինի, թե ինչու են այս երկու փոխաբերությունները միասին քննարկվում: Թվում է, թե սրերի և հայելիների մեջ շատ ընդհանրություններ չկան, սակայն Սուրբ գրքի համատեքստում դրանք նույն նպատակին են ծառայում: Աստծո Խոսքը նման է սրի կամ վիրաբույժի դանակի, որը բացում է մեր սրտերի ամենախորքերը՝ բացահայտելու ներսում թաքնվածը: Նույն կերպ Աստծո Խոսքը նման է հայելու, որը ցույց է տալիս մեր ճշգրիտ արտացոլանքը՝ այն, թե ով ենք մենք իրականում:

1. Եբրայեցիս 4.12-13-րդ խոսքերում Աստվածաշունչը ներկայացված է որպես սուր, որն Աստված օգտագործում է բացելու և երևան հանելու, թե ով ենք մենք իրականում: Ընթերցե՛ք խոսքը, ծանոթացե՛ք դրա բովանդակությանը և պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

   ա. *Նշե՛ք Աստծո Խոսքի երեք հատկանիշները, որոնք գրված են 12-րդ խոսքում.*

   (1) Կ_____: Աստծո Խոսքի մեջ Աստծո շունչն է (Բ Տիմոթեոս 3.16). Աստծո խոսքերը կենդանի են և կյանք տվող: Աշխարհն արարվել և կյանք է ստացել այն խոսքով, որը Նա խոսել է (Ծննդոց 1): Հիսուսն ասել է, որ Իր խոսքերը «հոգի» են և «կյանք» (Հովհաննես 6.63):

   (2) Ձ_____: Թարգմանված է հունարեն ***energês*** բառից, որը կարելի է թարգմանել նաև որպես «ակտիվ» կամ «արդյունավետ»: Խոսքը քնած, պասիվ կամ իներտ չէ: Այն ***արդյունավետորեն գործում*** է հավատացյալի կյանքում՝ բացահայտելու նրա իրական էությունն ու կերպարանակից դարձնելու Քրիստոսին:

   (3) Կ_____ ավելի, քան երկսայրի սուրն է: Աստծո Խոսքը ունի մեր արտաքին փայլն ու կեղծավորությունը ճեղքելու և մեր իրական էությունը բացահայտելու զորություն: Այն քարե սրտերը կտրում է այնպես, ինչպես ածելիի սրություն ունեցող սուրը կկտրի կարագը, որ երևան հանի մեր ներսում եղածը:

   բ. *Ըստ 12-րդ խոսքի՝ որքա՞ն խոր կարող է թափանցել Աստծո Խոսքը.*

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Երեք օրինակ է վերցված մեր կյանքի երեք հարթություններից՝ հոգևոր (շունչ և հոգի), ֆիզիկական (հոդեր և ծուծք) և մտավոր (մտքեր և միտումներ): Հեղինակի գլխավոր նպատակն է ցույց տալ, որ Աստծո Խոսքը կարող է թափանցել մեր էության և գործերի խորքը՝ բացահայտելով մեր և մեր բոլոր գործերի իրական պատկերը:

գ. *13-րդ խոսքում Եբրայեցիս թղթի հեղինակը մեր ուշադրությունն ուղղում է Աստծուն, Ով տվել է Խոսքի ներշնչանքը. սա անելով՝ նպատակ է հետապնդում ապացուցելու Աստծո Խոսքի զորությունը՝ թափանցելու և խորապես բացահայտելու մեր էությունն և գործերը: Ի՞նչ կարևոր ճշմարտություններ է նա մեզ սովորեցնում.*

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստված ամենուր է: Նա քաջ գիտի մեր ներսը, մտքերը և գործերը: Ավելին՝ Նա ջանում է ազատել մեզ մեր սխալներից և Իր Որդուն կերպարանակից դարձնել: Նա է տվել Աստվածաշնչի ներշնչանքը և օգտագործում է այն մեր կյանքերում՝ հայտնելու մեզ ճշմարտությունը մեր մասին, որպեսզի մերժենք բացահայտված սխալները և Իր հետ միասին ջանանք նմանվել Նրա Որդուն:

դ. *Եթե որպես ճշմարտություն հիմք ընդունենք Եբրայեցիս 4.12, 13-րդ խոսքերը, ինչպե՞ս պետք է արձագանքենք դրանց: Արդյոք պե՞տք է ավելի շատ ժամանակ հատկացնենք Աստծո Խոսքն ուսումնասիրելուն: Արդյոք պե՞տք է ավելի մեծ ուշադրությամբ քննենք ինքներս մեզ Սուրբ գիրքն ուսումնասիրելիս: Գրի՛ առեք ձեր մտքերը. օգտակար կլինի նաև կարդալ Երեմիայի ողբերը 3.40, 41-ը.*

_____

_____

_____

_____

2. Հակոբոս 1.22-25-ը մեր իրական անձը կամ բնույթը բացահայտելու Աստվածաշնչի զորությանը վերաբերող ամենակարևոր խոսքերից է Սուրբ գրքում: Պատասխանե՛ք այդ խոսքերին վերաբերող հետևյալ հարցերին.

ա. *Ըստ 23-րդ խոսքի՝ ո՞րն է Աստծո Խոսքի առանցքային գործառույթներից մեկը.*

(1) Խոսքը նման է հ_____, որը մարդուն ցույց է տալիս իր իսկական բնույթը: Երբ հավատացյալը կարդում և սերտում է Աստծո Խոսքը, ինչպես նաև խորհում դրա շուրջ, վերջինս հայելու նման արտացոլում է նրա իրական բնույթն ու բոլոր գործերի իրական պատկերը:

բ. *22-րդ և 25-րդ խոսքերում Հակոբոսը Աստվածաշունչն ուսումնասիրողներին երկու խմբի է բաժանում. որո՞նք են այդ երկու խմբերը.*

(1) Խոսքը ա_____ (խ. 22), գ_____ կատարող (խ. 25): «Գործ կատարող» (***poiētês érgou***) արտահայտությունը հունարենից կարելի է թարգմանել նաև որպես «արդյունավետորեն կատարող» կամ «կատարող, որ գործում է» (ESV)՝ շեշտադրելով ակտիվ կամ գործուն արձագանքը լսածին կամ սովորածին: Սա նկարագրում է այն մարդուն, որը, Աստծո Խոսքը լսելով, ավելացնում է իր գիտելիքն Աստծո կամքի և իր սեփական թերությունների մասին, այնուհետև գործում ըստ լսածի՝ փորձելով իր բնավորությունը և արարքները համապատասխանեցնել Աստծո կամքին:

(2) Լ_____՝ իրենց անձերը խաբելով (խ. 22), մ_____ լսողներ (խ. 25): Այս խոսքերը նկարագրում են այն անձանց, որոնք լսում են խոսքը և արագ մոռանում այն: Աստծո Խոսքի մեջ սեփական արտացոլանքին արագ հայացք են նետում, սակայն ոչինչ չեն անում Քրիստոսին ավելի նմանվելու համար, քանի որ կա՛մ կույր են իրենց բացահայտված սխալները տեսնելու համար, կա՛մ պարզապես նրանց հոգը չէ, և չեն ցանկանում բավարար եռանդ ներդնել շտկվելու համար:

գ. *Ըստ 22-րդ և 25-րդ խոսքերի՝ ի՞նչ արդյունքներ են ունենում ակտիվ կատարողները և լսողները, որոնք ոչինչ չեն անում.*

(1) Կատարողը իր անելով ե_____ է: Այս նկարագրությունը հիշեցնում է Սաղմոս 1.1-3-ում նշված մարդուն, որի կամքը Տիրոջ օրենքի մեջ է. «Նա ջրերի գնացքում տնկված ծառերի պես է, որ իր պտուղը տալիս է իր ժամանակին, և նրա տերևը չի թափվում, և ամեն ինչ, որ անում է, հաջողվում է նրան» (խ. 3):

(2) Լսողները, որոնք մոռանում են, խ_____ են իրենց անձերը: Այս բառը թարգմանված է հունարեն ***paralogízomai*** բառից, որ նշանակում է «սխալ դատել, սխալ հաշվարկ անել կամ խաբել» կամ «կեղծ փաստարկներով կամ դատողությամբ խաբել»: Այն, ինչ Աստծո Խոսքն ասում է մեր մասին, ճշմարիտ է: Հիմարություն է

դրա պնդումների հետ վիճելը և հանդիմանության առջև արդարանալը կամ մեզ ցույց տրված ճշմարտությունն անտեսելը:

3. Ըստ նրա, ինչ սովորել ենք Եբրայեցիս 4.12-13-րդ և Հակոբոս 1.22-25-րդ խոսքերից՝ ամփոփ գրի՛ առեք՝ ինչպես է իմաստունն արձագանքում Աստծո Խոսքին.

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՆՄԱՆ Է ՄՈՒՐՃԻ ԵՎ ԿՐԱԿԻ

Երբ խորհում ենք Աստծո Խոսքի արժանիքների շուրջ, ավելի շատ կենտրոնանում ենք արարելու, սովորեցնելու և շինություն բերելու դրա զորության վրա: Այս պատճառով գուցե մի փոքր դժվար լինի Աստծո Խոսքը դիտարկել որպես ջարդող, քանդող և ոչնչացնող գործիք: Այդուհանդերձ, եթե հավատում ենք նրան, ինչ Խոսքն ինքն իր մասին ասում է, ապա պետք է գիտակցենք, որ սա Խոսքի ծառայության մեկ այլ կարևոր կողմ է հավատացյալի կյանքում:

1. Ինչպե՞ս է Երեմիա մարգարեն նկարագրում Աստծո Խոսքը Երեմիա 23.29-րդ խոսքում.

   ա. *Խոսքը նման է մ_____, որը կ_____ է ապառաժը:* Ոչինչ չի կարող կանգնել Աստծո Խոսքի և դրա իրագործման միջև՝ կատարելու Աստծո ինքնիշխան նպատակները: Այն զորություն ունի կոտրելու և բացելու քարե սրտերը, ոչնչացնելու մեղքն ու ամեն սխալ, որը հակառակ է կանգնում Աստծո ճշմարտությանը: Նույն խոսքում Աստված օգտագործում է կրակի փոխաբերությունը: Երկու դեպքում էլ միտքն այն է, որ Աստծո Խոսքը միայն չի նորոգում և շինում, այլև այրում է և ոչնչացնում:

2. Երեմիա 1.4-10-րդ խոսքերում կարդում ենք այն մասին, որ Երեմիան կանչվում է մարգարեի ծառայության մեջ: Ըստ 10-րդ խոսքի՝ ո՞րն էր Երեմիայի ուղերձի նպատակը: Ինչպե՞ս է սա վերաբերում Աստծո Խոսքի ծառայությանը մեր կյանքերում.

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքից կարող ենք հասկանալ, որ մինչ Աստված կկարողանա կառուցել, Նա պետք է պոկի, կոտրի, ոչնչացնի և խորտակի շատ բաներ մեր կյանքերում, որոնք Իր կամքին չեն համապատասխանում: Երբեմն Աստված օգտագործում է Իր Խոսքը այս ցավոտ, սակայն կարևոր աշխատանքն անելու համար:

3. Բ Կորնթացիս 10.4, 5-րդ խոսքերում Պողոս առաքյալը նկարագրում է իր ծառայության մի ոլորտ, որը շատ նման է Երեմիայի ծառայությանը՝ գրված Երեմիա 1.10-ում: Ըստ այդ խոսքի՝ ի՞նչ ուղիներով կարող են Աստծո Խոսքը և աղոթքը գործել որպես մուրճ.

   ա. *Դրանք նմանեցվում են զ_____ զ_____ (խ. 4):* Քրիստոնյայի կյանքը հոգևոր պայքար է, որը հնարավոր չէ վարել մարմնական միջոցներով, ինչպիսիք են պերճախոսությունը, խաբեությունը կամ խելացի ռազմավարությունները: Այստեղ գործել կարող են միայն Աստծո Խոսքը և աղոթքը, որոնք Աստված է կարգել և զորությամբ լցրել:

   բ. *Բ_____ բ_____ համար (խ. 4):* «Քանդել» բառը թարգմանված է հունարեն ***kathaíresis*** բառից, ինչը կարելի է թարգմանել նաև որպես «կործանել» կամ «ոչնչացնել»: Միտքը նման է Երեմիա 1.10-ի մտքին: «Բերդ» բառը թարգմանված է հունարեն ***ochúrōma*** բառից, որ նշանակում է «ամրոց» կամ «հենակետ»: Մեր կյանքերում սովորաբար լինում են մեղքի շատ հենակետեր, որոնք պետք է ոչնչացվեն, որպեսզի կարողանանք առաջընթաց ունենալ սրբագործման մեջ և առատապես պտղաբեր դառնալ: Աստծո Խոսքը և աղոթքը այդ աշխատանքն իրականացնելու զորավոր միջոցներ են:

   գ. *Խ_____ բ_____ համար (խ. 4):* Այստեղ «քանդել» բառը թարգմանված է հունարեն ***kathairéō*** բառից, որը նույն արմատն ունի, ինչ 4-րդ խոսքում օգտագործված «քանդել» բառի հունարեն տարբերակը, և նույն իմաստն է կրում: «Խորհուրդներ» բառը թարգմանված է հունարեն ***logismós*** *բառից*, որն այս համատեքստում վերաբերում է մարմնավոր խորհրդածություններին կամ դատողություններին՝ մտքերի, որոնք չեն համապատասխանում Աստծո կամքին և Նրա ճշմարիտ ճանաչողությանը: Նման խորհուրդները կարող են քանդվել միայն Աստծո Խոսքը ճիշտ կիրառելով:

   դ. *Քանդելու ա_____ բ_____, որ գոռոզանում է Աստծո գիտության դեմ (խ. 5):* Աստվածաշունչը չի հակադրվում վեհ կամ բարձր մտքերին, ընդհակառակը, այն քաջալերում է մարդուն լիովին օգտագործել իր միտքն ու քննել

պարգևը: Սակայն Սուրբ գիրքը հակառակվում է ամեն այսպես կոչված գոռոզացող մտքի կամ ուսմունքի, որն իրեն ավելի բարձր է դասում, քան Աստծո ճշմարիտ ճանաչողությունը, և հակասում է Նրա հայտնի կամքին: Կրկնենք, որ միայն Աստծո Խոսքն է կարող՝ բացահայտելու և քանդելու:

ե. Գ_____ *բռնելու ամեն միտք՝ Քրիստոսին հ*_____ *համար (խ. 5)*: Հիսուս Քրիստոսն է Տերը, և Նրա կամքն է ամենաբարձր օրենքը: Մեր հավատի նպատակն է կատարյալ հնազանդությունը Քրիստոսին: Ամեն միտք, խոսք և արարք Քրիստոսի կամքին հնազանդեցնելու համար մենք պետք է իմանանք Աստծո Խոսքը և դրանով զորացած լինենք:

4. Մեր ուսումնասիրության ընթացքում սովորեցինք, որ հաճախ անհրաժեշտ է քանդել ու ոչնչացնել մեր մեղքերն ու սխալ մտքերը, որպեսզի կարողանանք կառուցել այն, ինչը համապատասխանում է Աստծո կամքին: Սա դժվար և երբեմն տհաճ գործընթաց է, որը սակայն միանշանակ անհրաժեշտ է, եթե ցանկանում ենք Քրիստոսին կերպարանակից լինել: Բ Տիմոթեոս 4.2-4-րդ խոսքերում Պողոս առաքյալն այս ճշմարտությանը վերաբերող ողջամիտ խորհուրդ է տալիս: 2-րդ խոսքում նա գրում է, որ Աստծո Խոսքը սովորեցնում է մեզ, սակայն նաև հանդիմանում է, սաստում է և հորդորում: Այնուհետև 3, 4-րդ խոսքերում զգուշացնում է այն վտանգավոր սխալի մասին, որ շատերը թույլ կտան: Ո՞ր սխալի մասին է խոսքը, և ինչպե՞ս կարող ենք խուսափել դրանից.

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Գլուխ 16. Աստծո Խոսքի զորությունը

Մաս 3. Սնուցում և պտղաբերություն

Աստվածաշունչը մի շարք փոխաբերություններ է օգտագործում՝ ցույց տալու, թե ինչպես կարող է Խոսքը վերափոխել մեր կյանքերը: Այս գլխում, ինչպես նախորդ երկու գլուխներում, կքննարկենք այդ փոխաբերություններից մի քանիսը և դրանց նշանակությունները:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՆՄԱՆ Է ԿԱԹԻ ԵՎ ԿՈՇՏ ԿԵՐԱԿՈՒՐԻ

Թե՛ ամենահասուն հավատացյալը և թե՛ նորադարձը պատշաճ սնուցման կարիք ունեն, որպեսզի հոգևորապես առողջ լինեն և շնորհքի մեջ աճեն: Այդ «հոգևոր կերակուրը» կարելի է գտնել Աստծո Խոսքում:

1. Ի՞նչ է սովորեցնում Տեր Հիսուս Քրիստոսը Մատթեոս 4.4-ում այն փոխհարաբերության մասին, որ կա ամեն հավատացյալի և Աստծո Խոսքի միջև.

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հիսուսը չի նվազեցնում կերակուրի կարևորությունը և չի խրախուսում ասկետական կենսակերպը (*օրինակ*՝ ծայրահեղ ինքնուրացումը): Փոխարենը Նրա խոսքերը պետք է մեկնաբանել սննդի և պատշաճ սնուցման կարևորության լույսի ներքո: Նրա տրամաբանությունը պարզ է և զորավոր: Սնունդը, անշուշտ, կենսական կարևորություն ունի մարդու կյանքում, այնպես, ինչպես ջուրը և թթվածինը: Մենք չենք կարող պահպանել մեր ֆիզիկական կյանքը առանց ֆիզիկական կերակուրի: Նույն կերպ Աստծո Խոսքը կենսական կարևորություն ունի մեր հոգևոր կյանքի համար: Անհեթեթություն կլինի մտածել, որ մարդը կարող է ապրել առանց կերակուրի. նույնչափ անհեթեթ է մտածել, որ քրիստոնյան կարող է ապրել առանց Աստծո Խոսքի:

2. Այն ճշմարտությունը, որը Հիսուսը սովորեցնում է Մատթեոս 4.4-ում, հրաշալիորեն արտահայտում է Հոբի վերաբերմունքը՝ գրված Հոբ 23.12-ում: Ինչպիսի՞ վերաբերմունք ուներ Հոբը Աստծո Խոսքի նկատմամբ, և ինչպե՞ս կարող ենք դրանում նմանվել նրան.

_____

_____

3. Ոմանք սխալվում են՝ կարծելով, թե Սուրբ գիրքը միայն հովիվների և այն հավատացյալների համար է, որոնք արտասովոր պարգևներ և առաջընթաց ունեն հավատի մեջ: Նման մտածելակերպը հեռու է ճշմարտությունից: Ինչպե՞ս կարող է նորադարձ քրիստոնյան աճել, եթե Սուրբ գրքից չստանա այն սնուցումը, որն իրեն անհրաժեշտ է: Ի՞նչ է Պողոս առաքյալը հորդորում երիտասարդ հավատացյալներին Ա Պետրոս 2.2-ում: Ինչպե՞ս պետք է այդ հորդորը կիրառվի մեր ամենօրյա կյանքում.

4. Կաթը գերազանց սնուցում է մանուկներին, սակայն երեխան չի կարող աճել և հասունանալ միայն կաթով, նա պետք է սովորի նաև կոշտ կերակուր ուտել: Շատերը եկեղեցում բավարարվում են Սուրբ գրքի միայն հիմնային վարդապետություններով, չեն շարժվում առաջ՝ հասկանալու Աստծո կողմից բացահայտված ճշմարտության խորությունները կամ Նրա կամքի առավել մեծ պահանջները: Հետևաբար նրանց խորաթափանցությունն ու Տիրոջը նվիրվածությունը մնում են երեխայի մակարդակում: Կորնթոսի եկեղեցին շատ առումներով նման հոգևոր հասունության օրինակ է: Ընթերցե՛ք Ա Կորնթացիս 3.1-3-րդ խոսքերը և ծանոթացե՛ք դրանց բովանդակությանը, այնուհետև պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

ա. *Ընդհանուր առմամբ ի՞նչ կարծիք ուներ Պողոս առաքյալը հավատացյալների մասին Ա Կորնթացիս 3.1-3-րդ խոսքերում.*

բ. *Ըստ այն խոսքերի, որոնք մենք արդեն քննարկել ենք՝ ո՞րը կլիներ ամենալավ դեղամիջոցը Կորնթոսի եկեղեցու հավատացյալների հոգևոր անհասունության դեմ: Ինչպե՞ս կարող եք այդ նույն դեղամիջոցը կիրառել ձեր կյանքում.*

5. Եբրայեցիս 5.11-14-րդ խոսքերում տեսնում ենք նույն հոգևոր անհասունությունը, ինչ Կորնթոսի եկեղեցում: Ընթերցե՛ք նշված խոսքերը, ծանոթացե՛ք դրանց բովանդակությանը, այնուհետև պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

ա. *11-13-րդ խոսքերում ինչպե՞ս է հեղինակը նկարագրում այն քրիստոնյային, որը դեռևս մանուկ է Աստծո Խոսքի իմացության և կիրառության մեջ.*

բ. *14-րդ խոսքում ինչպե՞ս է հեղինակը նկարագրում հասուն քրիստոնյային և Աստծո Խոսքի հետ նրա փոխհարաբերությունը.*

գ. *Ինչպե՞ս կարող ենք մեր կյանքերում կիրառել այն ճշմարտությունները, որոնք քաղեցինք Եբրայեցիս 5.11-14-րդ խոսքերից.*

6. Բ Տիմոթեոս 2.15-րդ խոսքում ի՞նչ հորդոր է տալիս Պողոս առաքյալն իր երիտասարդ աշակերտ Տիմոթեոսին, որպեսզի վերջինս հասուն լինի Աստծո Խոսքի իմացության և կիրառության մեջ: Ինչպե՞ս կարող ենք նույն այդ հորդորը կիրառել մեր կյանքերում.

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՆՄԱՆ Է ՍԵՐՄԻ ԵՎ ԱՆՁՐԵՎԻ

Սուրբ գրքում ներկայացված ամենաազդեցիկ փոխաբերություններից երկուսը, որոնք փոխանցում են Աստծո Խոսքի զորությունը քրիստոնյայի կյանքում, այն է, որ Խոսքը սերմ է և անձրև: Ինչպես որ մեր մոլորակը չի կարող գոյություն ունենալ առանց սերմի և չի կարող աճել ու պտղաբեր լինել առանց անձրևի, այնպես էլ քրիստոնյայի կյանքը, աճը, հասունությունը և պտղաբերությունը պայմանավորված են Աստծո Խոսքով:

1. Ընթերցե՛ք Ա Պետրոս 1.23-25-րդ խոսքերը, ծանոթացե՛ք դրանց բովանդակությանը, այնուհետև պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

   ա. *Ըստ 23-րդ խոսքի՝ ո՞րն է այն սերմը, որի միջոցով Աստծո Հոգին կատարում է վերածնման հրաշալի աշխատանքը մեր սրտերում: Ինչպե՞ս ենք մենք վերստին ծնվում: Ո՞րն է այս ճշմարտության կարևորությունը.*

ՆՇՈՒՄՆԵՐ. Մենք մարդկային իմաստությունից կամ խելացի փաստարկներից չէ, որ վերստին ծնունդ ենք ստացել, այլ Աստծո զորավոր Խոսքից, որը տնկվել է մեր սրտերում Աստծո Հոգով:

բ. *Ինչպե՞ս է Աստծո Խոսքը նկարագրվում 23-25-րդ խոսքերում: Ինչպե՞ս է այդ նկարագիրը քաջալերում քրիստոնյաներին.*

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո Խոսքը ակտիվ է (*այսինքն՝* արդյունավետորեն գործում է)՝ իրականացնելով Աստծո նպատակները ամեն քրիստոնյայի սրտում: Այն նաև դիմացկուն է. նրա զորությունը երբեք չի պակասի, և նրա աշխատանքը մեր մեջ չի դադարի, քանի դեռ չի իրագործել իր նպատակը:

2. Սերմնացանի առակը Հիսուսի ամենակարևոր առակներից է, որն արտացոլում է Աստծո Խոսքի զորությունը՝ փոխելու մեր կյանքերը, և դրան ճիշտ արձագանքելու մեր պատասխանատվությունը: Ընթերցե՛ք Ղուկաս 8.4-15-րդ խոսքերը, ծանոթացե՛ք դրանց բովանդակությանը և պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

ա. *Ըստ 11-րդ խոսքի՝ ո՞րն է այն սերմը, որը ցանվում է.*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Աստծո Խոսք» նշանակում է խոսք, որը դուրս է գալիս Աստծո բերանից (Մատթեոս 4.4), և խոսք, որն Աստծո մասին է: Այն ներառում է թե՛ ավետարանը, որի միջոցով մարդը մտնում է Երկնքի արքայություն, և թե՛ Աստվածաշնչի բոլոր խորհուրդները, որոնց օգնությամբ հասունանում է: Աստծո Խոսքն անհրաժեշտ տարր է քրիստոնյայի կյանքի բոլոր փուլերում:

բ. *Ըստ 8-րդ խոսքի և Մատթեոս 13.23-ի՝ որքա՞ն առատ բերք կարող է տալ Աստծո Խոսքը մեր կյանքերում.*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այստեղից հարկավոր է սովորել այն ճշմարտությունը, որ ամեն քրիստոնյա, ով հավատարմաբար ընդունում է Աստծո Խոսքը և դրանում բնակվում, ունի առատ պտղաբերությամբ կյանքի խոստումը: Նույնիսկ մեզնից ամենափոքրերը երեսնապատիկ պտուղ բերելու խոստումն ունեն: Հարկավոր է նկատի առնել այն, որ այստեղ նաև լուրջ զգուշացում կա նրանց համար, ովքեր ասում են, թե քրիստոնյա են, բայց պտուղ չեն բերում: Նույնիսկ ամենանվիրված քրիստոնյան իր կյանքում կարող է ունենալ անպտղության ժամանակաշրջաններ, սակայն անպտուղ կյանքը ապացույցն է նրա, որ տվյալ անձնավորությունն իրականում դարձի չի եկել:

գ. *Թեև Աստծո Խոսքը զորավոր է, Սերմնացանի առակից հասկանում ենք, որ դրա արդյունավետությունը հավատացյալի կյանքում կախված է հավատացյալի սրտի վիճակից: Ըստ 12-14-րդ խոսքերի՝ որո՞նք են այն գործոնները, որ սահմանափակում են Աստծո Խոսքի աշխատանքը մեր կյանքերում.*

(1) Ս_____ (խ. 12). Սատանան Աստծո և մարդու թշնամին է: Նա անընդհատ ջանում է խանգարել Աստծո Խոսքի աշխատանքին մեր սրտերում: Այդուհանդերձ, 12-րդ խոսքի նպատակը սատանայի գործը շեշտադրելը չէ, այլ Աստծո Խոսքը լսողների պատասխանատվությունը: Սատանան կարող է «գողանալ» Աստծո Խոսքը միայն այն պարագայում, երբ տվյալ անձնավորության սիրտը քարացած է կամ չի ընդունում Խոսքը, ինչպես կոշտ ճանապարհը կամ տրորված արահետը, որի մեջ սերմը չի կարող թափանցել:

(2) Փ_____ (խ. 13). Մեկ այլ գործոն, որը կարող է սահմանափակել Աստծո Խոսքի աշխատանքը մարդու սրտում, փորձությունն է: Այս բառը թարգմանված է հունարեն ***peirasmós*** բառից և նշանակում է «փորձարկում», «ստուգում» կամ «գայթակղություն»: Սուրբ գիրքն ընդունում է, որ գայթակղություններն այս կյանքում

իրողություն են, սակայն դրանք չպետք է օգտագործվեն որպես արդարացումներ մեր պահվածքի համար: Եթե մարդը հեռանում է քրիստոնեական հավատից, դա պարզապես նշանակում է, որ նա Խոսքը մակերեսորեն է ընդունել, և այն իրականում արմատ չի գցել նրա սրտում:

(3) Այս կյանքի հ_____, հ_____, և զ_____ (խ. 14). Չնայած այն բանին, որ Աստված ինքնիշխան է, և Նրա խոսքը զորավոր է, մեր կյանքի վերջնարդյունքի վրա ազդում են նաև մեր որոշումները: Շատերը թույլ են տվել, որ Աստծո Խոսքն իրենց կյանքերում խեղդվի այս աշխարհի հոգսերի և զվարճությունների պատճառով: Շատ մարդիկ են փոխել հավիտենությունը այս կյանքի ժամանակավոր հաճույքների և հոգսերի հետ:

դ. *Ինչպե՞ս է Ղուկաս 8.15-ը նկարագրում սրտի այն տեսակը, որում Աստծո Խոսքը կարող է հարյուրապատիկ պտուղ բերել.*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հաշվի առնելով բոլոր մարդկանց սրտերի մեղսալից և բարոյապես խեղված վիճակը՝ պարզ է, որ երբ մարդը պատրաստակամություն է ցուցաբերում ճշմարտապես ընդունելու Աստծո Խոսքը, դա Աստծո շնորհքով է լինում:

3. Եսայիա 55.10-11-ում ներկայացված է Աստծո Խոսքի ամենագեղեցիկ նկարագրություններից մեկը: Ձեր բառերով բացատրե՛ք այդ խոսքերը: Ի՞նչ են այդ ճշմարտությունները նշանակում մեր կյանքերում.

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո Խոսքը ոչ միայն նման է կենդանի սերմի, այլև կենարար անձրևի: Բոլոր նպատակները, որոնք Աստված ունի մեր կյանքերի համար, կարող են իրագործվել Աստծո Խոսքի միջոցով: Եթե մենք անկեղծությամբ ընդունենք Աստծո Խոսքը, ապա այն կվերափոխի մեր կյանքերը:

4. Երկրորդ օրինաց 32.1-43-ը կոչվում է նաև «Մովսեսի երգը»: 2-րդ խոսքում Մովսեսն աղոթում է, որ Աստծո Խոսքը, որ ինքը հռչակում է, ազդեցություն ունենա Աստծո ժողովրդի կյանքերի վրա: Ինչպե՞ս կարող ենք նույն աղոթքն անել ինքներս մեզ համար, որպեսզի Աստծո Խոսքը ազդեցություն ունենա մեզ վրա: Օգտվելով աստվածաշնչյան խոսքից՝ լրացրե՛ք բաց թողնված հատվածները.

   ա. *Տեր, թո՛ղ Քո խ_____ կաթի ա_____ պես մեզ վրա: Թող Քո խ_____ իջնի ց_____ պես մեզ վրա, ինչպես ա_____ ա_____թարմ խ_____ վրա:*

5. Եբրայեցիս 6.7-8-րդ խոսքերում պարունակվում է խիստ զգուշացում Աստծո Խոսքին ճիշտ արձագանքելու մարդու պատասխանատվության վերաբերյալ: Այն շատ նման է Սերմնացանի առակի զգուշացումներին: Ի՞նչ զգուշացում է տրվում, և ինչպե՞ս պետք է այն կիրառենք մեր կյանքերում.

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Նույնիսկ ամենանվիրված քրիստոնյան երբեմն կարող է պայքարել Խոսքի հանդեպ անտարբերության դեմ և անցնել բացահայտ անպտղության ժամանակաշրջաններով: Սակայն եթե մարդու ամբողջ կյանքի ընթացքում մշտապես անպտղություն և նույնիսկ ապստամբություն է տիրում Աստծո Խոսքի նկատմամբ, ապա վերջինս պետք է խորհի այն ցավալի ճշմարտության շուրջ, որ ինքը գուցե իսկապես դարձի չի եկել:

Գլուխ 17. Պատշաճ վերաբերմունք Աստծո Խոսքի նկատմամբ

Մաս 1. Ուսումնասիրե՛ք և սիրե՛ք Աստծո Խոսքը

Աստվածաշունչը Աստծո Խոսքն է՝ ներշնչված Աստծուց, անփոխարինելի՝ փրկության և քրիստոնեական կյանքի համար: Աստված Ինքն Իրեն է մեզ նվիրել. այդ նվերից հետո ամենամեծ նվերը, որն Աստված տվել է քրիստոնյային, Աստվածաշունչն է: Ինչիպիսի՞ն պետք է լինի մեր վերաբերմունքը այս աննկարագրելի նվերին: Այս և հաջորդ գլուխներում կփորձենք պատասխանել այս հարցին:

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱ, ՈՐ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՀԱՍԱՆԵԼԻ Է ԻՐԵՆ

Շատ քրիստոնյաներ չեն ուսումնասիրում Աստվածաշունչը, քանի որ կարծում են, թե հասանելի չէ այն իրենց համար կամ չափից բարդ է «հասարակ» հավատացյալի համար: Նման վերաբերմունքը ողբերգական է, վնասաբեր և ուղղակիորեն հակասում է հենց Աստվածաշնչին: Սուրբ գիրքը տրվել է ամբողջ Եկեղեցուն, իսկ Աստված ամեն հավատացյալի տվել է դրա ճշմարտությունները հասկանալու և դրանց լույսի ներքո ապրելու կարողություն:

1. Ի՞նչ է մեզ սովորեցնում Ա Պետրոս 2.9-ը բոլոր քրիստոնյաների մասին՝ սկսած ամենապատրաստված գիտնականից մինչև նորադարձ «մանուկ» քրիստոնյան.

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Բոլոր քրիստոնյաների քահանայությունը Աստվածաշնչի ամենակարևոր ուսմունքներից է: Բոլոր քրիստոնյաները քահանաներ են Աստծո առջև՝ Նրան ճանաչելու և Նրա անվամբ ծառայելու հավասար արտոնություններով: Աստվածաշունչը միայն հովիվների և աստվածաբանների համար չէ. այն բոլոր քրիստոնյաների համար է: Մենք կարող ենք ճանաչել Աստծուն և Նրա խոսքը. ավելին՝ Նա կարող է նաև տալ մեզ Իր գերազանցության մասին այլոց պատմելու կարողություն:

2. Ի՞նչ է սովորեցնում մեզ Ա Կորնթացիս 2.14-ը շնչավոր (*այսինքն՝* դարձի չեկած) մարդու և Աստծո Խոսքի փոխհարաբերության մասին.

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հոգևոր կերպով քննվել» արտահայտությունը կարելի է թարգմանել նաև որպես «հոգևոր կերպով հասկացվել»: Աստվածաշնչի ճշմարտությունները հասկանալու կամ տարբերակելու համար մարդը պետք է լուսավորվի կամ ուղղորդվի Սուրբ Հոգով:

3. Ա Կորնթացիս 2.14-ը սովորեցնում է մեզ, որ նույնիսկ ամենախելացի մարդը չի կարող իրապես հասկանալ Աստծո Խոսքը, եթե դարձի չի եկել: Ի հակադրություն դրա՝ ի՞նչ են մեզ սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան խոսքերը Աստծո Խոսքի հետ հավատացյալի փոխհարաբերության մասին:

ա. *Ա Կորնթացիս 2.12*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մենք» անձնական դերանունը ցույց է տալիս, որ Պողոս առաքյալն այդ խոստումն ուղղում է իր նման հավատացյալներին:

բ. *Ա Հովհաննես 5.20*

ՆՇՈՒՄՆԵՐ. Քրիստոսն Իր մարդացմամբ Աստծուն հայտնել է մարդկանց (Հովհաննես 1.18), սակայն Նա նաև շարունակում է Սուրբ Հոգու ծառայությամբ լույս ու հասկացողություն տալ բոլոր քրիստոնյաներին:

գ. *Ա Հովհաննես 2.27*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Օծություն» բառը թարգմանված է հունարեն ***chrísma*** բառից, որը վերաբերում է Սուրբ Հոգուն: «Պետք չունեք, որ մեկը սովորեցնի ձեզ» արտահայտությունը պետք է հասկանալ այս համատեքստում: Ամենայն հավանականությամբ Հովհաննես առաքյալը պայքարում է կեղծ ուսուցիչների այն ստի դեմ, թե իբր «հասարակ» հավատացյալները չեն կարող հասկանալ Աստծո ճշմարտությունն առանց իրենց ուղղորդման: Հովհաննեսն ասում է, որ բոլոր հավատացյալներն ունեն ուսուցիչներից ամենամեծին՝ Սուրբ Հոգուն: Նա չէր մերժում Աստվածաշնչի այն պարզ վարդապետությունը, որ Աստված եկեղեցուն տվել է ծառայողների, որոնք ունեն գիտության և ուսուցչության հատուկ պարգևը (Եփեսացիս 4.11-12):

4. Ի՞նչ խոստումներ ենք գտնում հետևյալ աստվածաշնչյան խոսքերում, որոնք քաջալերում են մեզ վստահությամբ և ուրախությամբ սերտել Աստծո Խոսքը.

ա. *Երկրորդ օրինաց 29.29*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այստեղ մի շարք վճռորոշ ճշմարտություններ են ամփոփված, որոնք մենք չպետք է անտարբերության մատնենք: Առաջինը՝ կան ծածուկ բաներ, որոնք Աստված պահում է Ինքն Իր համար. մենք պետք է խոնարհությամբ վարվենք Նրա առջև և վստահենք Նրան, նույնիսկ երբ ինչ-որ բան չենք հասկանում: Երկրորդը՝ այն ճշմարտությունները, որոնք Աստված հայտնում է մեզ, ոչ միայն մեր խորհրդածության, այլև մեր հնազանդության համար են:

բ. *Երկրորդ օրինաց 30.11-14*

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Թեև Աստվածաշնչում կան շատ խոր ճշմարտություններ, որոնք դժվարըմբռնելի են, անգամ նորադարձ հավատացյալը կարող է հասկանալ Աստվածաշնչի մեծ մասը և հնազանդվել դրան:

գ. *Առակաց 2.3-6*

5. Գործք 17.10, 11-ում մեզ հրաշալի օրինակ է տրված այն մասին, թե ինչպես պետք է հասունության տարբեր մակարդակներ ունեցող հավատացյալներն արձագանքեն Աստծո Խոսքին: Ի՞նչ կարևոր ճշմարտություն ենք սովորում Բերիայի հավատացյալներից: Ինչպե՞ս պետք է ընդօրինակենք նրանց.

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ՊԵՏՔ Է ՍԻՐԻ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՎ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՀԱՐԳԱՆՔԸ ՏԱԾԻ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ

Աստվածաշունչն անանձնական կանոնների և դժվարակիր պատվիրանների չոր գիրք չէ. այն Աստծո սիրո և հավատարմության վկայությունն է Իր ժողովրդին: Սուրբ գրքում մենք գտնում ենք Աստծո սերն ու շնորհքը, որով Նա փրկեց մեզ, ինչպես նաև Աստծո իմաստությունը, որով սովորեցնում է մեզ ինչպես ապրել: Այն քրիստոնյան, որը ուսումնասիրում և կիրառում է Աստծո Խոսքը, կսովորի սիրել և գնահատել Գրքերի Գիրքը, որն անչափելի օրհնություն է բերում:

ՊԱՏՇԱՃ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԱՍՏԾՈ ԽՈՍՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ (ՄԱՍ ՄԵԿ)

1. Դավթի սաղմոսներում տեսնում ենք այն մեծ սերն ու հարգանքը, որն Իսրայելի թագավորն իր սրտում ուներ Աստծո Խոսքի նկատմամբ: Բացատրե՛ք, թե ինչպես պետք է այս խոսքերից յուրաքանչյուրն արտացոլվի ամեն քրիստոնյայի կյանքում.

   ա. *Սաղմոս 119.47-48*

   _____

   _____

   _____

   _____

   բ. *Սաղմոս 119.127-131*

   _____

   _____

   _____

   _____

   գ. *Սաղմոս 119.14, 72, 162*

   _____

   _____

   _____

   _____

   դ. *Սաղմոս 56.4*

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Սա ապշեցուցիչ խոսք է: Այն, թե ինչպես է Դավիթը գովաբանում Աստծո Խոսքը, ցույց է տալիս, թե որքան բարձր տեղ է այն զբաղեցնում Նրա սրտում: Աստծո Խոսքն Աստծուց անկախ չէ. այն դուրս է գալիս Նրա բերանից (Մատթեոսի 4.4) և կրում է Նրա անբասիր հատկանիշները:

2. Ըստ Սաղմոս 119-ի հետևյալ խոսքերի՝ ինչպե՞ս էր Դավիթը ցույց տալիս, որ իր սերն ու հարգանքն Աստծո Խոսքի նկատմամբ անկեղծ էին.

   ա. *Խորհրդածություն (Սաղմոս 119.97)*

   _____

   _____

   _____

   _____

   _____

   բ. *Հնազանդություն (Սաղմոս 119.167)*

   _____

   _____

   _____

   _____

   _____

   գ. *Նախանձախնդրություն (Սաղմոս 119.136, 139)*

   _____

   _____

   _____

   _____

   _____

3. Մարկոս 4.23-25-րդ խոսքերում Տեր Հիսուս Քրիստոսը շատ կարևոր խրատ և զգուշացում է տալիս Աստծո Խոսքին ճիշտ արձագանքելու և այն գնահատելու մասին: Համառոտ գրի՛ առեք Նրա խոսքերը և կիրառե՛ք դրանք ձեր կյանքում.

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Որքան ավելի ենք արժևորում Աստծո Խոսքը և նվիրվում դրան, այնքան ավելի խոր ճանաչողություն է տրվում մեզ: Իսկ երբ անտեսում ենք Աստծո Խոսքը, նույնիսկ այն խորաթափանցությունը, որ ունենք, վերցվում է մեզնից:

4. Արդյոք դուք նույն վերաբերմունքն ունե՞ք Աստծո Խոսքի նկատմամբ, ինչ Դավիթը: Ունե՞ք նման նախանձախնդրություն: Ինչպե՞ս է ձեր առօրյա կյանքում արատահայտվում ձեր սերն ու մեծ հարգանքն Աստծո Խոսքի նկատմամբ: Արդյոք ապաշխարելու կարիք ունե՞ք: Գրի՛ առեք ձեր մտքերը.

Գլուխ 18. Պատշաճ վերաբերմունք Աստծո Խոսքի նկատմամբ

Մաս 2. Ակնածանք և հարգանք Խոսքի նկատմամբ

Այս գլխում կշարունակենք ուսումնասիրել այն, թե ինչպիսին պետք է լինի ամեն քրիստոնյայի վերաբերմունքն Աստծո Խոսքին:

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ՊԵՏՔ Է ԱԿՆԱԾԱՆՔ ՏԱԾԻ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Աստվածաշունչն է այն գիրքը, որն Աստված տվել է մեզ, որպեսզի ճանաչենք Իրեն և Իր կամքը: Այն մարդկային խոսք չէ, այլ Աստծո Խոսքն է (Ա Թեսաղոնիկեցիս 2.13), հետևաբար ամեն բառն արժանի է ակնածանքի և հնազանդության: Աստվածաշունչն անկարևոր կամ ապարդյուն բան չէ. այն մեր կյանքն է (Երկրորդ օրինաց 32.47): Այդ իսկ պատճառով Սուրբ գիրքը մեր ներսում պետք է առաջացնի հիացմունքի և նույնիսկ երկյուղի զգացողություն:

1. Սուրբ գիրքը սովորեցնում է մեզ, որ Տիրոջ և Նրա անվան երկյուղը (կամ ակնածանքը) Նրա հետ մեր փոխհարաբերության ամենակարևոր բաղկացուցիչներից է: Ըստ Սաղմոս 138.2-ի՝ ի՞նչն է Տերն Իր անունից ավելի բարձրացրել: Ի՞նչ է սա մեզ սովորեցնում Աստծո Խոսքի հետ մեր փոխհարաբերության մասին: Եթե մենք ակնածանքով ենք մոտենում Տիրոջ անվանը, ապա արդյոք չպե՞տք է ակնածանքով մոտենանք Նրա Խոսքին.

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Դու Քո Խոսքը բարձրացրիր Քո անվան հետ» (NASB. Այլընտրանքային ընթերցանություն): «Դու Քո Խոսքը Քո անունից վեր բարձրացրիր» (NKJV): «Ամեն բանից վեր ես բարձրացրել Քո անունը և Քո խոսքը» (ESV):

2. Եթե մենք ունենք Տիրոջ երկյուղը կամ ակնածանք ենք տածում Նրա նկատմամբ, ապա պետք է նաև երկյուղենք Նրա Խոսքից, որը Նա բարձրացրել է Իր անվան հետ: Ի՞նչ է սովորեցնում մեզ Սաղմոս 119.161-ը այն երկյուղի և ակնածանքի մասին, որ ամեն քրիստոնյա պետք է ունենա Աստծո Խոսքի նկատմամբ.

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Վախ» բառը թարգմանված է Եբրայերեն ***pachad*** բառից, որը կարելի է թարգմանել նաև «երկյուղ» կամ «ահ»: Դավիթը չէր վախենում երկրի ամենազորավոր մարդուց, սակայն նա երկյուղածությամբ էր մոտենում Աստծո Խոսքին:

3. Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ Տիրոջ երկյուղը ակնածանքով լի վերաբերմունքն է Աստծո հանդեպ, ինչի շնորհիվ մեր կյանքերում բարոյական խոշոր փոփոխություններ են տեղի ունենում: Նրանք, ովքեր երկյուղ ունեն Տիրոջից, երկյուղ կունենան նաև Նրա Խոսքից և կհնազանդվեն դրան: Ըստ Երկրորդ օրինաց 10.12-13-րդ խոսքերի՝ նկարագրե՛ք այն մարդկանց կենսակերպը, ովքեր իսկապես ապրում են Տիրոջ և Նրա Խոսքի երկյուղով.

4. Ըստ Եսայիա 66.2-ի՝ ի՞նչ է Աստված խոստանում նրանց, ովքեր երկյուղով են մոտենում կամ ակնածանք են ցուցաբերում Նրա Խոսքի նկատմամբ.

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ես սրան եմ մտիկ տալիս» արտահայտությունը Աստծո հատուկ ուշադրության, ընկերակցության և օրհնության խոստում է:

5. Քրիստոնյայի կյանքի համար հիմնարար կարևորություն ունի ակնածանքը Աստծո և Նրա Խոսքի նկատմամբ: Ինչպե՞ս է ձեր փոխհարաբերությունն Աստծո Խոսքի հետ արտացոլում ձեր ակնածանքը դրա նկատմամբ: Արդյոք ապաշխարության կարիք ունե՞ք կյանքի այս բնագավառում: Գրի՛ առեք ձեր մտքերը.

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՊԵՏՔ Է ՀԱՄԱՐԻ ԲԱՑԱՐՁԱԿ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Գուցե վերոնշյալ պնդումը ոչ անհրաժեշտ կամ ավելորդ համարվի, քանի որ ամեն քրիստոնյա հստակ գիտակցում է, որ Աստծո Խոսքը անհրաժեշտություն է: Այդուհանդերձ, քրիստոնյաներից քանի՞սն են այս ճշմարտությունը կիրառում իրենց ամենօրյա կյանքում: Քանի՞սն են Աստվածաշունչն այնպես սերտում, կարծես իրենց կյանքերը կախված են դրանից: Առեղծված չէ այն, թե ինչու որոշ քրիստոնյաներ կարծես քայլում են արտասովոր ուժով և իմաստությամբ, մինչդեռ մյուսները թույլ են և մոլորված: Առաջինները Աստծո Խոսքը դարձրել են իրենց անհրաժեշտ սնունդը և մշտական ուսուցիչը, երբ մյուսներն անտեսում են Աստծո Խոսքը ի վնաս իրենց:

1. Մեր մարդկային ֆիզիկական մեծ կարիքներից է սնունդը: Մարդը չի կարող գոյատևել առանց սնվելու. շատերի ֆիզիկական և մտավոր զարգացվածությունը լրջորեն խաթարվում է անհրաժեշտ սննդարար նյութերի պակասի պատճառով: Ըստ Մատթեոսի 4.4-ի՝ ինչպե՞ս կարելի է այս սկզբունքը կիրառել հոգևոր կյանքում.

_____

_____

_____

_____

2. Ի՞նչ է սովորեցնում Երկրորդ օրինաց 32.46, 47-ը Աստծո Խոսքի գերակա (այսինքն՝ բարձրագույն կարևորության) բնույթի մասին ամեն քրիստոնյայի կյանքում.

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքերից պետք է քաղել այն ճշմարտությունը, որ մեր կյանքերը լիովին և կատարելապես կախված են Աստծո Խոսքում բացահայտված մեծ ճշմարտություններից: Անհնար է գերագնահատել այս ճշմարտությունը:

3. Ստորև ներկայացված են հավատացյալի կյանքում Աստծո Խոսքի կարևորությունը ներկայացնող ամենագեղեցիկ և զորավոր խոսքերից երկուսը: Նշե՛ք խոսքերից յուրաքանչյուրում խոստացված օրհնությունները և պահանջված պատասխանատվությունը.

   ա. *Հեսու 1.7, 8*

   _____

   _____

բ. *Սաղմոս 1.1-3*

4. Հիմնվելով այս և նախորդ գլուխներում մեր սովորածի վրա՝ բացատրե՛ք, թե ինչու է Աստծո Խոսքը բացարձակ անհրաժեշտություն, եթե քրիստոնյան ցանկանում է աճել ու հասունանալ հավատի մեջ և քայլել Աստծո զորությամբ և իմաստությամբ.

Գլուխ 19. Սուրբ Հոգին և Սուրբ գիրքը

Աստվածաշունչը հոգևոր գիրք է: Այն գրվել է Սուրբ Հոգու կողմից և կարող է մեկնաբանվել միայն Նրա ուղղորդմամբ և լուսավորմամբ: Հետևաբար Աստծո Խոսքը մեկնաբանելու մեր կարողության համար կարևոր գործոն է մեր փոխհարաբերությունը և հաղորդակցությունը Նրա հետ աղոթքի միջոցով: Իրականում մենք պարզապես չենք կարող ճիշտ մեկնաբանել Աստվածաշունչը առանց աղոթքի և Սուրբ Հոգու լուսավորչական աշխատանքի:

ՆԵՐՇՆՉՈՒՄ ԵՎ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ

Մինչ կշարունակենք մեր ուսումնասիրությունը, կարևոր է հասկանալ Սուրբ Հոգու և Սուրբ գրքի փոխհարաբերությունը նկարագրող երկու առանցքային բառերը կամ հայեցակարգերը: Ստորև սահմանված այդ երկու հայեցակարգերն են ***ներշնչումը*** և ***լուսավորումը***:

> **Սուրբ Հոգու ներշնչումը.** Սուրբ գրքի հեղինակների վրա Սուրբ Հոգու գերբնական ազդեցությամբ գրի է առնվել Աստծո բացարձակապես անսխալ ու արժանահավատ հայտնությունը:
>
> **Սուրբ Հոգու լուսավորումը.** Սուրբ Հոգու գերբնական աշխատանքն է նրանցում, ովքեր ընթերցում են Սուրբ գիրքը, որի միջոցով Նա սովորեցնում է այն քրիստոնյաներին, որոնք Աստծո Խոսքի մեջ անկեղծորեն փնտրում են Նրա կամքը և ճշմարտությունը:

Աստված Սուրբ գիրքը բացում է հավատացյալի համար և սովորեցնում նրան դրա փառահեղ ճշմարտությունները այն լուսավորչական աշխատանքի շնորհիվ, որ Սուրբ Հոգին է անում: ***Քանի որ անհնար կլիներ գրել Աստվածաշունչն առանց Սուրբ Հոգու ներշնչման, անհնար է նաև Աստվածաշնչի մեկնաբանությունն առանց Սուրբ Հոգու լուսավորման:*** Սուրբ Հոգու այս երկու ծառայությունները անպայմանորեն անհրաժեշտ են, և կարևոր է հասկանալ դրանց տարբերությունը:

1. **Լուսավորումը ներշնչում չէ:** Այն փաստը, որ Սուրբ Հոգին է ներշնչել Սուրբ գրքի հեղինակներին, երաշխավորում է Աստծո կամքի կատարյալ հաղորդումը: Թեև Սուրբ Հոգու լուսավորումը կարևոր է, որ հասկանանք Աստծո Խոսքը, այն չի երաշխավորում, որ մեր մեկնաբանությունները միշտ ճիշտ կլինեն: Կան այլ գործոններ, որոնք կարող են խանգարել մեր հասկացողությանը, ինչպես, օրինակ՝ հպարտությունը, սրտի կարծրությունը, սխալ համոզմունքները և խեղաթյուրված ենթադրությունները:

2. **Սուրբ Հոգին երբեք չի սովորեցնի որևէ բան, որը չի համապատասխանում Իր իսկ կողմից ներշնչված Աստծո Խոսքի հիմունքներին:** Թեև միևնույն աստվածաշնչյան խոսքը կարող է ունենալ շատ տարբեր ***կիրառություններ*** քրիստոնյայի կյանքում, այն ունի միայն մեկ ճիշտ ***մեկնաբանություն***, որը համապատասխանում է դրա քերականական և համատեքստային նշանակությանը: Եթե մենք խոսքը մեկնաբանենք դրանում օգտագործված բառերով հաղորդվող հայտնությանը հակառակ կամ դրան որևէ բան ավելացնենք, ապա լուրջ և վտանգավոր սխալ թույլ տված կլինենք:

3. **Սուրբ Հոգու լուսավորչական աշխատանքը չի վերացնում ուսուցիչների, քարոզիչների, աստվածաշնչյան ուսումնական հաստատությունների կամ ճեմարանների անհրաժեշտությունը:** Հռոմեացիս 12.7-րդ և Եփեսացիս 4.11-րդ խոսքերում Սուրբ գիրքը հստակ սովորեցնում է, որ Տերն է եկեղեցու որոշ անդամների տվել սովորեցնելու պարգևը, և որ նրանք կարող են գործիք լինել, ում միջոցով Սուրբ Հոգին կսովորեցնի եկեղեցուն:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍՈՒՐԲ ԳՐՔՈՒՄ

Մենք միշտ պետք է հիշենք, որ կա տարբերություն Սուրբ գրքի ներշնչման և լուսավորման միջև: Սուրբ Հոգու լուսավորումը չի երաշխավորում, որ Աստվածաշնչի մեր բոլոր մեկնաբանությունները ճիշտ կլինեն: Շատ քրիստոնյաներ՝ նույնիսկ առաջնորդներ, շեղվել են աստվածաշնչյան ուսմունքից՝ առաջնորդվելով Սուրբ Հոգու ենթադրյալ լուսավորմամբ՝ չհնազանդվելով Սուրբ գրքի հիմունքներին, որը Սուրբ Հոգին Ինքն է գրել: Լուսավորում չի նշանակում, որ Հոգին կառաջնորդի մեզ ձայնի կամ զգացողության միջոցով, այլ որ կսովորեցնի մեզ Սուրբ գրքում Իր կողմից գրվածի միջոցով:

1. Հովհաննես 14.26-րդ և Հովհաննես 16.13-15-րդ խոսքերը հաճախ են մեջբերվում, երբ խոսքը Սուրբ Հոգու լուսավորչական աշխատանքի մասին է: Թեև այս խոսքերն ունեն ընդհանուր և սահմանափակ կիրառություն բոլոր հավատացյալների համար, Քրիստոսը նախ և առաջ նկատի ուներ այն ներշնչանքը, որ Սուրբ Հոգին տվել էր առաքյալներին՝ Նոր Կտակարանը գրելու համար: Կան Սուրբ գրքի այլ խոսքեր ևս, որոնք վերաբերում են լուսավորման ուսմունքին և վստահաբար վերաբերում են բոլոր ժամանակներում և բոլոր վայրերում ապրող հավատացյալներին: Ստորև նշված են այդ խոսքերից ամենակարևորները: Բացատրե՛ք դրանց նշանակությունը և կիրառությունը բոլոր քրիստոնյաների կյանքերում.

   ա. *Հռոմեացիս 8.14*

   _____

   _____

   _____

   _____

   _____

   _____

   ՆՇՈՒՄՆԵՐ. «Վարվել» բայը օգտագործված է ներկա ժամանակաձևով, ինչը ցույց է տալիս շարունակական գործողություն: Աստծո Հոգին հավատարիմ է՝ առաջնորդելու քրիստոնյաներին, հատկապես երբ վերջիններս ջանասիրաբար ուսումնասիրում են Աստծո Խոսքը:

   բ. *Ա Կորնթացիս 2.9-10*

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Սուրբ Հոգին հավատացյալների համար բացահայտում է այն հոգևոր իրողությունները, որոնք անըմբռնելի են շնչավոր կամ դարձի չեկած մարդկանց համար: Այս խոստումն էլ ավելի շոշափելի է դառնում, երբ մենք նվիրվում ենք այդ հոգևոր իրողություններն Աստծո Խոսքում փնտրելուն:

գ. *Ա Կորնթացիս 2.12*

դ. *Ա Հովհաննես 2.27*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Օծություն» բառը թարգմանված է հունարեն ***chrísma*** բառից: Այս համատեքստում այն վերաբերում է Սուրբ Հոգու Անձին: Սրանով չի հերքվում ուսուցիչների կամ քարոզիչների անհրաժեշտությունը (Հռոմեացիս 12.7 և Եփեսացիս 4.11-12): Այն պարզապես հաստատում է, որ ամեն հավատացյալ ունակ է հասկանալու Աստծո Խոսքի կարևոր ճշմարտությունները Սուրբ Հոգու լուսավորչական աշխատանքի շնորհիվ:

2. Սովորեցինք, որ Սուրբ Հոգին տրվել է՝ առաջնորդելու մեզ դեպի Աստծո Խոսքի զարմանալի ճշմարտությունները: Այդուհանդերձ, ըստ հետևյալ խոսքերի՝ ինչպե՞ս կարող ենք մենք

սահմանափակել Սուրբ Հոգու լուսավորչական աշխատանքը մեր ներսում: Վտանգներից յուրաքանչյուրը համապատասխանեցրե՛ք աստվածաշնչյան խոսքին.

_____ *Մատթեոս 13.15*

ա. *Ցանկանալով լսել միայն այն ճշմարտությունները, որոնք շոյում են մեր ականջները (այսինքն՝ հաճեցնում են մեր մարմնին և անհարմարություն չեն պատճառում):*

_____ *Գործք 7.51*

բ. *Արագ մոռանալով այն ճշմարտությունները, որոնք սովորել ենք, և չկիրառելով դրանք*:

_____ *Ա Թեսաղոնիկեցիս 5.19-20*

գ. *Հակառակվելով Սուրբ գրքի ճշմարտություններին, որոնցով առաջնորդում է Սուրբ Հոգին*:

_____ *Բ Տիմոթեոս 4.3*

դ. *Ցանկանալով միայն կաթ կամ Խոսքի փարրական վարդապետությունները և մերժելով առավել պահանջկոտ և խոր վարդապետությունները, որոնք տանում են հասունության:*

_____ *Եբրայեցիս 5.13-14*

ե. *Միտումնավոր փակելով մեր աչքերը աստվածաշնչյան ճշմարտությունների առջև, որոնք չենք ցանկանում լսել:*

_____ *Հակոբոս 1.22-25*

զ. *Արհամարհելով այն ճշմարտությունները, որոնք փոխանցվել են մեզ Խոսքի քարոզչության կամ անձնական ուսումնասիրության միջոցով*:

3. Վերոնշյալ աստվածաշնչյան խոսքերը ցույց են տալիս, որ մենք պետք է զգույշ լինենք, որ չխանգարենք և չսահմանափակենք Հոգու լուսավորչական աշխատանքը մեր կյանքերում: Ըստ հետևյալ աստվածաշնչյան խոսքերի՝ ի՞նչ կարող ենք անել Սուրբ Հոգու հետ համագործակցելու և Աստծո ճանաչողության մեջ աճելու համար: Համապատասխանեցրե՛ք գործողություններից յուրաքանչյուրը աստվածաշնչյան խոսքերին.

_____ *Հովհաննես 7.17*

ա. *Պետք է ջանասեր լինենք Սուրբ գիրքը ուսումնասիրելու մեջ: Աստված որոշել է, որ Աստվածաշունչն է այն միջոցը, որով մենք աճում ենք Իր Անձի և կամքի ճանաչողության մեջ:*

_____ *Մարկոս 4.24-25*

բ. *Պետք է պատրաստակամ լինենք հնազանդվելու այն ճշմարտությանը, որը հույս ունենք գտնելու: Ինչո՞ւ պետք է Հոգին ճշմարտությունը սովորեցնի մեկին, ով պատրաստակամ չէ հնազանդվելու դրան:*

_____ *Բ Տիմոթեոս 2.15*

գ. *Պետք է պատրաստակամ լինենք գործի դնելու այն, ինչը սովորում և սովորեցնում ենք ուրիշներին: Ճշմարտությամբ պետք է հաղորդակցվենք ուրիշների հետ:*

_____ *Եզրաս 7.10*

դ. *Մեծ հարգանք պետք է տածենք Աստծո ճշմարտության հանդեպ և ճիշտ արձագանքենք այն ճշմարտությանը, որին տիրապետում ենք: Ինչո՞ւ պետք է Աստված ավելի շատ ճշմարտություններ բացի մեզ համար, եթե մենք չենք հնազանդվում այն ճշմարտությանը, որն արդեն գիտենք:*

Գլուխ 20. Աղոթքը և Սուրբ գիրքը

Նախորդ գլխում սովորեցինք, որ առանց Աստծո օգնության չենք կարող հասկանալ և ճիշտ կիրառել Աստծո Խոսքը մեր կյանքերում: Միայն մեր մտքով չենք կարող հասկանալ Աստծո բաները, իսկ մեր սրտերը միշտ չէ, որ բաց ու զգայուն են Նրա կամքի համար: Այս պատճառով մենք ունենք Սուրբ Հոգու կարիքը, որ Նա լուսավորի Խոսքը, բացի մեր սրտերը և սովորեցնի մեզ ճշմարտությունը: Մենք ուսանողներ ենք, Աստվածաշունչը գրվածք է, իսկ Սուրբ Հոգին Ուսուցիչն է, Ում կարող ենք լիովին վստահել և Ումից պետք է կախված լինենք: Կատարյալ կախվածության այս փոխհարաբերության մեջ է, որ բացահայտում ենք աղոթքի կենսական կարևորությունը: Մենք չպետք է պարզապես ենթադրենք, որ Աստված օգնելու է մեզ հասկանալու Իր Խոսքը, այլ հավատով կանչենք Նրան և հետևենք Նրա առաջնորդությանը: Ստորև կուսումնասիրենք աղոթքի և Աստծո Խոսքի մեկնաբանության կարևոր կապը:

1. Ճիշտ է, շատ քրիստոնյաներ դժվարությունների են բախվում Աստծո Խոսքը ուսումնասիրելու իրենց փորձերում, ինչի պատճառով հաճախ թողնում են ուսումնասիրությունը: Նրանք կարծում են, թե Սուրբ գիրքը դժվարըմբռնելի է, կամ ընթերցանությունն ու ուսումնասիրությունը չոր և իրական օրհնությունից զուրկ են թվում նրանց: Նրանք համոզված են, որ Սուրբ գիրքը միայն եկեղեցու հովվի կամ ճեմարանի աստվածաբանի համար է: Սակայն չեն գիտակցում, որ այս հարցում իրենց ձախողման պատճառը կարող է լինել իրենց ուսումնասիրության ժամանակ բացակայող տարրը՝ աղոթքը: Ի՞նչ է մեզ սովորեցնում Հակոբոս 4.2-րդ խոսքը այս ճշմարտության վերաբերյալ.

   ա. *Չ*_____ *որովհետև չեք խ*_____*:*

   ՆՇՈՒՄՆԵՐ. Թեև այս խոսքի ուղղակի համատեքստը վերաբերում է նյութական օրհնությանը, դրա ավելի լայն կիրառությունը վերաբերում է հավատացյալի յուրաքանչյուր կարիքին: Եթե մենք դժվարանում ենք հասկանալ Աստծո Խոսքի ճշմարտությունները և կիրառել դրանք մեր կյանքերում, ապա մեզ հորդորվում է Տիրոջից խնդրել, քանի որ Նա շնորհառատ է Իր ժողովրդի հանդեպ և ցանկանում է, որ վերջիններս ճանաչեն Իր Անձը, Իր գործերը և Իր կամքը:

2. Երբ Սուրբ գիրքը ուսումնասիրելիս չենք աղոթում, դա ցույց է տալիս մեր ինքնաբավ վերաբերմունքը, մեզ թվում է, թե ինքներս կարող ենք հասկանալ Խոսքը՝ առանց Հեղինակի օգնության: Իրականություն վերադառնալու համար բավական է ինքներս մեզ հարց ուղղենք. «Ինչպե՞ս կարող է սահմանափակ մարդը հասկանալ սահմաններ չունեցող Հեղինակի կողմից գրված անըմբռնելի Գիրքը»: Մենք պետք է գիտակցենք, թե որքան շատ ունենք Աստծո կարիքը, և աղոթքով դիմենք Նրան: Ի՞նչ է խոստանում Հակոբոս 1.5-ը բոլոր հավատացյալներին, ովքեր Աստծո օգնության կարիքն ունեն՝ Նրա կամքը հասկանալու համար: Ինչպե՞ս պետք է ապրենք այս ճշմարտության լույսի ներքո.

   _____

   _____

3. Հակոբոս 1.5-ում Աստված խոստանում է իմաստություն տալ «առատությամբ՝ առանց նախատելու» բոլոր նրանց, ովքեր աղոթքով խնդրում են Նրանից: Այդուհանդերձ, 6-8-րդ խոսքերում Աստված նաև ուղղորդում է ինչպես աղոթել իմաստության համար: Ամփոփ ներկայացրե՛ք այն ճշմարտությունները, որոնք գրված են այս խոսքերում, և դրանց լույսի ներքո բացատրե՛ք, թե ինչպես է պետք աղոթել.

4. Սուրբ գիրքը լի է խոստումներով նրանց համար, ովքեր աղոթքով փնտրում են Աստծուն՝ Նրա Խոսքը հասկանալու և իրենց կյանքերում կիրառելու համար: Ամփոփ ներկայացրե՛ք այն խոստումները, որոնք գրված են ստորև բերված աստվածաշնչյան խոսքերում, և բացատրե՛ք, թե ինչպես պետք է ապրենք դրանց լույսի ներքո.

ա. *Երեմիա 33.3*

ՆՇՈՒՄՆԵՐ. Թեև այս խոստումը մասնավորապես վերաբերում է Երեմիային, այն նաև ավելի լայն կիրառություն ունի բոլոր դարերում ապրող հավատացյալների համար, ինչ իրավիճակում էլ լինեն: Աստված բերկրանք է ապրում՝ Իր Անձը, գործերը և կամքը հայտնելով նրանց, ովքեր հավատքով փնտրում են Իրեն:

բ. *Առակաց 2.2-7*

գ. *Մատթեոս 7.7-11*

5. Մենք սահմանեցինք, որ աղոթքը Սուրբ գրքի մեկնաբանության անփոխարինելի տարր է, սակայն ***ինչպե՞ս*** պետք է աղոթենք: Փառք Աստծուն, որ ունենք այս հարցի պատասխանը: Աստվածաշնչյան այն խոսքերը, որոնք խրատում են մեզ, սովորեցնում են նաև աղոթել: Ստորև կդիտարկենք Դավիթ թագավորի և Պողոս առաքյալի աղոթքները: Ուսումնասիրելով Աստծուց ներշնչված աղոթքները՝ կարող ենք սովորել ինչպես Աստծուց օգնություն խնդրել, երբ սերտում ենք Իր Խոսքը: Նշե՛ք, թե ինչ խնդրվածքներ են ներկայացված աղոթքներից յուրաքանչյուրում.

ա. *Սաղմոս 119.18*

բ. *Սաղմոս 119.26-32*

գ. *Սաղմոս 119.33-38*

ՆՇՈՒՄՆԵՐ. 38-րդ խոսքը կարելի է թարգմանել նաև հետևյալ կերպ. «Հաստատի՛ր ծառայիդ համար խոստումդ, որ Քեզնից երկյուղի» (ESV):

դ. *Եփեսացիս 1.15-19ա*

ՆՇՈՒՄՆԵՐ. 17-րդ խոսքում «Հոգի» բառն ունի երկու հնարավոր մեկնաբանություն՝ (1) այն վերաբերում է Սուրբ Հոգուն, Ում միջոցով Աստված իմաստություն և հայտնություն է տալիս Իր ժողովրդին, կամ (2) քրիստոնյայի այն վերաբերմունքին կամ տրամադրվածությանը, որը նրան թույլ է տալիս ստանալ և հասկանալ այն հայտնությունը և իմաստությունը, որն Աստծուց է: Մեկնաբանների մեծ մասը նախապատվություն են տալիս առաջին տարբերակին:

ե. *Կողոսացիս 1.9-10*

ՆՇՈՒՄՆԵՐ. Կարևոր է հիշել, որ Աստվածաշնչի ուսումնասիրության մեր նպատակը չէ պարզապես գիտելիք ձեռք բերելը: Վերջնական նպատակն է մեր վերափոխումը և կարողությունը՝ ապրելու Աստծուն հաճելի կերպով:

6. Մենք պետք է սովորենք ըստ Աստվածաշնչի աղոթել: Հիմնվելով աստվածաշնչյան այն աղոթքների վրա, որոնք ուսումնասիրեցինք 5-րդ կետում՝ աղո՛թք գրեք Աստծուն՝ խնդրելով, որ Նա օգնի ձեզ սերտելու, հասկանալու և կիրառելու Իր Խոսքը ձեր կյանքերում.

Գլուխ 21. Խոսքի օգուտները

Մաս 1. Ընթերցանություն և ուսումնասիրություն

Աստվածաշնչի ամենամեծ նպատակներից է քրիստոնյայի բնավորության վերափոխումը և նմանությունը Քրիստոսին: Եվ սակայն դա խիստ անհավանական կլինի, եթե մեր գրադարակում դրված Աստվածաշունչների վրա փոշի է նստում: Մենք պետք է ամենօրյա հանդիպումներ ունենանք Աստծո Խոսքի հետ: Աստվածաշնչում տեսնում ենք Աստծո Խոսքից օգուտ քաղելու նվազագույնը չորս եղանակ՝ կարդալ, սերտել, անգիր հիշել և մտորել Խոսքի շուրջ: Երկու գլուխ կնվիրենք այս խիստ կարևոր գործողությունների ուսումնասիրությանը:

ԸՆԹԵՐՑԵ՛Ք ԽՈՍՔԸ

Աստծո Խոսքից օգուտ քաղելու առաջին քայլն այն ամեն օր ընթերցելն է: Ոչ ոք չի կարող մտածել գրական որևէ ստեղծագործության ուսումնասիրության մասին, քանի դեռ նախ և առաջ այն ամբողջությամբ չի ընթերցել, իսկ ընթերցանությունը չեն սկսում գրքի մեջտեղից կամ վերջին գլխից: Նույն կերպ Սուրբ գրքի մեր ուսումնասիրության առաջին քայլն ու հիմքը Աստվածաշնչի համակարգված ընթերցանությունն է Ծննդոցից Հայտնություն:

Ցավալի է, որ կան շատ քրիստոնյաներ, որոնք երբևիցե ամբողջությամբ չեն ընթերցել Աստվածաշունչը: Նրանք ոչ միայն ահռելի մեծ օրհնություն են բաց թողնում, այլև խիստ սահմանափակում են ուրիշների համար օրհնություն լինելու իրենց կարողությունը: Ստորև կուսումնասիրենք Աստվածաշնչի ամենօրյա և համակարգված ընթերցանության կարևորությունը: Սա պարզապես կարգ չէ նորադարձ հավատացյալի համար, այլ պետք է լինի գործելակերպ, որին հավատացյալը հավատարմաբար հետևում է իր ողջ կյանքի ընթացքում:

1. Երկրորդ օրինաց 17.18-20-րդ խոսքերում պարզ տեսնում ենք Աստծո Խոսքն ընթերցելու կարևորությունը: Ըստ այս խոսքերի՝ Սուրբ գրքի վերաբերյալ ի՞նչ պատվեր կամ պատասխանատվություն էր տրվում Իսրայելի թագավորներից յուրաքանչյուրին: Ի՞նչ ենք մենք սովորում այդ պատվերից և ինչպե՞ս կարող ենք կիրառել այն մեր կյանքերում.

_____

_____

_____

_____

_____

2. Երկրորդ օրինաց 17.18-20-ում ասվում է, որ Իսրայելի թագավորին հրաման էր տրվում կարդալու Աստծո Օրենքը «իր կյանքի բոլոր օրերում»: Ըստ այս խոսքերի՝ ի՞նչ ենք ստանում Աստծո Խոսքի ընթերցանությունից.

   ա. *Սովորում ենք վ_____ կամ ակնածել Տիրոջից (խ. 19):*

   բ. *Սովորում ենք զգուշությամբ կ_____ Աստծո Խոսքը (խ. 19):*

   գ. *Պահում ենք մեր սրտերը չ_____ և չ_____ (խ. 20):*

> **ՆՇՈՒՄՆԵՐ.** Քրիստոնեական հավատի հիմնային արժանիքներն են ակնածանքը, հնազանդությունը և խոնարհությունը: Դրանք ձեռք են բերվում՝ ամբողջ կյանքի ընթացքում հավատարմաբար ընթերցելով Աստծո Խոսքը: Սկսում ենք Ծննդոցից և ավարտում Հայտնությունով: Հետո սկսում ենք նորից: Մինչ մեր կյանքի ավարտը բազմիցս պիտի ընթերցած լինենք Սուրբ գիրքը:

3. Ա Տիմոթեոս 4.13-րդ խոսքում ի՞նչ է հորդորում Պողոս առաքյալն իր երիտասարդ աշակերտին, որպեսզի թե՛ ինքը, թե՛ տեղական եկեղեցին աճեն Աստծո Խոսքի գիտության մեջ.

_____

_____

_____

_____

> **ՆՇՈՒՄՆԵՐ.** Աստծո Խոսքի հրապարակային ընթերցանությունը տեղական եկեղեցում այլընտրանքային տարբերակ չէ, որը կարելի է բաց թողնել, այլ պատվեր է, որին պետք է հնազանդվել: Այն պետք է լինի եկեղեցական բոլոր ծառայությունների առանցքային տարրը: Երբ ընթերցվում է Աստծո Խոսքը, մենք պետք է ուղղենք մեր մտքերը ուշադիր լսելուն՝ իմանալով, որ մեծ օրհնություն կա Աստծո Խոսքը հավատարմաբար լսելու մեջ:

4. Ըստ Եփեսացիս 3.3, 4-ում գրված Պողոս առաքյալի խոսքերի՝ ի՞նչ կարելի է ստանալ՝ կարդալով այն նամակը, որը նա ուղղել է Եփեսոսի հավատացյալներին.

   ա. *Նրանք կարող էին ի_____ նրա պ_____ Քրիստոսի խ_____ համար:*

5. Ինչպե՞ս կարող է Եփեսացիս 3.3, 4-ում գրված խոստումը կիրառվել Աստծո ամբողջ Խոսքի համար: Պատասխանե՛ք այս հարցին Հովհաննես 5.39-ում Հիսուսի ասած խոսքերի լույսի ներքո.

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ամբողջ Աստվածաշունչը այս կամ այն կերպ վկայում է Հիսուս Քրիստոսի մասին: Եվ կարդալով Աստվածաշունչը՝ մենք ավելի մեծ ճանաչողություն ենք ստանում Նրա Անձի և գործունեության հրաշալի խորհրդի մասին:

6. Ի՞նչ է խոստացվում Հայտնություն 1.3-ում ամեն հավատացյալի, ով կարդում է դրա բովանդակությունը: Բացի կարդալուց՝ էլ ի՞նչ է անհրաժեշտ անել.

ՆՇՈՒՄՆԵՐ. Հայտնություն 1.3-ում ուսուցանվող առանցքային ճմշարտությունը կարող է կիրառվել ամբողջ Աստվածաշնչի համար: Եթե ցանկանում ենք Խոսքով օրհնվել, ապա միայն ընթերցանությունը բավարար չէ: Մեր ընթերցանությունը պետք է ուղեկցվի սրտանց հնազանդությամբ: Ինչպես Հակոբոսն է հռչակել. «Բայց Խոսքը անո՛ղ եղեք և ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով» (Հակոբոս 1.22): Միայն «գործ կատարողն» է «երանելի իր անելով» (Հակոբոս 1.25):

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵ՛Ք ԽՈՍՔԸ

Աստվածաշնչի ընթերցանությունը կարևոր է, սակայն եթե ցանկանում ենք ստանալ Աստծո Խոսքի լիարժեք օրհնությունը, ապա պետք է անենք ավելին: Պետք է ոչ միայն կարդանք, այլև խորությամբ ուսումնասիրենք այն, ինչը կարդացել ենք: Որոշ քրիստոնյաներ սխալվում են՝ կարծելով, թե Սուրբ գրքի խորքային ուսումնասիրությունը միայն հովիվների և աստվածաբանների համար է, մինչդեռ հենց Աստվածաշունչն է սովորեցնում, որ դա ամեն հավատացյալի պատասխանատվությունն է.

1. Ի՞նչ է Պողոս առաքյալը պատվիրում իր երիտասարդ աշակերտ Տիմոթեոսին Բ Տիմոթեոս 2.15-ում: Ինչպե՞ս կարող է այս խոսքը կիրառվել մեր կյանքերում.

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ջա՛նք արա» պատվերը թարգմանված է հունարեն ***spoudázō*** բառից, որ նշանակում է «արագ գործել, ջանասիրաբար ձգտել, ճկվել, լավագույնն անել, ջանալ»: «Ուղիղ մատակարարել» արտահայտությունը թարգմանված է հունարեն ***orthotoméō*** բառից [***orthós*** = ուղիղ + ***témnō*** = կտրել], որ բառացի թարգմանությամբ նշանակում է «ուղիղ կտրել» և վերաբերում է Աստծո Խոսքը առավելագույն ճշգրտությամբ մեկնաբանելու և սովորեցնելու մեծ անհրաժեշտությանը:

2. Եզրաս 7.10-ը զորավոր օրինակ է այն եռապատիկ կապի, որն ամեն հավատացյալ պետք է ունենա Սուրբ գրքի հետ: Ըստ այս խոսքի՝ ո՞ր երեք բաներին է Եզրասն ուղղում իր սիրտը.

   ա. *Տիրոջ Օրենքը խ*_____*:* Թարգմանված է երբրայերեն ***darash*** բառից, ինչը բառացիորեն թարգմանվում է «փնտրել»: Աստծո Խոսքի մեր ուսումնասիրության մեջ մենք այն փնտրում ենք, ինչպես մեծ գանձ կփնտրեինք:

   բ. *Տիրոջ Օրենքը կ*_____*:* Ամբողջ Սուրբ գրքի մեջ մեզ զգուշացվում է, որ պետք է «կատարողներ» լինենք և ոչ թե միայն «լսողներ», ովքեր խաբում են իրենք իրենց (Հակոբոս 1.22-25, Մատթեոս 7.21):

   գ. *Տիրոջ Օրենքը ս*_____*:* Հաճախ ասվում է, որ քրիստոնյան, որը չի հաղորդակցվում իր ստացած ճշմարտությամբ, վերածվում է լճացած ավազանի: Խոսքը հոսում է մեր մեջ և պետք է մեզնից հոսի դեպի ուրիշները:

3. Ինչպե՞ս պետք է վերոնշյալ երեք ճշմարտությունները կիրառվեն ամեն հավատացյալի կյանքում: Ինչպե՞ս պետք է դրանք կիրառվեն ձեր կյանքում.

_____

_____

_____

_____

_____

_____

_____

4. Շատ հավատացյալների վախեցնում է ուսումնասիրությունը, քանի որ կարծում են, թե այն միայն մասնագիտությամբ աստվածաբանների համար է: Գործք 17.11, 12-րդ խոսքերում

կարդում ենք Պողոս առաքյալի ծառայության մասին Բերիայում: Ի՞նչ է խոսքն ասում բերիացիների մասին. ինչպե՞ս կարող ենք օրինակ վերցնել նրանցից.

ՆՇՈՒՄՆԵՐ. «Քննել» բառը թարգմանված է հունարեն ***anakrínō*** բառից, որ նշանակում է «մոտիկից զննել, ամբողջությամբ, մանրազնին ուսումնասիրել, հետազոտել, գնահատել, հետաքննել»: Բերիացիները գրագիրներ կամ քահանաներ չէին. նրանք հասարակ մարդիկ էին, որոնք ցանկանում էին հասկանալ Աստծո Խոսքը: Որպես այդպիսին՝ նրանք օրինակ են բոլոր հավատացյալների համար ամենուր:

5. Ըստ Ա Կորնթացիս 2.11, 12-րդ խոսքերի՝ ի՞նչ պարգև է տրվել եկեղեցուն և ամեն հավատացյալի անհատապես, որպեսզի կարողանանք հասկանալ Աստծո Խոսքը: Ինչպե՞ս է դա քաջալերում մեզ մեր ուսումնասիրության մեջ.

6. Ըստ Հովհաննես 7.17-ի՝ ինչպիսի՞ն պետք է լինեն մեր վերաբերմունքն ու տրամադրվածությունը, երբ ուսումնասիրում ենք Աստծո Խոսքը: Այլ կերպ ասած՝ ո՞րն է այն մեկ պահանջը, որ ամեն հավատացյալ պետք է բավարարի՝ Աստծո Խոսքը հասկանալու համար.

7. Ըստ Երկրորդ օրինաց 5.1-ի՝ ո՞րն է մեր ուսուցման վերջնանպատակը: Ինչպե՞ս է պետք այս ճշմարտությունը կիրառել մեր կյանքերում.

ՆՇՈՒՄՆԵՐ. «Զգուշությամբ սովորեք» արտահայտությունը բառացիորեն թարգմանվում է «սովորեք, որ կատարեք»: Պետք է սովորենք, որպեսզի կարողանանք կատարել: Ուսումնասիրության նպատակն է մեր մտածելակերպի, վերաբերմունքի, խոսքերի և գործերի վերափոխումը:

Գլուխ 22. Խոսքի օգուտները

Մաս 2. Անգիր հիշել և մտորել

Նախորդ գլխում քննարկեցինք Սուրբ գիրքը ընթերցելու և ուսումնասիրելու կարևորությունը: Այս գլխում կքննարկենք Խոսքն անգիր հիշելու և դրա շուրջ մտորելու անհրաժեշտությունը, որոնք հավասարապես կարևոր են, ինչպես նախորդ երկուսը:

ԽՈՍՔՆ ԱՆԳԻՐ ՀԻՇԵԼԸ

Աստվածաշնչյան պահանջ

Երբ ընթերցում և ուսումնասիրում ենք Սուրբ գիրքը, որոշ խոսքեր հատուկ հետաքրքրություն են առաջացնում մեր մեջ: Այս խոսքերն անգիր անելը հրաշալի օրինություն է՝ որպես մշտական հիշեցում դրանցում պարունակվող ճշմարտությունների մասին: Խոսքը մեր ներսում պահելը անհրաժեշտ է, եթե ցանկանում ենք առավելագույն պտուղը քաղել մեր ընթերցանությունից և ուսումնասիրությունից: Մենք չենք կարող քսանչորս ժամ շարունակ ընթերցել Աստվածաշունչը, սակայն կարող ենք այն կրել մեր ներսում անգիր հիշելու շնորհիվ:

1. Ի՞նչ է Աստված պատվիրում Երկրորդ օրինաց 6.6-9-ում: Ի՞նչ կերպ է այս պատվերը ցույց տալիս Սուրբ գիրքն անգիր հիշելու մեծ կարևորությունը.

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Բաբելոնյան գերության ժամանակ հրեաները ջանում էին բառացիորեն հնազանդվել այդ պատվերին: Առավոտյան աղոթքի ժամերին նրանք նույնիսկ Աստվածաշնչի փոքրիկ տուփեր էին կախում իրենց ճակատներից և թևերից: Այս խոսքի ճիշտ մեկնաբանությունն այն է, որ մենք պետք է Աստծո Խոսքը պահենք մեր սրտերում՝ այն անգիր հիշելով, որպեսզի դրանցով ուղղորդվեն մեր բոլոր գործողությունները:

2. Ըստ հետևյալ աստվածաշնչյան խոսքերի՝ ո՞րն է Աստծո Խոսքը անգիր անելով մեր սրտերում պահելու նպատակը.

   ա. *Երկրորդ օրինաց 30.14*

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո հրամաններին հնազանդվելը սկսվում է Նրա Խոսքը մեր սրտերում պահելով և մեր շուրթերին պատրաստ ունենալով:

բ. *Սաղմոս 37.31*

գ. *Սաղմոս 119.11*

ՆՇՈՒՄՆԵՐ. Եթե մենք այստեղ պատվիրվածի հակառակն անենք, հետևանքը կարող է կործանարար լինել. «Իմ սրտում ***չթաքցրի*** Քո խոսքերը, որ ***մեղանչեմ*** Քո դեմ»:

դ. *Կողոսացիս 3.16, 17*

ՆՇՈՒՄՆԵՐ. Հետաքրքիր և ուշադրության է արժանի այն, որ քրիստոնյայի կյանքում Աստծո Խոսքի բնակության արդյունքները (Կողոսացիս 3.16, 17) գրեթե նույնական են մեր ներսում Սուրբ Հոգու բնակության և Նրանով առաջնորդվելու արդյունքների հետ (Եփեսացիս 5.18-20): Ուղիղ կապ կա Աստծո Խոսքով մեր կյանքը հագեցնելու և Սուրբ Հոգու լեցունության մեջ: Որքան ավելի շատ լցնենք մեր կյանքերը Խոսքով, այնքան ավելի շատ կվերապրենք Հոգու կյանքն ու զորությունը:

3. Արդյոք դուք հնազա՞նդ եք Աստծո Խոսքն անգիր անելու մասին Նրա պատվերներին: Եթե հնազանդ եք, ապա ներկայացրե՛ք, թե ինչպես եք անգիր անում Աստծո Խոսքը: Եթե հնազանդ չեք, ապա ի՞նչ փոփոխություններ եք պատրաստվում անելու:

_____

_____

_____

_____

_____

_____

Անտեսված կարգ

Աստծո Խոսքն անգիր անելը քրիստոնեական կյանքի ամենակարևոր և միաժամանակ ամենաանտեսված կարգերից է: Շատ քրիստոնյաներ արդարանում են նրանով, որ լավ հիշողություն չունեն, կամ Աստծո Խոսքն անգիր անելը չափազանց ժամանակատար է: Նման վերաբերմունքը ենթադրում է այն սխալ կարծիքը, թե Սուրբ գիրքն անգիր անելը պարզապես առաջարկ է. մինչդեռ այն Աստվածաշնչի ուղիղ պատվեր է: Անկախ մեր կարողություններից՝ բոլորս կարող ենք հավասարապես ջանք գործադրել Աստծո Խոսքը անգիր անելու հարցում: Այո՛, որոշ հավատացյալներ ավելի հմուտ կլինեն այդ հարցում, քան մյուսները, սակայն բոլորը կօրհնվեն և կդառնան Քրիստոսի առավել պիտանի ծառաներ: Ստորև ներկայացված են գործնական խորհուրդներ, որոնք կօգնեն մեզ հասնելու այդ նպատակին:

1. **Միշտ պետք է հիշենք, որ Խոսքն անգիր անելը առաջարկ կամ այլընտրանքային տարբերակ չէ, այլ Աստվածաշնչի ուղիղ պատվեր:** Մենք դատվելու ենք ոչ թե ըստ նրա, թե որքան Խոսքեր ենք անգիր արել, այլ ըստ նրա, թե որքան ջանասիրաբար ենք հնազանդվել այդ պատվերին:

2. **Մենք պետք է սկսենք Սուրբ գրքի փոքրիկ հատվածներ, օրինակ՝ աստվածաշնչյան խոսքեր կամ փոքրիկ պարբերություններ անգիր անելուց:** Շատ քրիստոնյաներ հրաժարվում են Աստծո Խոսքն անգիր անելու իրենց փորձերից, քանի որ միանգամից մեծ ծավալի նյութ են փորձում հիշել: Յուրաքանչյուրը կարող է անգիր հիշել իրեն հարմար արագությամբ: Կարևորը հետևողականությունն է, որը հավատացյալը պետք է պահպանի ամբողջ կյանքի ընթացքում:

3. **Պետք է սկսենք անգիր անել մեզ հետաքրքրող խոսքերը կամ այն խոսքերը, որոնք օգնում են մեզ հոգևորապես աճելու:** Օրինակ՝ եթե մենք անհամբերության խնդիր ունենք,

ապա պետք է անգիր անենք այն խոսքերը, որոնք խոսում են այդ արատի մասին և մեզ ուղղորդում են դեպի այլընտրանքային՝ աստվածաշնչյան առաքինություն: Եթե կարիք ունենք դառնալու Քրիստոսի ավելի լավ վկաներ, ապա պետք է անգիր անենք այն խոսքերը, որոնք օգնում են ավետարանչությանը:

4. **Երբ առավել հետևողական կդառնանք Խոսքն անգիր անելու հարցում, հարկավոր է այդ աշխատանքը դարձնել առավել համակարգված և թեմատիկ:** Այս նպատակով պարզապես պետք է հավաքել աստվածաշնչյան բոլոր այն խոսքերը, որոնք ամփոփում կամ բացատրում են տվյալ թեման, և մեկ առ մեկ անգիր անել դրանք, մինչև որ իրենց տեղը գտնեն մեր սրտի և մտքի գանձարանում: Ինքներս էլ չենք նկատի, թե ինչպես անգիր կիմանանք աստվածաշնչյան տասնյակ խոսքեր Աստվածաշնչում արծարծվող կարևոր թեմաների շուրջ: Այդ թեմաներից կարող են լինել ավետարանը, շնորհքով տրվող և հավատով ստացվող փրկությունը, Աստվածաշնչի երաշխավորությունը, Աստծո խոստումները կամ Սուրբ գրքի պատվիրանները. այս ցուցակը կարելի է անվերջ շարունակել:

5. **Աստվածաշնչյան այն խոսքերը, որոնք փորձում ենք հիշել, պետք է մեզ մոտ պահենք՝ թղթի փոքրիկ կտորների վրա կամ բջջայինում գրված:** Հաճախ շատ ժամանակ ենք վատնում մեր ամենօրյա գործերի միջև ընկած ժամանակահատվածներում (հանդիպման սպասելիս, ավտոբուսի սպասելիս, խոտը հնձելիս, սափրվելիս, ուտելիք պատրաստելիս և այլն), մինչդեռ այդ ժամանակահատվածները կարելի է օգտագործել Խոսքն անգիր անելու համար:

6. **Ժամանակ առ ժամանակ պետք է աչքի անցկացնենք այն խոսքերը, որոնք անգիր ենք արել, որպեսզի դրանք արմատավորվեն մեր սրտերում և մտքերում:**

ՄՏՈՐԵ՛Ք ԽՈՍՔԻ ՇՈՒՐՋ

Ոչ միայն պետք է Խոսքը պահենք մեր սրտերում, այլև սովորենք մտորել դրա շուրջ: Շատ քրիստոնյաներ սխալ են ընկալում մտորել՝ խորհրդածել ասվածը: Երբ լսում են այս բառը, պատկերացնում են ինչ-որ հոգևոր առաջնորդի, ով լոտոսի դիրքով սարի վրա նստած մանտրա է երգում: Սակայն մտորումը աստվածաշնչյան կարգ է, որը հավատացյալները պետք է կիրառեն:

Աստվածաշնչյան խորհրդածությունը (*մեդիտացիան*) Աստծո Խոսքի շուրջ խորհելու գործընթացն է, որի նպատակն է դրանում ամփոփված ճշմարտությունները հասկանալը, որպեսզի դրանք ավելի մեծ ազդեցություն ունենան մեր կյանքերի վրա: Ուշադրությո՛ւն դարձրեք, թե ինչպես են խոշոր եղջերավորները խոտ ուտում: Ծամելուց և կուլ տալուց հետո կովը հետ է բերում կերակուրը բերանի մեջ և նորից ծամում այն: Այս գործընթացը կրկնվում է երեք անգամ, մինչև որ կենդանին առավելագույն օգուտն է ստանում խոտի բոլոր սննադարար նյութերից: Նույն կերպ, երբ քրիստոնյան մտորում է Խոսքի շուրջ, նա պետք է Խոսքն այնքան «ծամի», մինչև որ առավելագույն օգուտը ստանա դրանից:

1. Հեսու 1.6-9-ում Աստված հորդորում է Հեսուին ստանձնել Մովսեսի ծառայությունը և Իսրայելի ժողովրդին առաջնորդել դեպի Խոստման երկիր: Այս խոսքում գրված է Աստծո ամենազորավոր հորդորներից մեկը: Կարդացե՛ք խոսքը, ծանոթացե՛ք դրա բովանդակությանը և պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

ա. *Ի՞նչ հրաման է տալիս Աստված Հեսուին 8-րդ խոսքում: Ինչպե՞ս կարող ենք նույն այդ հորդորը կիրառել մեր կյանքերում.*

բ. *Ի՞նչ օգուտներ էին խոստացվել Հեսուին, եթե հնազանդվեր Աստծո հորդորին: Ինչպե՞ս է այդ խոստումը գործում այն հավատացյալների կյանքերում, որոնք լուրջ են ընդունում Աստծո Խոսքի շուրջ մտորելու հորդորը.*

2. Սաղմոս 1.1-3-ում տրված է արդար մարդու նկարագիրը: Կարդացե՛ք խոսքը, ծանոթացե՛ք դրա բովանդակությանը, այնուհետև պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

ա. *Ինչպե՞ս է նկարագրված արդարը 1-ին և 2-րդ խոսքերում: Ինչպիսի՞ փոխհարաբերություն ունի վերջինս Աստծո Խոսքի հետ.*

բ. *Համաձայն 3-րդ խոսքի՝ ինչպիսի՞ արդյունք է ունենում Աստծուն՝ Նրա Խոսքին նվիրվելն արդարի համար.*

գ. *Ինչպիսի՞ն է ձեր կյանքը, եթե այն համեմատենք Սաղմոս 1.1-3-ում նկարագրված արդարի կյանքի հետ: Կա՞ արդյոք ձեր կյանքի մեջ փոփոխություն մտցնելու կարիք: Գրի՛ առեք ձեր մտքերը.*

3. Սուրբ գրքում տեսնում ենք Դավիթ թագավորի սիրո դրսևորումն Աստծո Խոսքի հանդեպ: Ըստ հետևյալ խոսքերի՝ Աստծո Խոսքի շուրջ մտորելը ի՞նչ դեր էր խաղում Աստծո ու Նրա Խոսքի հետ Դավթի փոխհարաբերության մեջ.

ա. *Սաղմոս 119.15, 16*

բ. *Սաղմոս 119.147, 148*

Գլուխ 23. Հնազանդություն Խոսքին

Աստծո Խոսքը ընթերցելը, սերտելը, անգիր հիշելը և դրա շուրջ խորհելը ծառայում են մեկ մեծ նպատակի՝ Աստծուն նվիրմանը, որն արտահայտվում է ***հնազանդությամբ***: Քրիստոնեական կյանքի նպատակը պարզապես գիտելիք կամ հասկացողություն ձեռք բերելը չէ. իրական նպատակը մեր բնավորության վերափոխումն է՝ կերպարանափոխվելու Հիսուս Քրիստոսի պատկերով, ով ապրեց՝ կատարելապես հնազանդվելով Աստծո կամքին: Մենք պետք է ձգտենք մեր ողջ կյանքը ենթարկելու Աստծո հրամաններին, ինչպես Նա էր անում: Միայն այդ դեպքում մենք կատարած կլինենք Սուրբ գրքի նպատակը մեր կյանքերի համար: Անհնար է գերագնահատել այս ճշմարտությունը: Մեր մարդկային բնությունը միտված է ձեռք բերելու գիտելիք, որը հպարտացնում է, և խուսափելու դրա գործնական կիրառությունից, ինչի համար հնազանդություն է պահանջվում: Այդուհանդերձ, մենք պետք է հակառակվենք այդ միտմանը և հնազանդվենք Աստծո կամքին, որը սովորում ենք Սուրբ գիրքը ուսումնասիրելով:

1. Ըստ Երկրորդ օրինաց 5.29-ի՝ ո՞րն է Աստծո ամենամեծ ցանկությունը Իր ժողովրդի համար.

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Նորկտակարանյան հավատացյալի համար Աստված իրականություն է դարձրել այս ցանկությունը: Նա մեզ արդարացրել է և ազատել մեղքի դատապարտությունից: Նա մեզ վերածնել է, տվել նոր սիրտ, որը ցանկանում է կատարել Նրա կամքը: Ի վերջո Նա մեզ տվել է Իր Խոսքը, որով պետք է ուղղորդվենք, և Իր Հոգին, Ով սովորեցնում և զորացնում է մեզ: Թեև մեղքը դեռևս ցավալի իրողություն է բոլոր հավատացյալների համար, մեզ տրվել են այն հաղթահարելու և ուրախությամբ լի հնազանդության կյանքով ապրելու միջոցներ:

2. Ըստ Երկրորդ օրինաց 5.1-ի՝ որո՞նք են այն երեք պատշաճ միջոցները, որոնցով հավատացյալը պետք է արձագանքի Աստծո պատվիրաններին.

   ա. *Լ*_____ *դրանք:* Այս պատվերը թարգմանված է երբայերեն ***shema*** բառից: Այս և շատ այլ համատեքստերում (*օրինակ*՝ Երկրորդ օրինաց 6.4) սա ոչ միայն լսելու, այլև լսածին հնազանդվելու կոչ է: «Ձեր լսողությանը» արտահայտությունը բառացիորեն թարգմանված է «ձեր ականջներին»: Աստված պարզ է խոսել. հարցն այն է, թե արդյոք ունենք «լսելու ականջ» (տե՛ս Մարկոս 4.9, 23):

բ. *Ս_____ դրանք:* Աստծո կամքը մակերեսայնորեն լսելը չի տանի հնազանդության: Հնազանդությունը պետք է գա Աստծո կամքի խորքային ճանաչողությունից: Մենք պետք է նվիրվենք հասկանալու այն ամենը, ինչ Աստված հայտնել է Իր մասին:

գ. *Հ_____ գ_____ դրանք:* Բառացի թարգմանությունը կլիներ «ուսումնասիրե՛ք դրանք, որպեսզի կատարեք»: Մենք պետք է սովորենք, որպեսզի կարողանանք կատարել: Ուսումնասիրության նպատակն է մեր մտքերի, վերաբերմունքի, խոսքերի և գործողությունների վերափոխումը:

3. Եզրաս 7.10-ը հավատացյալի և Աստծո Խոսքի եռապատիկ կապի զորավոր օրինակ է: Նախորդ գլուխներից մեկում մենք քննարկել ենք այս խոսքը, սակայն արժի կրկնել այն այնքան, քանի դեռ չենք սովորել կատարել: Համաձայն այս խոսքի՝ Եզրասն իր սիրտն ուղղել էր անելու հետևյալ երեք բաները.

ա. *Տիրոջ Օրենքը խ_____:* Թարգմանված է երբրայերեն ***darash*** բառից, ինչը բառացիորեն թարգմանվում է «փնտրել»: Աստծո Խոսքի մեր ուսումնասիրության մեջ մենք այն փնտրում ենք, ինչպես մեծ գանձ կփնտրեինք:

բ. *Տիրոջ Օրենքը կ_____:* Ամբողջ Սուրբ գրքի մեջ մեզ զգուշացվում է, որ պետք է «կատարողներ» լինենք և ոչ թե միայն «լսողներ», ովքեր խաբում են իրենք իրենց (Հակոբոս 1.22-25, Մատթեոս 7.21):

գ. *Տիրոջ Օրենքը ս_____:* Հաճախ ասվում է, որ քրիստոնյան, որը չի հաղորդակցվում իր ստացած ճշմարտությամբ, վերածվում է լճացած ավազանի: Խոսքը հոսում է մեր մեջ և պետք է մեզնից հոսի դեպի ուրիշները:

4. Ըստ հետևյալ խոսքերի՝ ինչպե՞ս պետք է արձագանքենք Աստծո պատվերներին.

ա. *Երկրորդ օրինաց 5.32, 33*

_____

_____

_____

_____

_____

բ. *Հեսու 22.5*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ուշադրությո՛ւն դարձրեք Աստծո հանդեպ սիրո և Նրա պատվերներին հնազանդվելու միջև կապին: Մեկն առանց մյուսի չի կարող գոյություն ունենալ:

5. Սուրբ գրքի մեր իմացությունը բավարար չէ Աստծուն հաճեցնելու համար: Նա մեր ակնածանքով և ուրախությամբ լի հնազանդությունն է ակնկալում: Ի՞նչ են մեզ սովորեցնում հետևյալ խոսքերն այդ ճշմարտության մասին.

ա. *Ա Թագավորաց 15.22*

_____

_____

_____

_____

_____

բ. *Մատթեոս 7.21, Ղուկաս 6.46*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մենք փրկվում ենք միայն հավատով և ոչ թե Քրիստոսի պատվերներին հնազանդվելով: Այդուհանդերձ, հավատով ձեռք բերված մեր փրկության արդյունքն ու ապացույցը Աստծո կամքին հնազանդվելու մեջ աճելն է:

գ. *Հովհաննես 14.15*

_____

_____

_____

_____

_____

դ. *Հակոբոս 1.22-25*

6. Աստծո Խոսքը մեզնից ակնկալում է եռանդուն, լիասիրտ և հետևողական հնազանդություն: Հապաղելով կամ ոչ լիասիրտ հնազանդությունը նույնն է, ինչ անհնազանդությունը: Ի՞նչ են մեզ սովորեցնում հետևյալ խոսքերն այս ճշմարտության մասին.

ա. *Սաղմոս 119.60*

բ. *Սաղմոս 119.112*

7. Շատերը սխալականորեն կարծում են, թե Սուրբ գիրքը շատ բարդ է հասկանալու համար, կամ թե դրան հնազանդվելը ծանր ու ստրկացնող է: Սա հեռու է ճշմարտությունից: Ի՞նչ է մեզ սովորեցնում Աստծո Խոսքն այս մասին.

ա. *Հավատացյալը կարող է հասկանալ Աստծո պատվիրանները և հնազանդվել դրանց.*

(1) Երկրորդ օրինաց 30.11-14

(2) Միքիա 6.8

բ. *Աստծո պատվիրանները դժվարակիր չեն հավատացյալի համար.*

(1) Ա Հովհաննես 5.2, 3

(2) Մատթեոս 11.28-30

8. Աստված մեզ տվել է Իր պատվիրանները՝ ոչ թե մեզ ստրկացնելու, այլ օրհնություն և ուրախություն բերելու համար: Ի՞նչ են մեզ սովորեցնում հետևյալ խոսքերն այս ճշմարտության մասին.

ա. *Սաղմոս 19.8, 10, 11*

բ. *Ղուկաս 11.27, 28*

գ. *Հակոբոս 1.25*

Գլուխ 24. Սուրբ գրքի մեկնաբանությունը

Աստվածաշնչի մեր մեկնաբանությամբ են որոշվում մեր համոզմունքները և մեր կյանքի ողջ ընթացքը: Հետևաբար մենք պետք է սովորենք ճիշտ մեկնաբանել Սուրբ գիրքը: Այս գլխում քննարկելու ենք Աստվածաշնչի մեկնաբանության սկզբունքները:

ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՅԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Նախորդ գլուխներում սովորեցինք Սուրբ գրքի ծագման և մեր կյանքերում դրա նշանակության մասին: Այս գլխում կսովորենք ինչպես ինքներս կարող ենք ուսումնասիրել Աստվածաշունչը:

Երբ Աստված Իրեն հայտնեց մարդկանց, Նա ընտրեց անել դա գրքի միջոցով, որը կազմված է բառերից, արտահայտություններից, լեզվական կանոններից և քերականությունից: Հետևաբար Աստվածաշնչի ճիշտ ուսումնասիրության համար մենք պետք է գրքերից յուրաքանչյուրն ուսումնասիրենք դրա պատմական և քերականական համատեքստում: Ավելին՝ պետք է փորձենք հասկանալ բնագրի հեղինակի մտադրությունը, բառերի նշանակությունը, արտահայտությունների և պարբերությունների կառուցվածքը և կապերը:

Աստվածաշունչը հոգևոր գիրք է, և այն ճիշտ մեկնաբանել հնարավոր է միայն Սուրբ Հոգու լուսավորչական աշխատանքի շնորհիվ: Աստվածաշունչը իրական գիրք է, և այն ճիշտ մեկնաբանել կարելի է միայն ըստ գրվածքի քերականության: Սրա համար անհրաժեշտ է ուսումնասիրել «հերմենևտիկա» կոչվող գիտաճյուղը:

Հերմենևտիկան (հունարեն՝ ***hermēneúō*** = մեկնաբանել) Աստվածաշնչի մեկնաբանության գիտությունն է: Կան մեկնաբանության որոշակի կանոններ կամ սկզբունքներ, որոնք պետք է կիրառել Աստվածաշնչի ճիշտ ուսումնասիրության համար: Հերմենևտիկան այդ սկզբունքների ուսումնասիրությունն է:

ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հերմենևտիկան Աստվածաշնչի մեկնաբանության գիտությունն է, և դրան պետք է լուրջ վերաբերվել: Իրականության վերաբերյալ մեր համոզմունքները պայմանավորված են Աստվածաշնչի մեր մեկնաբանությամբ, իսկ այդ համոզմունքներով որոշվում են մեր մտքերն ու գործողությունները: Ստորև ներկայացված են հերմենևտիկայի հիմնային սկզբունքներից տասնչորսը.

1. **Աստվածաշունչը քրիստոնյայի կյանքի ամենաբարձր և անսխալական հեղինակությունն է:** Անհնար է Աստվածաշունչը ճիշտ մեկնաբանել, եթե չենք հավատում, որ այն Աստծո անսխալական Խոսքն է: Հակառակ պարագայում մենք հակված կլինենք ընդունելու միայն այն, ինչը համապատասխանում է մեր աշխարհայացքին, իսկ մյուս հատվածները մերժել որպես ոչ հեղինակավոր: Իսկ եթե հավատում ենք ամբողջ Աստվածաշնչի անսխալականությանը, ապա գիտակցում ենք, որ իրավունք չունենք մերժելու աստվածաշնչյան որոշ վարդապետություններ, պարզապես որովհետև դրանք հակադրվում են մեր մշակույթին, ավանդույթներին, կարծիքներին, անձնական նախընտրություններին կամ կենսա-

կերպին: Գիտակցում ենք, որ ամեն գաղափար, վերաբերմունք կամ գործողություն պետք է համեմատել և դատել ըստ Աստծո Խոսքի:

2. **Աստվածաշունչը բավարար է:** Պետք է հավատանք, որ Աստվածաշունչը բավարար է՝ տալու մեզ Քրիստոսով փրկության գիտությունը և զինելու եկեղեցին ու անհատ քրիստոնյային ամեն բարի գործի համար: Ամեն բան, ինչ մեզ անհրաժեշտ է հավատի և գործելակերպի համար, կարող ենք գտնել Սուրբ գրքում: Ամեն աշխարհիկ գիտելիք, որը խոստանում է սրտի և մտքի բժշկություն բերել, պետք է դատվի Սուրբ գրքի անսխալական կանոնով (Բ Տիմոթեոս 3.15-17):

3. **Սուրբ գիրքը մեկնաբանելիս մենք միանշանակ ունենք Սուրբ Հոգու կարիքը:** Առանց Հոգու լուսավորչական աշխատանքի անհնար է հասկանալ Աստվածաշունչը (Ա Կորնթացիս 2.14): Հետևաբար Սուրբ գիրքը պետք է սերտենք աղոթքով, Նրան ապավինելով և հնազանդվելով: Սուրբ Հոգին մեր Ուսուցիչն է, սակայն սա չի նշանակում, որ Հոգու անվան տակ մենք կարող ենք շեղվել նրանից, ինչը գրված է Աստծո Խոսքում, կամ որևէ բան ավելացնել դրան: Սուրբ Հոգին սովորեցնում է մեզ Խոսքի միջոցով՝ կատարյալ համաձայնությամբ նրա հետ, ինչ գրված է: Եթե մեր անձնական մեկնաբանությունը հակասում է Աստվածաշնչին, ապա դա Սուրբ Հոգու աշխատանքը չէ: Որպես ուսմունք պետք է հաստատվի միայն այն, ինչ գրված է Սուրբ գրքում: Աստվածաշնչյան հավատի ձևավորման գործում արժեք չունեն զգացմունքները, ներըմբռնումները և հույզերը:

4. **Աստվածաշունչը ամենալավն է ինքն իրեն մեկնում:** Աստվածաշունչը մեկնաբանում է ինքն իրեն: Երբ չենք հասկանում ինչ-որ խոսք կամ ավելի խորն ենք ցանկանում հասկանալ այն, ապա դրա բացատրությունը հարկավոր է փնտրել աստվածաշնչյան այլ խոսքերում: Օրինակ՝ Մարկոս 16.15-ը պատվիրում է մեզ քարոզել ավետարանը, իսկ Ա Կորնթացիս 15.1-4-ը տալիս է ավետարանի հստակ սահմանումը, որը պետք է քարոզենք: Կամ Հռոմեացիս 5.1-ը սովորեցնում է, որ հավատից ենք արդարանում, Հռոմեացիս 4.6-8-ը բացատրում է արդարանալու նշանակությունը, իսկ Եբրայեցիս 11.1-ը սահմանում է իսկական հավատը: Թեև ուսումնական Աստվածաշունչները և մեկնություններն օգնում են Սուրբ գրքի ուսումնասիրության գործում, լավ կլինի, որ սովորություն դարձնենք հենց Աստվածաշնչում փնտրել մեր հարցերի պատասխանները:

5. **Աստվածաշունչը ինքն իրեն չի հակասում:** Հետևաբար առանձին խոսքերի կամ աստվածաշնչյան խոսքերի մեր մեկնաբանությունները պետք է ներդաշնակ լինեն: Եթե մի խոսքի մեր մեկնաբանությունը հակասում է մյուս խոսքի մեկնաբանությանը, ապա մենք սխալվում ենք: Այս ճշմարտությունը ցույց է տալիս Սուրբ գրքի բոլոր գրքերի և ուսմունքների վերաբերյալ ընդհանուր գիտելիք ունենալու կարևորությունը: Օրինակ՝ երբ մեկնաբանում ենք «Աստված սեր է» խոսքը (Ա Հովհաննես 4.8), չպետք է մերժենք Աստծո արդարությունը կամ բարկությունը, քանի որ Աստվածաշունչը սովորեցնում է նաև, որ Աստված արդար է (Սաղմոս 119.137), և որ Նրա բարկությունն ուղղված է նրանց, ովքեր չարություն են գործում (Սաղմոս 34.16, Եփեսացիս 5.6):

6. **Աստվածաշնչյան այն խոսքերը, որոնց իմաստը հստակ չէ, պետք է մեկնաբանվեն այն խոսքերի լույսի ներքո, որոնց իմաստը հստակ է:** Օրինակ՝ Հովհաննես 14.28-ում Հիսուսն ասում է. «Իմ Հայրը մեծ է Ինձնից»: Որոշ աղանդներ այս խոսքն օգտագործում են՝

սովորեցնելու, որ Հիսուսը Աստված չէ՝ մարմին առած: Այդուհանդերձ, Քրիստոսի պնդումը կմեկնաբանվի Նրա աստվածությունը հռչակող (Հովհաննես 1.1, 14, 18, 20.28, Հռոմեացիս 9.5, Փիլիպպեցիս 2.6, Կողոսացիս 1.15, 2.9, Տիտոս 2.13, Եբրայեցիս 1.8) և Նրա մարդացումը բացատրող շատ այլ խոսքերի լույսի ներքո: Փիլիպպեցիս 2.6-7-րդ խոսքերում Պողոսը գրում է. «Որ Աստծո կերպարանքում լինելով՝ հափշտակություն չհամարեց Աստծուն հավասար լինել: Այլ Իր Անձն ունայնացրեց և ծառայի կերպարանք առնելով՝ մարդկանց նման լինելով և կերպարանքով մարդու պես գտնվելով...»: Երբ ներդաշնակեցնում ենք այս խոսքերը, հասկանում ենք, որ Քրիստոսը չէր հերքում Իր աստվածությունը, այլ պարզապես բացատրում էր Իր մարդացումը: Բառի բուն իմաստով Աստված լինելով՝ Նա կատարելապես հնազանդեցրեց Իրեն Հորը՝ ընտրելով մեռնելը մարդկային ցեղի համար, որին եկել էր ներկայացնելու: Մեկ այլ օրինակ կարող ենք տեսնել Եբրայեցիս 6.4-8-րդ խոսքերում: Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս պարբերությունը սովորեցնում է, որ անկեղծ հավատացյալը կարող է կորցնել իր փրկությունը և հավիտենապես կործանվել: Սակայն երբ այս խոսքն ուսումնասիրում ենք ամբողջ Եբրայեցիս գրքի համատեքստում և բազմաթիվ այլ խոսքերի լույսի ներքո, որոնք հստակ սովորեցնում են հավատացյալի հավիտենական ապահովության մասին, հասկանում ենք, որ նման մեկնաբանությունը ճիշտ չէ: Հերմենևտիկայի այս կարևոր սկզբունքի հետ է կապված նաև այն սկզբունքը, որ մենք երբեք չպետք է ինչ-որ ուսմունք ձևավորենք՝ հիմնվելով մեկ խոսքի ենթադրյալ իմաստի վրա, որի մեկնաբանությունը հստակ չէ:

7. **Խոսքը մեկնաբանելիս պետք է հիմք ընդունենք քերականությունը (*այսինքն՝* այն, ինչ գրված է):** Թեև Սուրբ գրքից վերցված խոսքը կարող է մի քանի կիրառություններ ունենալ տարբեր հավատացյալների և իրավիճակների համար, այն ունի միայն մեկ ճիշտ մեկնաբանություն, որը համապատասխանում է դրա քերականական իմաստին: Նախ և առաջ պետք է հասկանանք, թե ինչ էր ուզում ասել հեղինակը նրանց, ում գրում էր: Այնուհետև խոսքից կարող ենք քաղել դրանից բխող ճշմարտությունները կամ սկզբունքները: Ի վերջո կարող ենք հասկանալ դրա կիրառությունը մեր կյանքերում:

8. **Համատեքստը խիստ կարևոր է:** «Համատեքստ» բառը ծագում է լատիներեն ***contextus*** բառից (***con*** = միասին + ***texere*** = հյուսել) և վերաբերում է տվյալ խոսքին կապակցված բոլոր բաներին, որոնք կարող են ազդեցություն ունենալ դրա մեկնաբանության վրա: Սուրբ գիրքը նման է գլուխկոտրուկի. չենք կարող հասկանալ մի մասի տեղն ու նշանակությունը՝ առանց դրան առնչակից մյուս բոլոր մասերի տեղն ու նշանակությունը հաշվի առնելու: Շատ ուսմունքային սխալներ տեղի են ունեցել, երբ ուսանողները աստվածաշնչյան պարբերությունները մեկնաբանել են՝ առանց այս ազդեցիկ գործոնները հաշվի առնելու:

   ա. *ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ*. Ո՞վ է հեղինակը, և ովքե՞ր են առաջնային հասցեատերերը: Ո՞ր ժամանակաշրջանում է գրի առնվել գիրքը: Պատմության ի՞նչ ժամանակաշրջան է նկարագրվում կամ պատմվում: Ո՞րն է գրքի առաջնային նպատակը: Ինչո՞ւ է այն գրվել և ներառվել Սուրբ գրքում:

   բ. *ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ*. Ճշմարտությունը արտահայտվում է բառերով, որոնցով կազմվում են նախադասություններ: Նախադասությունները կազմում են պարբերություններ, որոնք, միանալով մեկ նպատակի շուրջ, վերաբերում են ինչ-որ պատմության կամ ճշմարտությունը հաղորդում են մեզ: Մենք չենք կարող մի խոսքն ուսումնասիրել՝

առանձնացնելով այն մյուս խոսքերից, որոնց հետ կապակցված՝ այն կազմում է պատմություն, միտք կամ գաղափար:

գ. *ԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ.* Սուրբ գրքում կան տարբեր գրական եղանակներ, որոնք ազդում են մեկ պարբերության կամ ամբողջ գրքի մեկնաբանության վրա: Հիմնական եղանակներն են՝ պատմություն, օրենք, պոեզիա, իմաստություն, մարգարեություն, առակներ և թղթեր (կամ նամակներ): Գրական եղանակներից յուրաքանչյուրն ունի մեկնաբանության իր բարդությունները: Երբ պատմական գիրք ենք սերտում, օրինակ՝ Դատավորացը, պետք է սովորենք ինչպես խոսքից քաղել համընդհանուր սկզբունքներ և կիրառել դրանք ժամանակակից կյանքում: Երբ Օրենքի գիրք ենք սերտում, օրինակ՝ Ղևտացոցը, պետք է մեկնաբանենք այն Քրիստոսի գալուստի, Գողգոթայում Նրա կատարած գործի և Նրա հիմնած Նոր Ուխտի լույսի ներքո: Երբ մարգարեություններ ենք սերտում, օրինակ՝ Եսայիան, Զաքարիան կամ Հայտնությունը, պետք է տարբերակենք ուղիղ և փոխաբերական իմաստները:

9. **Բառերը կարևոր են:** Իր ճշմարտությունը մեզ հայտնելու համար Աստված ընտրել է բառերը: Աստվածաշունչը սովորեցնում է, որ «ամեն Գիրք աստվածաշունչ է» (Բ Տիմոթեոս 3.16), և որ մենք պետք է ապրենք «ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից» (Մատթեոսի 4.4): Հետևաբար կարևոր է, որ հասկանանք խոսքի բանալի բառերը և սահմանենք դրանք ըստ իրենց սկզբնական իմաստների: Աստվածաշնչյան բառարաններում բառերի իմաստը փնտրելը կարող է օգնել մեզ, սակայն մեծագույն զգուշությամբ պետք է մոտենանք այս հարցին: Աստվածաշնչում բառերի իմաստի վրա մեծապես ազդում է համատեքստը. նույն բառը տարբեր խոսքերում կարող է կրել տարբեր իմաստներ:

10. **Հաճախ ամենալավ մեկնաբանությունը ամենաուղիղ մեկնաբանությունն է:** Աստվածաշունչը չի գրվել մեծ աստվածաբանների կամ առեղծվածաբանների համար. այն գրվել է հասարակ մարդու համար: Թեև դրանում կան այլաբանություններ, փոխաբերություններ և խորհրդապատկերներ, սովորաբար ամենալավ մեկնաբանությունը ամենապարզ և ամենաուղիղ մեկնաբանությունն է: Ողջամիտ սկզբունք է խոսքի ուղիղ մեկնաբանությանը հետևելը, եթե այն ծիծաղելի չէ և չի հակասում մյուս խոսքերի ուղիղ մեկնաբանություններին: Օրինակ՝ ծիծաղելի կլիներ Սաղմոս 98.8-ը մեկնաբանել ուղիղ իմաստով, քանի որ գետերը չեն կարող ձեռքով ծափ տալ, իսկ սարերը չեն ցնծում: Նույն կերպ, երբ Հիսուսն ասաց՝ «Ես եմ ճշմարիտ որթը, և Իմ Հայրը մշակն է» (Հովհաննես 15.1), Նա խորհրդապատկերներով էր խոսում:

11. **Հին Կտակարանը պետք է մեկնաբանել Նոր Կտակարանի լույսի ներքո:** Աստծո ճշմարտության հայտնությունն Աստվածաշնչում աճող բնույթ է կրում: Հին Կտակարանում Աստծո ժողովուրդը շատ ծիսակարգեր էր կատարում և զոհաբերություններ մատուցում՝ ըստ այն Օրենքի, որն Աստված տվել էր Մովսեսին: Այս ամենը նախատեսված էր մարդկանց նախապատրաստելու Քրիստոսի գալստյանը (Գաղատացիս 3.24): Դրանցում կան ավելի կարևոր իրողության ստվերներ (Կողոսացիս 2.17): Քրիստոսի գալուստով իրագործվեցին այդ ծիսակարգերը և զոհաբերությունները. դրանք կատարելու կարիք այլևս չկա: Նոր Կտակարանը պետք է լինի մեր անսխալական ուղեցույցը՝ Հին Կտարականը մեկնաբանելու և քրիստոնեական կյանքում կիրառելու համար:

12. **Մեր մեկնաբանությունը չպետք է անցնի տրված հայտնության սահմանները:** Մեր մեկնաբանությունը պետք է սահմանափակվի Սուրբ գրքում տրված տեղեկությամբ: Աստվածաշնչում կան առեղծվածներ, որոնք մենք չենք հասկանա մինչև Երկինք գնալը (Ա Կորնթացիս 13.12): Այն ամենը, ինչի բացատրությունը չի տրվում, պետք է հարգանքով ընկալվի՝ որպես առեղծված: Ավելին՝ մենք պետք է մեծ ուշադրություն դարձնենք այն բանին, որ ինքներս մեզնից և ուրիշներից չպահանջենք ավելին, քան Սուրբ գիրքն է պահանջում: Մեծ տարբերություն կա Աստվածաշնչում հստակ բացահայտված ճշմարտության և այն եզրակացությունների, հետևությունների կամ դիտարկումների միջև, որ մենք կարող ենք անել: Երկրորդ օրինաց 29.29-ում ասվում է. «Ծածուկ բաները մեր Տեր Աստծո համար են, բայց հայտնված բաները մեզ և մեր որդկանց համար հավիտյան»:

13. **Նպատակը մեկնությունն է:** «Մեկնություն» բառը ծագում է հունարեն ***exêgēsis*** բառից [***ex*** = դուրս + ***hēgéomai*** = ուղղորդել]: Խոսքը մեկնել նշանակում է ***դուրս հանել*** դրա իրական իմաստը, ոչ թե խոսքի ***մեջ կարդալ*** մեր ենթադրությունները կամ գաղափարները: Մեր մշակույթի, կրթության կամ կրոնական դաստիարակության արդյունքում մեզանում ձևավորվում են իրականության պատկերացումներ, որոնք զտիչների կամ գունավոր ոսպնյակների դեր են տանում՝ ազդելով նրա վրա, թե ինչպես ենք տեսնում իրողությունները, կամ նույնիսկ աղավաղելով դրանք: Որպես Աստվածաշունչը ուսումնասիրողներ՝ մենք պետք է գիտակցենք սա և ջանանք մի կողմ դնել մեր ենթադրությունները, որպեսզի լսենք այն, ինչն Աստվածաշունչն իրականում ասում է:

14. **Սուրբ գիրքը պետք է ուսումնասիրենք եկեղեցու համատեքստում.** Եկեղեցու պատմության ողջ ընթացքում հավատացյալները ակնածել են Աստծո խոսքից, սիրել և սերտել են այն: Այսօր կան շատ հովիվներ, ուսուցիչներ և աստվածաբաններ, որոնք հավատում են, որ Աստվածաշունչն Աստծո Խոսքն է, և հավատարմորեն սերտում են այն: Մեր անձնական եզրահանգումներն այսօր ապրող այլ հավատացյալների և պատմության տարբեր փուլերում ապրած հավատացյալների եզրահանգումների հետ համեմատելն իմաստուն մոտեցում է: Եթե Աստվածաշնչի որոշակի հատվածի շուրջ մեր անձնական և մեր սերնդի մեկնաբանությունը տարբերվում է պատմության ողջ ընթացքում ապրած Աստվածաշնչին հավատացող քրիստոնյաների միմյանց հետ համընկնող մեկնաբանությունից, ապա սա պետք է նախազգուշացում լինի մեզ համար, որ գուցե սխալվում ենք, և խոսքը վերասերտելու անհրաժեշտություն կա:

ՈՒՍՈՒՄՆԱ ՍԻՐԵԼ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

Հավելված. Գործնական օգնություն Սուրբ գրքի ընթերցանության և ուսումնասիրության համար

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Մեր համոզմունքն առ այն, որ Աստվածաշունչն ամենալավն է ինքն իրեն մեկնում, չպետք է սահմանափակի մեզ՝ օգտվելու այլ գործիքներից, որոնք նախատեսված են դյուրին դարձնելու Աստվածաշնչի ուսումնասիրությունը: Բառարաններից, բառացանկերից և նույնիսկ մեկնություններից օգտվելը կարող է մեծ օգուտ տալ Աստվածաշունչը ուսումնասիրողներին: Մեր ուսումնասիրությունը եզրափակելով՝ կքննարկենք մի քանիսը այն ամենակարևոր գործիքներից, որոնք Աստվածաշունչը ուսումնասիրողը կարող է ներառել իր գրադարանում:

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՎ ՎՍՏԱՀԵԼԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աստվածաշնչի մի քանի լավ թարգմանություններից օգտվելը կօգնի մեզ ավելի լավ հասկանալու տեքստը, քանի որ այդ կերպ տեքստը տարբեր տեսանկյուններից դիտարկելու հնարավորություն ենք ունենում: Ահա ամենաարժանահավատ և օգտակար թարգմանություններից մի քանիսը՝ Նոր ամերիկյան ստանդարտ Աստվածաշունչ (*NASB*), «King James» թարգմանություն (KJV), «New King James» թարգմանություն (*NKJV*), Անգլերեն ստանդարտ թարգմանություն (*ESV*) և Քրիստոնեական ստանդարտ Աստվածաշունչ (*CSB*):

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԲԱՌԱՐԱՆ

Աստվածաշնչի լավ բառարանը բացարձակ անհրաժեշտություն է Աստվածաշունչը ուսումնասիրողի համար: Ընթերցանության և ուսումնասիրության ընթացքում կարող են հարցեր ծագել կիրառված եզրույթների, աշխարհագրական վայրերի, մշակույթի, հնագիտության և այլնի վերաբերյալ: Աստվածաշնչի լավ բառարանը գերազանց ռեսուրս է, որից կարելի է օգտվել նման հարցեր առաջանալու դեպքում: Ահա մի քանի մեկհատորանի բառարաններ՝ «Աստվածաշնչի նոր բառարան» (*New Bible Dictionary)*, «Հոլմանի՝ Աստվածաշնչի պատկերազարդ բառարան» (*Holman Illustrated Bible Dictionary)*, «Հարփերի՝ Աստվածաշնչի բառարան» (*Harper's Bible Dictionary*) և «Անգերի՝ Աստվածաշնչի բառարան» (*Unger's Bible Dictionary):* «Աստվածաշնչի միջազգային ստանդարտ հանրագիտարանը» *(International Standard Bible Encyclopedia)* ողջամիտ և հասանելի բազմահատոր բառարան է:

ՀԱՄԱԲԱՐԲԱՌ

Համաբարբառում այբբենական կարգով ներկայացված են Աստվածաշնչի բոլոր բառերը և այն խոսքերը, որոնցում դրանք օգտագործված են: Այն նման է Աստվածաշունչների մեծ

մասի վերջնամասում զետեղված հակիրճ բառացանկին, սակայն ծավալով առավել ընդգրկուն է: Բառացանկն օգնում է բառերի ուսումնասիրության մեջ կամ ինչ-որ խոսք փնտրելիս, որի ճշգրիտ հղումը չունեք: Ամենատարածված բառացանկը «Աստվածաշնչի Սթրոնգի համաբարբառն» է: Հաշվի՛ առեք, որ կարևոր է ընտրել այնպիսի բառացանկ, որի հիմքը Աստվածաշնչի այն թարգմանությունն է, որից դուք եք օգտվում:

Թեմատիկ բառացանկ

Սուրբ գրքի թեմատիկ բառացանկում խոսքերն առանձնացված են՝ըստ թեմաների կամ դասակարգերի: Օրինակ՝ եթե ուսումնասիրողին հետաքրքրում են Աստվածաշնչի բոլոր այն խոսքերը, որոնք վերաբերում են Երրորդությանը, այդքան էլ նպատակահարմար չի լինի օգտվել համաբարբառից, քանի որ հենց «երրորդություն» բառն Աստվածաշնչում օգտագործված չէ: Նման դեպքում ուսումնասիրողը կարող է օգտվել թեմատիկ բառացանկից և փնտրել «Երրորդություն» թեման: Այդպես ուսումնասիրողը կգտնի այդ թեմային վերաբերող հայտնի խոսքերի ցանկը: Ամենանպատակահարմար թեմատիկ բառացանկերից երկուսն են «Նեյվի թեմատիկ Աստվածաշունչը» (*Nave's Topical Bible) և* «Աստվածաշնչի թեմատիկ վերլուծություն. կարևոր քրիստոնեական ուսմունքների ուսումնասիրությունը» *(Topical Analysis of the Bible: A Survey of Essential Christian Doctrines)*:

Բառերի ուսումնասիրություն

Երբեմն ուսումնասիրողից պահանջվում է ուսումնասիրել աստվածաշնչյան որոշակի եզրույթների նշանակությունը: Նման դեպքում խիստ կարևոր է, որ ուսումնասիրողն ունենա հասանելիություն ճշգրիտ գիտական ռեսուրսներին: Թեև բառերի ուսումնասիրությունն օգտակար ու նույնիսկ անհրաժեշտ է, այն կարող է սխալի հանգեցնել: Միշտ չէ, որ միևնույն բառը նույն իմաստն է կրում Աստվածաշնչի բոլոր հատվածներում. իմաստը որոշվում է համատեքստով: Եթե որոշակի բառ ուսումնասիրում ենք՝ հաշվի չառնելով համատեքստը, ապա հավանական է, որ կշեղվենք: Այս հարցում ամենանպատակահարմար մեկհատորանի աշխատանքային գործիքը «Մաունսի Հին և Նոր Կտակարանների բառերի ամբողջական բացատրական բառարանն» է (*Mounce's Complete Expository Dictionary of Old and New Testament Words*): Երկու հրաշալի բազմահատոր աշխատություններ են «Հին Կտակարանի աստվածաբանական բառագիրքը» (*Theological Wordbook of the Old Testament)* և «Նոր Կտակարանի աստվածաբանության նոր միջազգային բառարանը» (*New International Dictionary of New Testament Theology)*:

Ուսումնական Աստվածաշունչներ

Ուսումնական Աստվածաշունչները ծառայում են որպես արագ ու համառոտ վկայակոչման գործիք: Աստվածաշունչ կարդալիս երբեմն դժվար կամ անցանկալի է ընթերցանությունից կտրվելը՝ ծագող տարրական հարցերի շուրջ ուսումնասիրություն կատարելու համար (ինչպես, օրինակ՝ «Ո՞վ և ե՞րբ է գրել այս գիրքը», «Որտե՞ղ է գտնվում Նինվեն», «Որո՞նք են Հայտնություն 20-րդ գլխի շուրջ ամենատարածված տեսակետները»): Լավ ուսումնական Աստվածաշունչը օգնում է նման դեպքերում, քանի որ այն բավականաչափ տեղեկություն է տալիս ուսումնասիրողին ընթերցանությունը շարունակելու համար: Այդուհանդերձ, միշտ

պետք է հիշենք, որ ուսումնական Աստվածաշնչի միակ մասը, որը ներշնչված է Աստծուց, բուն Աստվածաշունչն է: Ահա՛ մի քանի լավ ուսումնական Աստվածաշունչներ՝ «Նոր ամերիկյան ստանդարտ Աստվածաշունչ» *(New American Standard Study Bible)*, «ESV ուսումնական Աստվածաշունչ», «Բարեփոխված ուսումնական Աստվածաշունչ» *(Reformation Study Bible)*, «ՄքԱրթուրի ուսումնական Աստվածաշունչ» *(MacArthur Study Bible) և* «Հոլմանի ուսումնական Աստվածաշունչ» *(Holman Study Bible*):

Մեկնություններ

Մինչ մեկնությունները քննարկելը պետք է հասկանանք երկու կարևոր ճշմարտություն: Առաջինը՝ միայն Սուրբ գիրքն է Աստծուց ներշնչված և անսխալական. նույնիսկ ամենալավ գիտնականները և գիտական աշխատանքները չեն կարող նույն պնդումն անել: Երկրորդը՝ թեև մեկնություններից օգտվելը շատ օգտակար է, չպետք է թույլ տանք, որ դրանք ստվեր գցեն Սուրբ գրքի մեր ուսումնասիրության վրա:

Այդ դեպքում որո՞նք են լավ մեկնությունների օգուտները: Առաջինը՝ դրանք թույլ են տալիս մեզ օգտվել գրքի կամ խոսքի վերաբերյալ հեղինակի կատարած տարիների ուսումնասիրությունից, մինչդեռ միջին վիճակագրական ուսումնասիրողը չէր կարողանա մի քանի ժամից ավելի տրամադրել այդ ուսումնասիրությանը: Երկրորդը՝ միևնույն գրքի բազմաթիվ մեկնությունները թույլ են տալիս համեմատել և հակադրել որոշակի գրքի կամ տեքստի տարբեր տեսանկյուններ և նույնիսկ մեկնաբանություններ: Երրորդը՝ մեկնությունները կարող են օգտագործվել որպես մեր իսկ եզրահանգումները ստուգելու և քննադատելու ողջամիտ միջոցներ:

Տարբեր հեղինակների հետ «երկխոսության» մեջ մտնելը կարող է երևան հանել որոշակի խոսքի կամ ուսմունքի վերաբերյալ մեր իսկ սխալ մտածելակերպը կամ օգնել մեզ կատարելագործելու մեր մտքերը: Երկու ամենանպատակահարմար մեկհատորանի մեկնություններից են «Աստվածաշնչի նոր մեկնությունը» (*New Bible Commentary* (InterVarsity Press)) և «Աստվածաշնչի Բեյքրի մեկնությունը» *(Baker Commentary on the Bible):* «Մեթյու Հենրիի մեկնությունը» *(Matthew Henry's Commentary)* եկեղեցու պատմության մեջ ամենասիրված ամենօրյա ընթերցանության մեկնություններից է: Առկա են դրա թե՛ մեկհատորանի համառոտ և թե՛ բազմահատոր հրատարակությունները: Երկու ամենաօգտակար բազմահատոր մեկնություններից են «Աստվածաշնչի բացատրական մեկնությունը» *(Expositor's Bible Commentary)* և «Հին և Նոր Կտակարանների Թինդեյլի մեկնությունները» *(Tyndale Commentaries: Old and New Testament):*

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամենաօգտակար հոգևոր սովորույթներից է Սուրբ գրքի ամենօրյա և համակարգված ընթերցանությունը: Աստվածաշնչի մեր իմացության մեջ աճելու ամենալավ եղանակն այն պարզապես նորից ու նորից ծայրից ծայր ընթերցելն է: Այս եզրափակիչ գլխում կքննարկենք մի քանի գործնական առաջարկ Աստվածաշունչն ամբողջ կյանքի ընթացքում ընթերցելու սովորույթը ձևավորելու համար:

1. **Ամեն օր հատուկ ժա՛մ հատկացրեք Աստվածաշնչի ընթերցանության համար:** Կյանքում նոր սովորություն ձեռք բերելը դժվար է. բացառություն չէ նաև Աստվածաշնչի ամենօրյա

ուսումնասիրությունը սովորություն դարձնելը: Մարմինը տկար է և խանգարում է հոգևոր նվիրմանը (Մատթեոս 26.41): Ավելին՝ սատանան իր կարողության սահմաններում ամեն բան կանի մեզ Սուրբ գրքից հետ պահելու համար, քանի որ գիտի, որ այն հավատացյալի հոգևոր ուժի աղբյուրն է: Հետևաբար մենք պետք է Աստծո շնորհքով և զորությամբ ամեն ջանք գործադրենք՝ ամեն օր ընթերցելու Սուրբ գիրքը: Նրանք, ովքեր այդպես կվարվեն, ահռելի առաջընթաց կունենան Աստծո բաներում: Բանալին հաստատակամությունն է:

2. **Ընտրե՛ք հանգիստ վայր Աստվածաշունչ ընթերցելու համար:** Խոսքը կարդում ենք Աստծուն հանդիպելու և Նրա Խոսքը լսելու համար: Սա օրվա ամենակարևոր մասն է: Ուստի պետք է այնպիսի ժամ և վայր ընտրել, որտեղ չեն լինի խանգարող և շեղող հանգամանքներ, այնպիսի վայր, որտեղ մեր միտքն ու սիրտը կմիանան Աստծուն և Նրա կամքը ճանաչելու նպատակի շուրջ:

3. **Մի՛ շտապեք:** Աստվածաշնչի արդյունավետ ուսումնասիրության խոչընդոտներից է շտապողականությունը: Մեզ, ինչպես Մարթային, հաճախ շատ բաներ են անհանգստացնում. այդուհանդերձ, պետք է սովորենք Մարիամի նման նստել Քրիստոսի ոտքերի մոտ և լսել Նրա Խոսքը: Ինչպես Տերն է ասել՝ «մեկ բան է պետք», և մենք պետք է ընտրենք «բարի բաժինը» (Ղուկաս 10.38-42):

4. **Ձեր ընթերցանության ժամանակը լցրե՛ք աղոթքով:** Սուրբ Հոգին է գրել Աստվածաշունչը, և Նա է Աստվածաշնչի լավագույն Ուսուցիչը: Անկախ մեր մտավոր և գրական կարողություններից՝ չենք կարող Սուրբ գիրքը հասկանալ առանց Նրա լուսավորչական աշխատանքի: Այդ իսկ պատճառով պետք է աղոթենք ընթերցանությունից առաջ, ընթացքում և հետո, որպեսզի Աստված մեզ Իր Խոսքը հասկանալու և դրան հնազանդվելու շնորհք և իմաստություն տա:

5. **Աստվածաշնչի ընթերցանությունը համակարգվա՛ծ դարձրեք:** Աստվածաշնչի մեր իմացության մեջ աճելու ամենալավ եղանակներից մեկը այն համակարգված ընթերցելն է՝ Ծննդոցից Հայտնություն, այնքան անգամ, որքան կհասցնենք մեր կյանքի ընթացքում: Պետք է հիշենք, որ Աստվածաշունչը կազմված է վաթսունվեց գրքերից, որոնք կարելի է ճիշտ հասկանալ միայն միմյանց հետ փոխկապակցվածության մեջ: Որքան ավելի լավ ենք հասկանում Աստվածաշունչն իր ամբողջության մեջ, այնքան ավելի լավ ենք հասկանում դրա առանձին մասերը: Աստվածաշնչի ծայրից ծայր համակարգված ընթերցանությունը պետք է լինի ամեն հավատացյալի սովորությունն ամբողջ կյանքի համար:

6. **Եղե՛ք հաստատակամ և հետևողական:** Լավագույն տարբերակը ամեն օր միևնույն քանակությամբ գլուխների ընթերցանության նպատակ սահմանելն է: Եթե ամեն օր հինգ գլուխ կարդանք, ապա մեկ տարին էլ չի բոլորի, և մենք արդեն ավարտած կլինենք ամբողջ Աստվածաշունչը: Օրեր կլինեն, երբ չի ստացվի այդ նպատակին հետևել: Ամենակարևորն այն է, որ չհուսահատվենք: Որքան էլ ձախողենք, չենք պարտվի, եթե հաստատակամ լինենք:

7. **Գրի՛ առեք ձեր մտքերը:** Մարկոս 4.24-ում Հիսուսն ասել է. «Տեսե՛ք՝ ինչ եք լսում, ինչ չափով, որ չափեք, նրանով էլ ձեզ կչափվի, և կավելանա ձեզ լսողներիդ»: Մենք պետք է սովորենք

գնահատել ամեն բան, ինչ Տերը ցույց է տալիս Իր Խոսքում, և մեր ուժերի սահմաններում ամեն բան անենք դրանցից պինդ բռնվելու համար: Մեր ստացած ճշմարտության հետ ոչ ճիշտ վարվելու հետևանքով ստիպված ենք լինում նույն դասը նորից ու նորից կրկնել:

8. **Ձեռքի տակ ունեցե՛ք ծանոթագրություններով գրականություն:** Կարդալու ընթացքում կարող են լինել հարցեր, որոնց չենք կարող պատասխանել, և խոսքեր, որոնք չենք հասկանում: Այս պատճառով լավ կլինի օգտվել ուսումնական Աստվածաշնչից կամ ունենալ մեկհատորանի մեկնություն՝ ծանոթագրություններով՝ արագ օգտվելու համար: Հատկապես Աստվածաշնչի առաջին ընթերցումների ժամանակ կարևոր է չխճճվել նրանում, ինչը չենք հասկանում: Հիշե՛ք, որ ամեն անգամ Աստվածաշունչն ընթերցելիս կգտնենք մեր շատ հարցերի պատասխաններ, միաժամանակ կծագեն այլ հարցեր:

9. **Մտապահե՛ք նաև, որ նպատակը կիրառությունն է, վերափոխումը և հնազանդությունը:** Գիտելիքն առանց կիրառության անօգուտ է: Երբ սերտում ենք Սուրբ գիրքը, պետք է ինքներս մեզ ուղղենք հետևյալ հարցերը. «Ինչպե՞ս կարող եմ սա կիրառել իմ կյանքում այստեղ և հիմա: Ինչպե՞ս պետք է ապրեմ իմ սովորածի լույսի ներքո: Արդյոք փոխվելու կարիք ունե՞մ: Ի՞նչ պետք է անեմ հնազանդվելու համար»;

10. **Կիսվե՛ք ուրիշների հետ նրանով, ինչ սովորել եք:** Մատթեոս 10.8-ում Հիսուսն ասում է. «Ձրի առել եք, ձրի տվեք»: Քրիստոնյան, ով չի կիսվում Տիրոջից ստացած իր օրհնություններով, վերածվում է լճացած ավազանի, իսկ նա, ով կիսվում է, նման է կենդանի ջրի հոսող գետի:

HeartCry

ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«HeartCry» միսիոներական համայնքի ամփոփ նկարագիրը

«HeartCry» միսիոներական համայնքը հիմնվել է 1988 թվականին Պերուում՝ միտված օգնելու բնիկ կամ տեղացի միսիոներներին, որպեսզի վերջիններս կարողանան հասնել սեփական ժողովրդին և հիմնել եկեղեցիներ նրանց համար: Այդ ժամանակից ի վեր Տերը լայնացրել է մեր սահմանները՝ ներառելու ոչ միայն Լատինական Ամերիկան, այլև Աֆրիկան, Ասիան, Եվրասիան, Եվրոպան, Մերձավոր Արևելքը և Հյուսիսային Ամերիկան:

Մեր ծառայության նպատակն է օգնել տեղի միսիոներների առաջխաղացմանը ամբողջ աշխարհում: Մեր ռազմավարությունը չորս հիմնական բաղկացուցիչ ունի՝ ֆինանսական աջակցություն, աստվածաբանական վերապատրաստում, Սուրբ գրքի և գրականության տարածում և ցանկացած գործիքի մատակարարում, որն անհրաժեշտ է Մեծ հանձնարարականի իրականացմանն օժանդակելու համար:

Ներկայում մենք աջակցում ենք ավելի քան քառասուն ազգությունների պատկանող մոտ 250 միսիոներական ընտանիքների (մի շարք շարունակական ծրագրերի հետ) ամբողջ աշխարհում:

Ծանոթացում «HeartCry»-ին

«HeartCry» միսիոներական համայնքը հիմնվել է և շարունակում է գործել հանուն չորս հիմնական նպատակի.

- Աստծո փառքը
- Մարդու օգուտը
- Աստվածաշնչյան եկեղեցիների հիմնումը
- Աստծո հավատարմության դրսևորումը

1. Աստծո փառքը

Մեր մեծագույն նպատակը Աստծո փառքն է:
Մեր մեծագույն խնդիրն այն է, որ արեգակի ելքից մինչև մուտքը Նրա անունը մեծ լինի ազգերի մեջ (Մաղաքիա 1.11), և որ մորթված Գառը ստանա Իր ամբողջ վարձքը Իր տառապանքների դիմաց (Հայտնություն 7.9-10): Մեր մեծագույն նպատակն ու շարժիչ ուժը մարդը կամ նրա կարիքները չեն, այլ հենց Աստված է, նվիրումը Նրա իսկ փառքին և Նրան ամեն ազգի, ցեղի, ժողովրդի մեջ, ամեն լեզվով մեծարված տեսնելու աստվածատուր ցանկությունն է: Մեր մեծագույն վստահությունը Մեծ հանձնարարականն իրականացնելու եկեղեցու կարողության վրա չէ, այլ Աստծո անսահման ու անխափան զորության՝ իրականացնելու ամենն, ինչ Նա պատվիրել է:

2. Մարդու օգուտը

Մեր երկրորդ մեծ նպատակը կորած ու մահացող մարդկության փրկությունն է: Այն քրիստոնյան, ով իսկապես խանդավառված է Աստծո փառքի համար և վստահ է Նրա ինքնիշխանության մեջ, չի կարող անտարբեր լինել այս աշխարհի միլիարդավոր մարդկանց հանդեպ, որոնք չունեն Հիսուս Քրիստոսի ավետարանի լուրը (Հռոմեացիս 15.21): Եթե մենք իսկապես նման ենք Քրիստոսին, ապա կորած մարդկանց բազմությունը մեր մեջ սրտացավություն (Մատթեոս 9.36), նույնիսկ մեծ տրտմություն ու շարունակական ցավ կառաջացնի (Հռոմեացիս 9.2): Մեր քրիստոնեական դավանանքի անկեղծությունը ստուգվում է նրանով, թե արդյոք պատրաստակամ ենք անելու մեր ուժերի սահմաններում առավելագույնը Քրիստոսին ազգերին հայտնելու համար և ամեն բանի համբերելու Աստծո ընտրյալների համար (Բ Տիմոթեոս 2.10):

3. Տեղական եկեղեցիների հիմնում

Մեր երրորդ նպատակը աստվածաշնչյան եկեղեցիների հիմնումն է: Մենք գիտակցում ենք, որ մարդկությունը շատ կարիքներ ու տառապանքներ ունի, և հավատում ենք, որ դրանք մեկ աղբյուր ունեն՝ սրտի խորքային այլասերվածությունը, թշնամությունն Աստծո դեմ և ճշմարտության մերժումը: Հետևաբար հավատացած ենք, որ ամենամեծ հնարավոր օգուտը, որ կարելի է տալ մարդկությանը, ավետարանի քարոզչության և Աստծո Խոսքի ամբողջական խորհուրդը հռչակող և դրա հրամանների, պատվիրանների և իմաստության համեմատ ծառայող տեղական եկեղեցիներ հիմնելու միջոցով է: Նման աշխատանքը հնարավոր չէ անել մարմնի միջոցով, այլ միայն Աստծո գերբնական մատակարարմամբ և Նրա հաստատած միջոցներով՝ Աստվածաշնչի քարոզչությամբ, բարեխոսական աղոթքներով, անձնվեր ծառայությամբ, անպայմանական սիրով և Քրիստոսի նմանությամբ:

4. Աստծո հավատարմության դրսևորումը

«HeartCry»-ի չորրորդ և վերջին նպատակը մարդկանց ցույց տալն է, որ Աստված իրապես ունակ ու պատրաստակամ է լրացնելու մեր բոլոր կարիքները Իր փառքի լիության չափով: Այս ծառայության կարիքները լրացվում են աղոթքի միջոցով: Մենք միջոցներ չենք հավաքում ինքնաառաջխաղացման, խթանման կամ Քրիստոսում եղբայրներին և քույրերին մանիպուլացնելու միջոցով: Եթե Նա մեզ հետ է, ապա կառաջնորդի Իր ժողովրդին՝ տալու, և մենք կբարգավաճենք: Եթե Նա մեզ հետ չէ, ապա մենք չպետք է բարգավաճենք և չենք բարգավաճի: Պետք է ընդունենք, որ մեր հավատը տարիների ընթացքում սուղ ու տկար է եղել, սակայն Աստված միշտ հավատարիմ է եղել: Ինչպես մի թանկագին եղբայր է ասում, մեր Աստված ուրախանում է՝ Իր զավակների նույնիսկ փոքրիկ վստահությունն արդարացնելով:

Մարտահրավերը

Որպես քրիստոնյաներ՝ մենք կանչված ենք, մեզ հանձնարարված և պատվիրված է դնել մեր կյանքերը՝ ամեն արարածի ավետարանը քարոզելու համար: Աստծուն սիրելուց հետո սա պետք է լինի մեր մեծագույն խանդավառությունը: Չկա ավելի ազնիվ գործ, որի համար

կարող ենք տալ մեր կյանքերը, քան Հիսուս Քրիստոսի ավետարանը քարոզելով մարդկանց փրկագնելն է Աստծո փառքի համար: Եթե քրիստոնյան իսկապես հնազանդ է Մեծ հանձնարարականին, նա կա՛մ կտա իր կյանքը հանքահորն իջնելու համար, կա՛մ կպահի պարանը, որ մյուսներն իջնեն (Ուիլիամ Քերի): Որ եղանակով էլ լինի, պահանջվում է միևնույն նվիրումը:

Մանրամասների համար.

Այցելե՛ք մեր կայք՝ **heartcrymissionary.com, տեղեկանալու ծ**առայությանն առնչվող մանրամասներին՝ մեր նպատակին, համոզմունքներին և մեթոդներին, ինչպես նաև ծանոթանալու միսիոներների հետ, որոնց ծառայելու արտոնություն ունենք:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻ ՀԱՄԱՐ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՑ ՎՐԱ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՀԻՄՆՎԵԼ

Փոլ Վոշերը հեղինակել է պարզ ուսմունքային համառոտագիր՝ առանց պարզունակության. այս աշխատությունը խորապես արմատացած է Սուրբ գրքում և ներկայացված է հեշտ հիշելի եղանակով:

— **Զուգել Միքելեն, Տեր Հիսուս Քրիստոսի աստվածաշնչյան եկեղեցու** հովիվ, ***«Ասպծուց և Ասպծո առջև»*** գրքի հեղինակ

Սուրբ գիրքը ամենամեծ գանձն է, որ մարդը կարող է ունենալ: Այն Աստծո, Նրա կամքի և Նրա գործերի, հատկապես Հիսուս Քրիստոսի միջոցով իրականացված փրկագնման գործի վերաբերյալ Աստծուց ներշնչված, վստահելի և անսխալական հայտնության միակ աղբյուրն է: Քրիստոնյան չի կարող չափազանցված կարծիք ունենալ Աստվածաշնչի մասին կամ գերագնահատել այն: Ահա այդ և բազմաթիվ այլ պատճառներով քրիստոնյան Խոսքը ուսումնասիրելը պետք է համարի իր առաջնային հանձնարարականը մինչև կյանքի վերջը:

«Ուսումնասիրել Սուրբ գիրքը» օգնում է ընթերցողին քննելու ուսմունքի կարևորությունը, Աստվածաշնչի՝ Աստծուց ներշնչված Խոսքի արժանահավատությունը, պատմությունը, նպատակը և զորությունը: Հեղինակի ցանկությունն է եղել ներկայացնել այնպիսի աշխատություն, որը կուղղորդի մարդուն դեպի Սուրբ գիրքը և թույլ կտա, որ հենց Աստծո Խոսքը խոսի նրա հետ: Հետևաբար դրա նպատակն է, որ ուսանողը հանդիպում ունենա Աստծո հետ Նրա Խոսքի միջոցով: Գիրքն այնպես է կազմված, որ բառացիորեն անհնար է առաջ անցնել դրա ընթերցանության մեջ՝ առանց Աստվածաշունչը աչքի առջև բաց պահելու:

Աստծո Խոսքը լույս է քրիստոնյայի համար. հնարավոր չէ գերագնահատել դրա արժեքը հավատացյալի համար: Այս աշխատանքային գրքում, որը հինգերորդն է **«Աստվածաշնչյան հիմունքներ քրիստոնեական հավատքի համար»** շարքում, Փոլ Վոշերը ուսանողին օգնում է օգտվելու Սուրբ գրքից՝ Աստծո Խոսքի մասին ավելին սովորելու համար և հայտնաբերելու, թե ինչու և ինչպես պետք է ուսումնասիրել Աստվածաշունչն ու հնազանդվել Խոսքին:

Փոլ Դեյվիդ Վոշերը տասը տարի ծառայել է Պերուում որպես միսիոներ: Այդ ընթացքում նա հիմնադրել է «HeartCry» միսիոներական համայնքը՝ միտված օժանդակելու պերուացիներին, որոնք եկեղեցիներ են հիմնում: Այժմ Փոլը ծառայում է որպես «HeartCry»-ի միսիայի առաջնորդ (heartcrymissionary.com): Աստված օրհնել է «HeartCry»-ն, որպեսզի դրա միջոցով օգնություն տրամադրվի ավելի քան քառասուն ազգությունների պատկանող միսիոներների ամբողջ աշխարհում: Նա և նրա կինը՝ Չարոն, ունեն չորս երեխա՝ Իանը, Էվանը, Ռոուանը և Բրոնուինը: